«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ Կրթահամալիր) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1. իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2. որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն Զեկույցը պարունակում է Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային դիտարկումները ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 18

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 18

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 18

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 25

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 30

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 39

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 51

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 57

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 65

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 72

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 78

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 83

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 89

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 96

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 97

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ... 97

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 99

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 101

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 103

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 104

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 104

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը[1] կարևորել է ՆԳՆ Կրթահամալիրի դերակատարությունը ոստիկանության և պետական այլ իրավապահ և գերատեսչական մարմիններում կադրային ապահովման տեսանկյունից:

Ներկայումս ՀՀ ոստիկանության ոստիկանության համակարգը գտնվում է բարեփոխումների փուլում, իսկ ՆԳՆ կրթահամալիրը, լինելով այս ոլորտի համար մասնագիտական կադրեր պատրաստող միակ ուսումնական հաստատությունը, իր բացառիկ դերակատարությունն ունի ոստիկանության համակարգի բարեփոխումների առանցքում: Փորձագիտական խմբի համար ակնհայտ է այդ բարեփոխումների ազդեցությունը կրթահամալիրի գործունեության ողջ համալիրի վրա:

Փորձագիտական խմբի համար տեսանելի են մասնագիտական կրթական ծրագրերում կրթահամալիրի ձեռքբերումները, կրթական ծրագրերի բարելավմանը ուղղված ծավալուն աշխատանքները: Կարևորվում է Կրթահամալիրի ակտիվ մասնակցությունը ոլորտային չափորոշիչների մշակման աշխատանքներում: Ուշադրության է արժանի նաև «պարեկ» որակավորման կրթական ծրագրի շուրջ իրականացված աշխատանքները, որոնց մշակման վերանայման և իրականացման գործընթացներում ներգրավված են ինչպես ներքին շահակիցները, այնպես էլ գործատուները և միջազգային գործընկերները: Ծրագիրն իրականացվում է միջազգային փորձառության հիման վրա, ինչը դրականորեն է անդրադարձել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վրա:

Կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված դասավանդման մեթոդաբանության միջազգային փորձը ուսումնասիրվելուց հետո, այն տեղայնացվել է Կրթահամալիրում: Ստեղծվել են սիմուլյացիոն լաբորատորիաներ և պրակտիկ ուսուցման միջավայրեր, որտեղ ուսանողները գործնական սցենարների հիման վրա ձեռք են բերում տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ նախապատրաստվելով իրական պայմաններում մասնագիտական գործունեությանը: Փորձագիտական խումբը նշում է, որ դասավանդման և գնահատման դրական փորձառությունը Կրթահամալիրը որոշակիորեն տարածել է նաև բարձրագույն կրթական ծրագրերում:

Փորձագիտական խումբը ընդգծում է նաև բակալավրի և մագիստրատուրայի աստիճաններում «Իրավագիտության» ՄԿԾ-ի նոր ընդունելության դադարեցումը, սակայն

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականները

ՄՈՒՀ-ը շարունակում է իրականացնել այս որակավորմամբ կրթությունը, այս համատեքստում կարևոր է տվյալ կրթական ծրագրի մշտադիտարկման և բարելավման գործիքակազմի շարունակական կիրառությունը անկախ ծրագրի կարգավիճակից, մյուս կողմից փորձագիտական խմբի հանդիպումները շահակիցների հետ ցույց տվեցին, որ անվճար «Իրավագիտության» ՄԿԾ-ն բազային հիմք է հանդիսանալու նոր ոստիկանության բակալավր որակավորմամբ կրթական ծրագրի մշակման համար։

Ինչ վերաբերում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը, ապա ներկայումս այն որոշակի դժվարություններ է ներկայացնում կրթահամալիրի համար, ինչը պայմանավորված է հաստատության գերատեսչական պատկանելությամբ և մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքով։ Այս առումով փորձագիտական խումբը նշում է, որ պարեկային ծառայողների որակավորման ծրագիրը կարող է հանդիսանալ շարժունության զարգացման համար դրական մեկնարկային հարթակ՝ հաշվի առնելով նրա միջազգային հիմքի վրա մշակումը և համադրելիությունը միջազգային այլ կրթական ծրագրերի հետ։ Ապագայում նոր կրթական ծրագրերի մշակման ընթացքում անհրաժեշտ է ապահովել շարժունության իրականացման համար համապատասխան «պատուհաններ», ինչը թույլ կտա արդյունավետորեն կազմակերպել փոխանակման ծրագրերը՝ ապահովելով ուսումնական միջավայրի ճկունությունը և միջազգային ինտեգրումը։

Կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներում անշուշտ կարևոր է ընդգծել պրոֆեսորադասախոսական կազմին, որոնց մեծ մասը ներգրավված են ինչպես մասնագիտական, այնպես էլ մանկավարժական գործունեության մեջ։ Այս հանգամանքը ապահովում է ուսանողների համար կրթական գործընթացի գործնական ուղղվածությունը՝ հնարավորություն տալով կիրառել տեսական գիտելիքները իրական աշխատանքային իրավիճակներում։ Այդուհանդերձ Կրթահամալիրում գործող հաստիքների և պաշտոնների համալրման պահանջները որոշակիորեն կոշտ են և պահանջում են ոստիկանական կոչման առկայություն հաստիքի համալրման համար, թեև Կրթահամալիրը դրսևորել է որոշակի ճկունություն ներգրավելով ժամավճարային կարգով աշխատակիցներ, այդուհանդերձ շարունակում են լինել թափուր հաստիքներ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը կարող է գնահատել և վերանայել հաստիքացուցակը և առանձին հաստիքների համալրման պահանջները՝ դարձնելով դրանք առավել ճկուն, որը կնպաստի գիտական կոչում և աստիճան ունեցող մասնագետներով համալրմանը, վերոնշյալը կնպաստի նաև ՊԴ կազմի կայունության ապահովմանը։

Կարևոր է ընդգծել նաև նախորդ հավատարմագրման գործընթացից հետո բարելավված կրթական միջավայրի առկայությունը։ Վերջին տարիներին Կրթահամալիրը մեծ ուշադրություն է դարձրել ռեսուրսային բազայի արդիականացմանը և համալրմանը, կառուցվել են սիմուլյացիոն սենյակներ, մասնագիտական կաբինետներ, բոլոր լսարանները տեխնիկապես հագեցվել են։ Վերջինս մեծ ազդեցություն է ունեցել նորարարական դասավանդման, գնահատման մոտեցումների ներդրման և տարածման վրա։

Փորձագիտական խումբը դրականորեն նաև նշում է, որ Կրթահամալիրը ձգտում է ունենալ արդյունավետ ֆինանսական քաղաքականություն, ուսանողների քանակի նվազմանը

զուգընթաց վերջինս կարողացել է գտնել ֆինանսական մուտքերի կայունություն՝ կարճաժամկետ ծրագրերի և վերապատրաստումների միջոցով:

Փորձագիտական խումբը հատուկ ընդգծում է «Պարեկ» որակավորման կրթական ծրագրի մշտադիտարկման կարևորությունը, որն իրականացվում է որակի ապահովման արտաքին կառույցի՝ Միջազգային քրեական հետախուզության վերապատրաստման աջակցության ծրագրի (ICITAP) կողմից: ICITAP-ի կողմից կիրառված մեթոդաբանությունը նշանակալի դեր է խաղացել ինչպես կրթական ծրագրի բովանդակության վերանայման և արդիականացման, այնպես էլ դասախոսական կազմի մասնագիտական և մեթոդական կարողությունների շարունակական բարելավման գործընթացում: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթահամալիրի համար այս հաջողված փորձառությունը հետագայում պետք է դառնա կարևոր ուղենիշ՝ կրթական ծրագրերի խորքային և համապարփակ գնահատման համար: Չափազանց կարևոր է, որպեսզի Կրթահամալիրի ներքին որակի ապահովման կառույցը տեղայնացնի ICITAP-ի կողմից կիրառված մեթոդաբանությունն ու դրական փորձառությունը իր համակարգում: Այս մոտեցումը ապագայում կնպաստի կրթական ծրագրերի համապարփակ վերլուծության իրականացմանը, խնդիրների արդյունավետ բացահայտմանը և հետագա շարունակական բարելավմանը:

Ելնելով վերոգրյալից՝ փորձագիտական խումբը նշում է, Կրթահամալիրը ապահովում է աշխատաշուկայի կարիքներին համահունչ մասնագետներ և որակավորումների արժանահավատ շնորհում:

Ինչ վերաբերում է Ռազմավարական պլանավորմանը, ապա ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրումից հետո որոշակիորեն բարելավել իր ռազմավարական պլանավորման գործիքակազմը, իրականացրել է բարելավման պլանով նախատեսված գործողությունները, որոշակիորեն գնահատել է արդյունքները և մշակել է 2022-2026 Ռազմավարական պլանը (այսուհետ ՌՊ), սահմանվել են ակնկալվող արդյունքների գնահատման ցուցիչներ: Փորձագիտական խումբը նշում է, որ ՌՊ գործիքակազմի հստակ և արդյունավետ կիրառությունը վճռորոշ դերակատարություն է ունենալու նոր ձևավորվող ուսումնական կառույցի համար, և բարեփոխումների արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ ՄՈՒՀ-ը իր ունեցած փորձառության հիման վրա մշակի անցումային ռազմավարական պլան, որտեղ հնարավորինս կհստակեցվեն ապագայի նպատակադրումները, խնդիրները, իրագործման ժամանակահատվածը և գնահատման արդյունավետության ցուցիչները: Միայն այս դեպքում հնարավոր կդառնա ապահովելու ՆԳՆ Կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման ակադեմիայի պլանավորված և արդյունավետ միավորման գործընթաց՝ նպաստելով բարեփոխումների հաջող ընթացքին և նորաստեղծ կառույցի կայացմանը: Բարեփոխումներին ընդառաջ Կրթահամալիրը իրականացրել է նաև իր գործառույթների արտաքին գնահատում և վերլուծություն, որի արդյունքները կարող են կարևոր ուղենիշներ դառնալ ապագա փոփոխությունների համատեքստում: Հարկավոր է ընդգծել, որ այս համակարգային փոփոխությունները հնարավորինս անցնցում պետք է լինեն կրթական ծրագիրը իրականացնողների և շահառուների՝ ՊԴ կազմի և ուսանողների համար, ինչը կերաշխավորի ՄԿԾ-ների որակի շարունակական բարելավումը և որակավորումների արժանահավատ շնորհումը:

Ներկա փուլում Կրթահամալիրի կառավարման համակարգում ավելի ուժեղ են ուղղահայաց կապերը, որը մինչ օրս նպաստել է որոշումների կայացմանը և իրագործմանը, հաշվետողականության համակարգի բարելավմանը, սակայն նշված մոդելը որոշակիորեն խոչընդոտել է որակի ապահովման կառույցի կայացմանը և անկախության ապահովմանը: Փորձագիտական խումբը արձանագրում է, որ բարեփոխումների առանցքում է նաև կառավարման համակարգի և կառուցվածքի վերանայումը, որի արդյունքում Կրթահամալիրին տրվելու է առավել մեծ ինքնավարություն և ազատության շրջանակ որոշումների կայացման գործընթացում: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը դրականորեն արձագանքում է, որ մի շարք ստորաբաժանումներ, ինչպիսիք են Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժինը, Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժինը ապագայում կգործեն որպես առանձին կառույցներ: Ներկա փուլում վերջիններիս համատեղ ղեկավարումը խոչընդոտում է մասնավորապես որակի ապահովման, հետազոտության և միջազգայնացման ուղղությունների լիարժեք զարգացմանը և նվազեցնում է աշխատանքների արդյունավետությունը: Անհրաժեշտ է նշել, որ կազմակերպական նոր կառուցվածքում ակնկալվող փոփոխությունները պետք է շեշտադրված լինեն բոլոր գործընթացներում որակի ապահովման գործուն մեխանիզմների ներդրմամբ, որը հնարավոր է միայն Որակի ապահովման ստորաբաժանման դիրքի և դերի վերաարժևորմամբ: Որակի ապահովման կառույցի կայացումը և գործուն մեխանիզմների ներդրումը հրատապ և անհրաժեշտ է նաև հետագայում կառավարման մոդելի արդյունավետության գնահատման համար:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ Կրթահամալիրի կառավարման համակարգը բարելավման փուլում է, և քայլեր են ձեռնարկվում կառավարման նոր մոդելի ադապտացման և դերերի հստակ բաշխման ուղղությամբ:

Նախորդ հավատարմագրումից հետո հստակեցվել են ՄՈՒՀ-ի հետազոտական հետաքրքրությունները: Կրթահամալիրում ձևավորված գիտական ներուժը կարևոր դերակատարություն ունի ոստիկանական համակարգի զարգացման և առկա խնդիրներին գիտական լուծումներ առաջարկելու գործում: Հատկանշական է, որ Կրթահամալիրում ձևավորված են բոլոր նախադրյալները համակարգային հետազոտությունների իրականացման համար, որը արժեքավոր կարող է լինել ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերների համար: Այս տեսանկյունից կարևոր է հետազոտական աշխատանքներում ուսանողների ակտիվ ներգրավման մեխանիզմների շարունակական բարելավումը, ինչպես նաև կարևոր է գիտական կադրերի համալրման և երիտասարդացման ուղղությամբ տարվող աշխատանքները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կրթահամալիրը ոլորտային միակ ուսումնական հաստատությունն է: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ Կրթահամալիրը պետք է վերաարժևորի իր հետազոտական գործունեության առաքելությունը՝ շեշտադրելով ոստիկանական համակարգի համար կարևոր և արդի խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող գիտահետազոտական բազա լինելու հեռանկարը: Գիտահետազոտական գործունեության շարունակական զարգացման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել հետազոտությունների շրջանակը՝ ներառելով նորարարական ուղղություններ և միջդիսցիպլինար մոտեցումներ: Կրթահամալիրի համար առաջնային նշանակություն ունի նաև այս ոլորտում միջազգային համագործակցության

զարգացումը, փորձագիտական խումբը խրախուսում է այս ուղղությամբ աշխատանքների շարունակական իրականացումը, ինչպես օրինակ CEPOL-ի (Իրավապահ մարմինների վերապատրաստման եվրոպական գործակալություն) շրջանակներում իրականացված հետազոտությունը (2024թ.)։ Համատեղ հետազոտական ծրագրերի նախաձեռնումը կնպաստի իրականացվող հետազոտությունների հանդեպ հետաքրքրության մեծացմանը թե դասավանդողների, թե ուսանողների շրջանակներում։ Միջազգային գիտական հանդեսներում հրապարակումների քանակի ավելացման համար արդյունավետ կարող են լինել նաև ներքին դրամաշնորհային ծրագրերի ներդրումը, որոնք կխրախուսեն տպագրությունները վարկանիշավորված պարբերականներում։

Նախորդ հավատարմագրումից հետո Կրթահամալիրը բարելավել է իր միջազգային համագործակցության և արտաքին կապերի շրջանակը։ Ներկայումս ՄՈՒՀ-ն ունի միջազգային համաձայնագրեր և անդամակցություն մի շարք միջազգային ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ, ինչը նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի մասնակցությունը միջազգային միջոցառումներում՝ դասընթացներում, գիտաժողովներում և այլ նախագծերում։ Սակայն, ակադեմիական շարժունության բաղադրիչը և միջազգային կրթական ծրագրերի փոխադարձ ճանաչումը դեռևս նկատելի չեն։ Այս փուլում կարևոր է նաև խթանել ուսանողների և դասախոսական կազմի անգլերեն լեզվի զարգացումը, ներկայումս Կրթահամալիրում կազմակերպվում են անգլերեն լեզվի դասընթացներ, որոնք նպատակ ունեն բարելավել լեզվական հմտությունները և նպաստել միջազգային համագործակցության ու ակադեմիական շարժունության ծրագրերի ավելի լայն ներգրավվածությանը։ Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նշում է, որ լեզվի իմացության դասընթաները նույնպես պետք է իրականացվեն վերջնարդյունքահենք մոտեցմամբ, հետևողականորեն գնահատելով դասընթացների արդյունավետությունը լեզվի տիրապետման մակարդակի բարձրացման տեսանկյունից։

Կրթահամալիրն ունի բազմամակարդակ հաշվետվողականության համակարգ, որը հիմված է ներքին և արտաքին շահակիցների հետ արդյունավետ համագործակցության վրա։ Այս հաշվետվողականության համակարգը ներառում է ներքևից վերև մոտեցում՝ ապահովելով, որ բոլոր շահակիցները ներգրավված լինեն որոշումների կայացման գործընթացում։ Բացի այդ, Կրթահամալիրն ունի հասարակության տարբեր շերտերին իրավաբանական աջակցություն տրամադրելու երկարատև փորձառություն, ինչը ևս հանդիսանում է հասարակական պատասխանատվության կարևոր մաս։ Փորձագիտական խումբը ընդգծում է, որ Կրթահամալիրի հասարակական պատասխանատվությունը չի սահմանափակվում իր կողմից մատուցված ծառայություններով, այն ունի պետություն հասարակություն կապի մշտական բարելավման դերակատարությունը, ինչի վառ ապացույցն է պարեկային ծառայողների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքները, որը փաստում է, որ Կրթահամալիրին հաջողվել է թողարկել «նոր ոստիկանի» կերպարին համապատասխան շրջանավարտներ, շահելով ինչպես պետության, այնպես էլ հասարակության վստահությունը, որը ընդգծվում է դիմորդների կայուն հոսքով և մասնագիտության նկատմամբ հետաքրքրությամբ։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Կրթահամալիրի առաքելությունը արժևորվում է ներքին և արտաքին շահակիցների կողմից,
2. Ֆինանսական արդյունավետ քաղաքականությունը բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմամբ,
3. Ուսումնական հաստատության սերտ կապը աշխատաշուկայի հետ և ՄԿԾ-ների բարելավման գործընթացները,
4. Գործատուների և արտաքին փորձագետների ակտիվ ներգրավվածությամբ «Ոստիկանական գործ» ՄԿԾ-ի մշակման, մշտադիտարկման և բարելավման փորձառությունը,
5. Դասախոսական կազմի բարձր մասնագիտական հմտություններով է օժտված լինելը, ներառյալ պրակտիկ գործունեությունը,
6. ՄՈՒՀ-ի կողմից ուսանողներին տրամադրվող հավելյալ ծառայությունները,
7. Կրթահամալիրի ռեսուրսային միջավայրի ապահովվածությունը՝ տեխնիկապես և մասնագիտական ուսումնառության միջոցներով հագեցած լսարանները, սիմուլյացիոն լաբորատորիաները,
8. Իրավաբանական կլինիկայի առկայությունը և քաղաքացիներին տրամադրվող իրավաբանական խորհրդատվությունները,
9. Վերջին տարիներին միջազգային նոր գործընկերների ձեռքբերումը, որի արդյունքում ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն իրականացնելու փորձի փոխանակում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Կառավարման համակարգում հորիզոնական կապերի թույլ կիրառությունը,
2. Ուսանողների շարժունության ծրագրերի փորձառության բացակայությունը,
3. ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հաստիքների համալրման ոչ ճկուն համակարգը,
4. Գնահատման գործիքակազմի հատվածային կիրառությունը (հիմնականում ՄԿԾ-ների շրջանակներում)
5. Հետազոտական աշխատանքների իրականացման ոչ լիարժեք խրախուսման մեխանիզմները,
6. Որակի ապահովման համակարգի ոչ անկախ լինելը,
7. Որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատման գործիքակազմի թույլ կիրառությունը:

Հիմնական խորհրդատվություններն են՝

Առաքելությունը և նպատակները

1. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ի միավորման անցումային ռազմավարություն, որը հստակ արտահայտի բարեփոխումների ընթացքը և ակնկալվող արդյունքները: Այս ռազմավարությունը պետք է ներառի նաև նոր մասնագիտական կրթական ծրագրերի մշակումն ու սահուն անցումը նոր կազմակերպաիրավական կառուցվածքին:
2. Վերանայել և վերաձևակերպել Կրթահամալիրի առաքելությունը՝ հաշվի առնելով երկու ուսումնական հաստատությունների ոլորտային առանձնահատկությունները և կապը աշխատաշուկայի հետ՝ ապահովելով նոր առաքելության համապատասխանությունը ապագա պահանջներին:
3. Հստակեցնել ռազմավարական պլանում սահմանված նպատակների և հիմնախնդիրների արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ), սահմանել հստակ ժամանակացույց և գնահատել ռազմավարական ծրագրի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները՝ ապահովելով միջոցների արդյունավետ բաշխում:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Շարունակել ջանքերը կառավարման մոդելի վերանայման ուղղությամբ՝ անցում կատարելով առավել մասնակցային և ազատական կառավարման, ինչը կխթանի նաև ներքին շահակիցների՝ ուսանողների և դասախոսների առավել ակտիվ ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում:
5. Իրականացնել մարդկային ռեսուրսների վերլուծություն՝ գնահատելու հաստիքների անհրաժեշտությունը և վերանայելու թափուր պաշտոնների համալրման մեխանիզմը, ներառելով քաղաքացիական և ակադեմիական անձանց, որը կապահովվի ՄՈՒՀ-ի ճկունությունն ու արդյունավետությունը:
6. Շարունակել այլընտրանքային եկամուտների հայթայթման և իրականացման քաղաքականությունը՝ ապահովելով արտաբյուջետային միջոցների ավելացումը և ֆինանսական կայունությունը:
7. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկումը բոլոր ՄԿԾ-ներում՝ ապահովելով ՄԿԾ-ների հավասարաչափ զարգացումը:
8. Բարելավել վարչարարական գործընթացների հստակությունը՝ ուսումնասիրելով փաստաթղթերի հակասությունները, վերանայելով կարգավորող փաստաթղթերը:
9. Իրականացնել ներքին գործոնների վերլուծություն՝ ապահովելով համակարգված տվյալների հավաքագրում և դրանց հիման վրա տվյալահենք որոշումների կայացում, ինչը կբարձրացնի կառավարման գործընթացների որակն ու արդյունավետությունը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Բարձրագույն կրթական ծրագրերում (այդ թվում վճարովի ծրագրում) ներդնել և իրականացնել կամընտրական դասընթացներ՝ ապահովելով շրջանավարտների կարիերայի առավել մեծ հնարավորություններ։
11. «Ոստիկանական գործ» նախնական մասնագիտական ՄԿԾ-ում առկա մշտադիտարկման և լավարկման դրական փորձառությունը տարածել նաև մյուս ՄԿԾ-ներում։
12. (Վերա)մշակել և ներդնել ՄԿԾ վերջնարդյունքների (դասընթացների վերջնարդյունքների) ձեռքբերմանը միտված գնահատման հստակ չափանիշներ՝ ուսանողներին տրվող հանձնարարականների, ստուգման ձևերի, պրակտիկաների, ավարտական և մագիստրոսական աշխատանքների շրջանակներում, ապահովելով ուսանողի գնահատման օբյեկտիվությունը և թափանցիկությունը։

Ուսանողները

13. Ապահովել Իրավագիտություն կրթական ծրագիրը սպասարկող որոշ ամբիոններում գիտական խմբակների մասով առկա դրական փորձի տարածելիությունը այլ ամբիոններում ևս։
14. Դիտարկել մեխանիզմ պետական պատվերով սովորող և ոստիկանական ծառայության մեջ գտնվող ուսանողների համար, ապահովելու տեսական դասերի լիարժեք ներկայությունը կամ հերթապահություն/ծառայություն իրականացնելով պայմանավորված դասը բաց թողնելու դեպքում ապահովել խորհրդատվություն ստանալու հնարավորություն։
15. Լավարկել ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետության գնահատման և բարելավման գործիքները։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Բարելավել դասախոսական կազմի գնահատման գործընթացը՝ ուսումնասիրելով և տեղայնացնելով «Ոստիկանական գործ» նախնական մասնագիտական կրթական ծրագրի մշտադիտարկման դրական փորձառությունը արտաքին գործընկերների կողմից։
17. Ներդնել ՊԴ վերապատրաստման ծրագրեր՝ հիմնվելով դասախոսների բացահայտված կարիքների վրա։

Հետազոտությունը և զարգացումը

18. Դիտարկել ներքին դրամաշնորհային ծրագրերի ներդրումը՝ խթանելու պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետազոտական ակտիվությունը և խրախուսելու միջազգային վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրությունների ավելացումը։
19. Դիտարկել հետազոտական առաջնահերթությունների շրջանակում առավել նորարարական թեմաների և մոտեցումների ընտրությունը՝ նպաստելով կրթահամալիրի հետազոտությունների արդիականությունն ու կիրառելիությունը, ինչպես նաև դրանց միջազգային ճանաչմանը։

20. Խթանել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ նպաստելով համատեղ հետազոտական նախագծերի իրականացմանը միջազգային գործընկերների հետ՝ մեծացնելով Կրթահամալիրի գիտական գործունեության կշիռն ու միջազգային ճանաչումը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

21. Մշակել և ներդրել ֆինանսական միջոցների ձեռքբերման դիվերսիֆիկացված մեխանիզմներ՝ ապահովելով եկամուտների բազմազանություն և նվազեցնելով ֆինանսական կախվածության ռիսկերը:
22. Իրականացնել գրադարանի թվայնացում և ստեղծել առցանց դասընթացների հարթակներ՝ ապահովելով ռեսուրսների լայն հասանելիություն:
23. Սահմանել բարձրագույն կրթական ծրագրերի և նրանց դասընթացների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազան՝ ապահովելով ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման առավել համակարգված գործընթաց:

Հասարակական պատասխանատվությունը

24. Ապահովել Կրթահամալիրի կայքէջում առկա հայալեզու տեղեկատվությանը համարժեք օտարալեզու հրապարակումներ՝ նպաստելով ՄՈՒՀ-ի տեսանելիությունը նաև միջազգային գործընկերների շրջանում:
25. Վերլուծել և գնահատել հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետությունը:
26. Մշակել հստակ ծրագիր դպրոցականների հետ տարբեր թեմաներով առավել հաճախակի տեղեկատվական, իրազեկող հանդիպումներ կազմակերպելու ուղղությամբ՝ նպաստելով իրավապահ հասարակության ձևավորմանը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

27. Տարանջատել տեղեկատվական տեխնոլոգիաների գործունեությունը արտաքին կապերի ստորաբաժանումից՝ ապահովելով աշխատակիցների հստակ գործառույթները և աշխատանքային պարտականությունների շրջանակը:
28. Ուսումնասիրել և գտնել ուսանողների շարժունության ապահովման ուղղությամբ լավագույն փորձ ունեցող ոլորտային ուսումնական հաստատություններ՝ ապահովելով եվրոպական և այլ երկրների գերատեսչական ուսումնական հաստատությունների լավագույն փորձերը՝ ոլորտային ՄՈՒՀ-երում շարժունության ծրագրերում ներգրավման համար:
29. Օտար լեզվի բարելավման նպատակով տարբեր առարկաների շրջանակներում ուսանողներին հանձնարարել օտար լեզվով առաջադրանքներ, ինչպես նաև շարունակել պարբերաբար իրականացնել դասախոսների և ուսանողների օտար լեզվի բարելավմանն ուղղված դասընթացներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

30. Դիտարկել որակի ապահովման կառույցի ենթակայության վերանայումը և որակի ապահովման բաժնի պատկանելիությունը կառավարման խորհրդին, կամ կրթահամալիրի ղեկավարին՝ ապահովելով որակի ապահովման գործընթացների օբյեկտիվությունը և անկախությունը:
31. Վերանայել ՈԱ ձեռնարկը, քաղաքականությունը և հայեցակարգը՝ հստակեցնելով որակի ապահովման մեխանիզմների ներդրումը Կրթահամալիրի գործունեության բոլոր տիրույթներում:
32. Մշակել և ներդնել ՈԱ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն ապահովելու Կրթահամալիրում իրականացվող բոլոր գործընթացների արդյունավետության գնահատումը և շարունակական բարելավումը:
33. Վերանայել և առավել թիրախային դարձնել հարցարանները՝ ապահովելով առավել խորքային և օբյեկտիվ վերլուծություններ:
34. Ապահովել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ և թարմացված տվյալների հրապարակումը Կրթահամալիրի կայքէջում՝ ապահովելով ՈԱ գործընթացների թափանցիկությունը:

Ասյա Սիմոյան
Փորձագիտական խմբի ղեկավար

28-ը հոկտեմբերի 2024թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը գերատեսչական ուսումնական հաստատություն է, որի հիմական նպատակը Ներքին գործերի նախարարության համար մասնագետների պատրաստումն է հետևյալ մակարդակներում՝ նախնական արհեստագործական և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական: Կրթահամալիրը, լինելով ոստիկանական կադրեր պատրաստող հիմական հաստատություն, Հայաստանի Հանրապետության համար ունի կարևոր ռազմավարական նշանակություն:

Ինչպես եվրոպական մի շարք այլ նմանատիպ ուսումնական հաստատություններ, այնպես էլ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը գերատեսչական հաստատություն է, որի հիմական խնդիրն է կրթել և պատրաստել մասնագետներ շատ կոնկրետ աշխատաշուկայի համար (զինվորական, ոստիկանություն և այլն): Գերատեսչական լինելու հանգամանքը հաստատությանը տալիս է կառավարման յուրահատուկ կազմակերպական շրջանակ բոլոր տիրույթներում՝ կառավարում, կրթական ծրագրեր, միջազգայնացում, ուսանողներ և այլն: Այսպիսի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատությունները, որոնք ունեն տեսլական և հավակնություններ Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու, պետք է կարողանան սինխրոնացնել իրենց գործունեությունը թե նախարարության, և թե կրթական համակարգի պահանջներին: Այս առանձնահատկությունը որոշիչ դեր է խաղում ուսումնական հաստատության ինքնավարության հարցում, մասնավորապես՝ ռեսուրսների և ենթակառուցվածքների ձեռքբերման և կառավարման, կառավարչական գործընթացների իրականացման և ուսանողական խմբերի հետ կապված:

Կրթահամալիրն իր առաքելությանը համապատասխան իր Ռազմավարական ծրագրով նախատեսել է հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները.

- ապահովել կրթության ոլորտում նորագույն մոտեցումների ներդրումն ու կիրառումը,
- գիտահետազոտական գործունեության կատարելագործումը և ընթացիկ զարգացումը,
- ապահովել անհրաժեշտ արտաքին հարաբերությունները և արդյունավետ միջազգային համագործակցությունը,
- շարունակաբար կատարելագործել կառավարման համակարգը,
- արդիականացնել ենթակառուցվածքները և կառուցվածքային ստորաբաժանումները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո Կրթահամալիրը զգալի առաջընթաց է գրանցել նամանավանդ ռեսուրսների արդիականացման, դասավանդման մեթոդների և մոտեցումների վերանայման ուղղությամբ: Ոստիկանության ոլորտի գիտելիքների, հմտությունների ձեռքբերման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ սիմուլյացիոն լաբորատորիաներում իրականացվում են ոստիկանական գործողություններ, իրականացվում են դեպքերի ուսումնասիրություններ, պրակտիկ ոլորտից վերցված սցենարների հիման վրա ուսուցում և այլն:

Փորձագիտական այցից և ուսանողների հետ մասնագիտական հանդիպումից պարզ դարձավ, որ իրական սցենարների հիման վրա ուսուցումը նպաստել է վերջիններիս մոտ մասնագիտության նկատմամբ պրոֆեսիոնալ վերաբերմունքի և վարքագծի ձևավորմանը: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ ուսանողները կրթված են օրենքի, ընթացակարգերի իմացության առումով, իսկ առավել կարևոր է այն, որ նրանք շատ մտահոգված են քաղաքացիական բնակչության իրավունքների և անվտանգության պաշտպանության հարցերով:

Ինչ վերաբերում է գիտական հետազոտություններին, թեև այս ոլորտը նշվում է որպես առաջնահերթություն Կրթահամալիրի կառավարման մակարդակում, ֆակուլտետներում և բաժիններում, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում, փորձագիտական այցի և ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալները չեն վկայում շատ լուրջ և արդյունավետ ձեռքբերումների մասին: Առկա չեն ազգային կամ միջազգային մակարդակով որևէ հետազոտական ծրագիր, որին Կրթահամալիրը մասնակցել է կամ պրոֆեսորադասախոսական կազմի առանձին անդամներ նշանակալի ներդրում են ունեցել: Ինչպես նաև բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրապարակված գիտական հոդվածները չեն ընդգծվում SCOPUS-ում կամ այլ միջազգային գիտական տվյալների բազաներում: Նաև առկա չեն տարբեր մեխանիզմներ ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու գործընթացում աջակցելու համար: Կրթահամալիրում գիտահետազոտական աշխատանքներին ուսանողների մասնակցության շրջանակը գործնականում հիմնականում սահմանափակվում է մագիստրոսական թեզի պատրաստմամբ (ըստ ձևաչափի, բայց հետազոտությունների իրականացման սահմանափակ մեթոդաբանությամբ): Կրթահամալիրի ընդհանուր գիտահետազոտական գործունեությունը թույլ է, ինչը նաև կապված է ուսանողների պասիվ ներգրավվածության հետ: ԵԲԿՏ հաստատությունների հիմնական չափանիշներին համապատասխանելու համար անհրաժեշտ է կապել գիտահետազոտական գործունեությունը կրթական ծրագրերի հետ, ստեղծել ուղիներ ուսանողական գիտելիքների տարածման համար և ավելացնել համագործակցությունը Հայաստանի և արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:

Միջազգայնացման գործընթացը Կրթահամալիրում անհրաժեշտ է վերլուծել երկու մակարդակի պրիզմայով՝ ինստիտուցիոնալ համագործակցություն և ակադեմիական շարժունակություն: ՀՀ ՆԳՆ կրթահամալիրն ունի մի քանի միջազգային համաձայնագրեր եվրոպական այլ երկրների և տարածաշրջանի տարբեր նմանատիպ հաստատությունների, ինչպես նաև Չինաստանի հետ: Այս պայմանավորվածությունների հիման վրա պրոֆեսորադասախոսական կազմ ու ուսանողները մասնակցում են տարբեր միջոցառումների, համատեղ դասընթացների, գիտաժողովների և այլն: Մյուս կողմից, ակադեմիական շարժունակության բաղադրիչը, որը ներառում է նաև ուսուցման փոխադարձ ճանաչում, տեսանելի չէ: Կրթահամալիրի առանձնահատկությունները ակնհայտորեն դրսևորվում են ակադեմիական շարժունության շրջանակում, քանի որ այն ներքին գործերի նախարարության հաստատման և ակնհայտորեն ֆինանսական միջոցների/աջակցության կարիքն ունի: Մյուս կողմից, ՄՈՒՀ-ի ներկայացրած այն փաստարկը, որ շարժունության գործընթացն այդքան էլ օգտակար չէ, քանի որ իրավական և ոստիկանական համակարգերը

տարբեր են երկրից երկիր, լիովին հիմնավորված չէ: Նմանատիպ ծրագրերին մասնակցում են նաև Եվրոպայում գործող այլ նմանատիպ գերատեսչական ուսումնական հաստատություններ, որոնց թվում է նաև «Էրազմուս +-ը»՝ ուշագրավ արդյունքներով: Անհրաժեշտ է նշել, որ ԵԲԿՏ տեսանկյունից ակադեմիական շարժունության և միջազգայնացման բաղադրիչները շատ կարևոր են:

Միջազգայնացման ուղղությամբ ռազմավարական նպատակին հասնելու համար Կրթահամալիրը կարիք կունենա առավել մեծ առաջնահերթություն տալ անձնակազմի և ուսանողների լեզվական կարողությունների ամրապնդմանը: Կրթահամալիրը պետք է գնահատի և հասկանա, թե որքանով անգլերեն լեզվի զարգացմանն ուղղված դասընթացները պետք է լինեն ընտրովի կամ պարտադիր, քանի որ ներկայումս առաջարկվող դասընթացներից օգտվող անձնակազմի և ուսանողների թիվը բավարար չէ այլ հաստատությունների հետ միջազգային հարաբերությունների լիարժեք ֆունկցիոնալ փաթեթ ստեղծելու համար:
Կրթահամալիրի ղեկավարությունը ճիշտ է համակցում Հայաստանի ՆԳՆ նորմերն ու ակադեմիական կանոնակարգերն: Հաստատությունը կազմակերպված է ըստ ֆակուլտետների, ամբիոնների, վարչությունների, կենտրոնների և այլն: ՄՈՒՀ-ն իր կառուցվածքում ունի կառավարման և գործընկերային խորհրդատվական մարմիններ, որոնք հատուկ են բուհերին՝ գիտական խորհուրդ, ուսանողական խորհուրդ և Խորհուրդ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռեկտորից մինչև ուսանող, ովքեր ներգրավված են որոշումների կայացման կամ խորհրդատվական գործընթացում, ունեն կառուցողական վերաբերմունք, ցուցաբերում են պրոֆեսիոնալիզմ և վճռականություն:

Չնայած նրան, որ Կրթահամալիրի ղեկավար կազմը ներկայումս կարողանում է համակցել ՆԳՆ նորմերը և ակադեմիական կողմը, այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ ակադեմիական կողմը որոշակիորեն տուժում է ներքին գործերի նախարարության պարտադրված խիստ ոստիկանական կանոնակարգերից, վերջինս բացասաբար է ազդում ժողովրդավարական կառավարման մեխանիզմների զարգացման վրա: Անհրաժեշտ է կրթահամալիրի կառավարման գործընթացում մեծացնել շահակիցների մասնակցությունը:
Կրթահամալիրը չունի սեփական ֆինանսական միջոցներ: Այն տրամադրվում է Ներքին գործերի նախարարության կողմից՝ համաձայն պետական բյուջեի և առաջնահերթությունների, որոնք համալրվում են վճարովի ծրագրերի համար ստացվող շատ փոքր ֆինանսական միջոցներով: Այս շատ կարևոր գործոնը խոչընդոտում է կրթահամալիրի ինքնավարությանը: Ռեսուրսները՝ մասնավորապես ֆինանսական ռեսուրսները, վճռորոշ դեր են խաղում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի առաքելության և նպատակների իրականացման գործում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրը ռեսուրսներ է օգտագործել շենքերի վերանորոգման, դասասենյակների արդիականացման, սիմուլյացիոն համակարգեր գնելու և այլնի համար: Կրթահամալիրի կարևոր առավելությունն տեղեկատվական տեխնոլոգիաների, քրեագիտության, դատաբժշկական, դիպուկահարության, հանցագործության վայրի մոդելավորման սենյակների, տարբեր լաբորատորիաների և այլ մասնագիտացված սենյակների առկայությունն է: Այնուամենայնիվ, դեռևս պահանջվում է ավելի շատ ներդրումներ կատարել կացարանների և գրադարանների արդիականացման ուղղությամբ: ԵԲԿՏ-ի

հավակնությունների համար գրադարանը պետք է վերանորոգվի, արդիականացվի և ընդունվի էլեկտրոնային գրքերի և գիտական տվյալների բազայի էլեկտրոնային գրադարանային համակարգ: Հետագա ներդրումներ են անհրաժեշտ նաև ենթակառուցվածքների շարունակական բարելավման ուղղությամբ:

Խորհրդատվություններ

1. Դիտարկել ՆԳՆ-ի կողմից Կրթահամալիրի շրջանավարտներին ներկայացվող վերջնարդյունքների պաշտոնական փաթեթ (առաջին աշխատանքին ներկայացվող պահանջները՝ գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի առումով) պատրաստման անհրաժեշտությունը և՛ բարձրագույն, և՛ նախնական, միջին մասնագիտական մակարդակներում: Այս մոտեցումը կնպաստի շրջանավարտի պատրաստմանը ոլորտի պահանջների համապատասխան:
2. Ներգրավել ակադեմիական փոխանակման միջազգային ծրագրեր դասախոսական և ուսանողական կազմերի ներքին և արտաքին շարժունության ապահովման նպատակով:
3. Ավելացնել գիտական կոչում և աստիճան ունեցող հիմնական դասախոսների թիվը ֆակուլտետների մակարդակում, ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական անձանցով: Զինվորականների համար խորհուրդ է տրվում առանձնացնել ոստիկանական կոչումը և ակադեմիական կոչումը, միմյանցից կախվածություն չառաջացնելու նպատակով:
4. Դիտարկել սեփական գիտական ամսագիր ունենալու հնարավորությունը միջազգային տվյալների բազաներում (օրինակ՝ Scopus, Web of Science), վերջինս կնպաստի Կրթահամալիրի կողմից իրականացրած գիտության տարածմանը և ազդեցության մեծացմանը:
5. Քայլեր ձեռնարկել ինչպես գիտական անձնակազմի, այնպես էլ ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունների քանակի մեծացման և հետազոտությունների անցկացման մեթոդաբանության բարելավման ուղղությամբ:
6. Առավել մեծ ջանքեր ներդնել դասախոսական և ուսանողական անձնակազմի անգլերեն լեզվի զարգացման ուղղությամբ:
7. Դիտարկել ակադեմիական գործունեության թվայնացման հնարավորությունը՝ մշակվելով և ներդրվելով էլեկտրոնային ուսուցման հարթակ, միջգերատեսչական համագործակցության ակադեմիական շրջանակ:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Ասյա Սիմոնյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Իոն Ռոչանու՝** Ռումինիայի ազգային պաշտպանության համալսարանի պրոֆեսոր, դոկտորական ուսումնասիրությունների խորհրդի տնօրեն, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
3. **Աիդա Թադևոսյան՝** իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Գեղամ Կարոյան՝** տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի ուսումնական գծով տնօրենի տեղակալ, նույն համալսարանի «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
5. **Ավետիք Խոստեղյան՝** Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և ՏՏ ամբիոնի 2-րդ կուրսի ուսանող, ուսանող փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:
Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը:**

Բանավոր թարգմանությունն իրականացրել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոս **Վարդանուշ Բաղդասարյանը:**
Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգող ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Կրթահամալիրը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և Կրթահամալիրի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Առկա են եղել որոշակի տեխնիկական և բովանդակային թերություններ, ինչի պատճառով ինքնավերլուծությունը վերադարձվել է հաստատությանը: Սահմանված ժամկետներում Կրթահամալիրը ներկայացրել է ինքնավերլուծության վերանայված տարբերակը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին: Ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, ՄՈՒՀ-ի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է Կրթահամալիրի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Կրթահամալիրի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ ու ռեսուրսների դիտարկում: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2024թ. հունիսի 17-ին տեղի է ունեցել հանդիպում Կրթահամալիրի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ ինստիտուտի ղեկավար կազմի հետ քննարկվել և

համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2], քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. հունիսի 25-28-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Իոն Ռոչանուի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը: Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է Կրթահամալիրի պետի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ֆակուտետների, ամբիոնների պետերը, շրջանավարտներն ընտրվել են Կրթահամալիրի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկում[3]: Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը գնահատումն իրականացրել է ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության[4], իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույցը
[3] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ
[4] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին 26.09.2024թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ Կրթահամալիրը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 28.10.2024թ.

_____

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. 1966 թ. հունիսի 16-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության, ապա կառավարության հրամանագրով հիմվել է Երևանի միլիցիայի միջին մասնագիտական դպրոցը, որտեղ ուսումնառությունը եղել է երկու տարի, և հաստատությունը շրջանավարտներին շնորհել է կրտսեր լեյտենանտի կոչում: Մինչև 1990-1991 թթ. Երևանի միլիցիայի միջին մասնագիտական դպրոցը գործել է ԽՍՀՄ ՆԳՆ բարձրագույն կուրսերի, իսկ 1991-1995 թթ.՝ որպես ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոցի կարգավիճակով:
Հայաստանի Հանրապետության վարչապետի 1995 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցի մասին» N 197 որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը: Այնուհետև՝ երկու տարի անց, ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցը: ՀՀ կառավարության 1999 թվականի սեպտեմբերի 14-ի «ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի թիվ 311 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 566 որոշմամբ դպրոցը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոց:
ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության: Իսկ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի թիվ 464-Ն որոշմամբ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի»:

Կրթություն. Կրթահամալիրը ներկայումս իրականացնում է նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը իրականացնում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիան, որի կազմում գործում է իրավագիտության վճարովի, անվճար և հեռակա ուսուցման կրթական ծրագիրը:
Միջին մասնագիտական կրթությունը իրականացնում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի քոլեջը, որի կազմում գործում է ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը և 4 ամբիոններ, իսկ նախնական մասնագիտական կրթությունը իրականացնում է ուսումնական

կենտրոնը, որի կազմում են գտնվում նախնական մասնագիտական պատրաստականության բաժինը և 2 կրթաճյուղ:
Ինչ վերաբերում է դասախոսական կազմին, ապա ուսումնական կենտրոնի դասախոսական կազմում ընդգրկված է 61 դասախոս, քոլեջում՝ 44, բակալավրիատում՝ 83, իսկ մագիստրատուրայում՝ 22, ընդ որում՝ դասախոսական կազմում ընդգրկված դասախոսների գերակշիռ մասը համատեղում է պրակտիկ գործունեությունը մանկավարժական և գիտամանկավարժական գործունեության հետ:

Հետազոտություն. Հետազոտական աշխատանքների իրականացումը Կրթահամալիրում դիտարկվում է ռազմավարական առաջնահերթություն: Հետազոտական աշխատանքների իրականացման նպատակով սահմանվել են հետազոտական ուղղություններ, դրանք են՝

- ՀՀ ոստիկանության միջազգային համագործակցության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը
- ՀՀ ոստիկանության կողմից հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման ուղղված գործունեության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության թույլատվության և լիցենզավորման գործունեության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության աշխատանքների պլանավորման, որոշումների կայացման վերաբերյալ ոլորտը,
- ՀՀ ոստիկանության պատմության վերաբերյալ ոլորտը:

Վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կազմակերպվել է 5 միջազգային գիտագործնական և մեկ ուսանողական համաժողովներ: Անցկացված գիտաժողովների լավագույն նյութերը հրատարակվում են կրթահամալիրի գիտամեթոդական պարբերականում, գիտաժողովներ նյութերի ժողովածուներում, 2022թ-ից հրատարակվող «Իրավունքի արդի հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածուում, ինչպես նաև 2023թ. սկսած հրատարակվող գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածուում:
Վերջին 3 տարիներին ՀՀ ամսագրերում հրապարակել է 116 հետազոտական աշխատանք, ՌԴ-ում՝ 43, Գերմանիայում՝ 3. Չինաստանում՝ 1:

Միջազգայնացում. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի արտաքին կապերի և միջազգայնացման արդյունքում ցանկանում է բարելավել կրթական ծառայությունների և հետազոտությունների որակը, Կրթահամալիրի մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում, ստեղծել միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել շրջանավարտների պահանջվածությունը և մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում:
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը համագործակցության վերաբերյալ համապատասխան համաձայնագրեր է կնքել թվով 24 կրթական հաստատությունների հետ և հանդիսանում է 4 միջազգային ոստիկանական կազմակերպությունների անդամ:

Որակի ապահովում. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում որակի ապահովման համակարգի հիմնումը սկսվել է 2016թ. որպես որակի ապահովման խումբ, իսկ 2017թ. հունիսին ձևավորվել է կրթության որակի ապահովման բաժանմունքը, որից հետո 2022թ. ապրիլից վերանվանվել է Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի: Բաժնի նպատակները և խնդիրները արտացոլված են որակի ներքին ապահովման հիմնական դրույթներում, սկզբունքներում, քաղաքականությունում և ընթացակարգերում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՆԳՆ կրթահամալիրը ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է իրավաբանական բարձրագույն (բակալավր և մագիստրոս), հետբուհական մասնագիտական կրթություն, ինչպես նաև ոստիկանական կրթությամբ նախնական, միջին մասնագիտական կրթություն և լրացուցիչ կրթական ծրագրեր: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կրթահամալիրը իր գործունեությունը վերոնշյալ մասնագիտությունների կրթական ծրագրերով իրականացնում է ՈԱՇ-ի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակների պահանջներին համապատասխան: Հարկ է նշել, որ ներկա փուլում դադարեցվել է «Իրավագիտության» բակալավրի /անվճար, վճարովի/ ընդունելությունը, նպատակ ունենալով առաջիկայում ներդնել բակալավրի նոր կրթական ծրագիր, որը կշնորհի Ոստիկանության ուղղությամբ բակալավրի որակավորում (փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ի և որակավորման անվանումը գտնվում է քննարկման փուլում):

Կրթահամալիրի առաքելությունն է «կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտելիքների ստեղծումը, փոխանցումը և տարածումը»: ՄՈՒՀ-ի առաքելությունն ուղղված է ՀՀ-ում ոստիկանական կադրերի պատրաստմանը, սակայն անհրաժեշտ է նշել, որ այս ոլորտային առանձնահատկությունը վերը նշված առաքելության մեջ շեշտադրված չէ:

«Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը գործում է համաձայն իր կանոնադրության (հաստատված ՀՀ կառավարություն 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշմամբ) և 2022-2026թթ. Ռազմավարական պլանի (ՌՊ), որն իր հերթին համապատասխանում է ՄՈՒՀ-ի կանոնադրական նպատակներին: Անհրաժեշտ է նշել, որ ՌՊ-ն ներառում է նախորդ ՌՊ-ի թերի կամ մասամբ իրականացված գործողությունները, ինչպես նաև նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ստացված խորհրդատվությունների ուղղությունները: ՄՈՒՀ-ի Ռազմավարական պլանը ներառում է Կրթահամալիրի առաքելությունը, հեռապատկերը (ապագայի տեսլականը), մասյուն արժեքները, և ռազմավարական 8 ուղղությունները՝ կրթության նորագույն մոտեցումներ, գիտական և հետազոտական գործունեության բարելավում, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն, կառավարման գործընթացներ և մարդկային ռեսուրսների

կառավարում, ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, ուսանողական համակազմ, հանրային ներգրավում, սոցիալական համագործակցություն և ծառայություններ, կրթության որակի ապահովում:

ՌՊ յուրաքանչյուր ռազմավարական ուղղության համար սահմանված են նպատակները և խնդիրները, նպատակներից բխող ակնկալվող վերջնարդյունքները (միջանկյալ արդյունքները), պատասխանատուները և կատարման ժամկետները: Պլան ժամանակացույցում ներառված չեն խնդիրների լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները՝ այդ թվում ֆինանսական, մյուս կողմից նախատեսվող ժամկետները հստակ չեն, քանի որ մեծամասամբ ընդգրկում են ՌՊ ողջ ընթացքը՝ 2022-2026թթ.:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր ռազմավարական ուղղություններում սահմանված խնդիրներին հասնելու համար առկա են համանման գործողություններ՝ օրինակ ՌՊ 4. «Կառավարման գործընթացներ և մարդկային ռեսուրսների կառավարում» ուղղության նպատակներից է «Կատարելագործել կրթահամալիրի ՊԴ կազմի ներուժը», խնդիր 1., 4.1.1 գործողությունը նախատեսում է «Կազմել և ներդնել Կրթահամալիրի ՊԴ կազմի որակավորման բարձրացման համապատասխան ծրագիր, ուսումնասիրելով տեղական և արտասահմանյան փորձը», սակայն նմանօրինակ գործողություն կարելի է տեսնել նաև ՌՊ ուղղություն 1., խնդիր 2., 1.2.1՝ «զարգացնել և կատարելագործել ՊԴ կազմի վերապատրաստումների կազմակերպման և որակավորումների բարձրացմանը ուղղված միջոցառումներն ըստ ՄԿԾ պահանջների», կամ՝ 1.2.3 «ստեղծել ՊԴ կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման համար պայմաններ՝ օգտագործելով առաջատար հանրապետական և այլ ճանաչված օտարերկրյա համալսարանների և կազմակերպությունների հետ փորձի փոխանակման տարբեր ձևեր»:

ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ըստ ՄՈՒՀ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման հայեցակարգի՝ Կրթահամալիրի շահառուներն են պետությունը, հասարակությունը, դիմորդները և վերջիններիս ծնողները, շրջանավարտները, անձնակազմը, գործընկերները, ուսանողությունը և այլ գործատուները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը գտնվում է բարեփոխումների շրջանում, որը նախ և առաջ պայմանավորված է ՀՀ Ուսանողության համակարգում տեղ գտած բարեփոխումներով: ՄՈՒՀ-ի գերատեսչական պատկանելիության առանձնահատկությամբ պայմանավորված՝ որպես հիմնական գործատու և կրթական ծրագրերի պատվիրատու հանդիսանում է ՆԳՆ-ն: ՆԳՆ-ի հետ Կրթահամալիրը մշտապես գտնվում երկխոսության մեջ՝ համաձայնեցնելով նաև ռազմավարական առաջնահերթությունները և հետագա բարեփոխումները:

Փորձագիտական այցի ընթացքում ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՀՀ ՆԳՆ-ը Ուսանողության բարեփոխումների համատեքստում պլանավորում է ճգնաժամային կառավարման ակադեմիան միավորել ՆԳՆ Կրթահամալիրի հետ, որպես միևնույն գերատեսչական մարմին (ՆԳՆ-ին) պատկան

ուսումնական հաստատություններ, որոնք բացառապես կրթություն են իրականացնելու նախարարության մասնագիտական կադրերի պահանջի համալրման համար ՈԱՇ-ի 3-ից ութերորդ մակարդակներում: Նախարարությունը այդ փոփոխությունները իրականացնում է Էստոնիայի բարեփոխումների մոդելով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում 2023թ. OSCE Երևանյան աշխատաժողովի ընթացքում միջազգային գործընկերների կողմից քննարկվել է երկու ՄՈՒՀ-երի միավորման հայեցակարգը և խորհրդատվություններ են տրվել անցնցում անցումային շրջանի ապահովման համար, որը շեշտադրում է երկու ուսումնական հաստատությունների շահերը հաշվի առնելու անհրաժեշտությունը ռացիոնալ կառվարման և կազմակերպական կառուցվածք ձևավորելու տեսանկյունից: Այս գործընթացների շրջանակներում ՄՈՒՀ-ը 2023թ. անցնում է արտաքին ուսումնասիրություն եվրոպական գործընկերոջ (մասնավորապես՝ Էստոնիայից հրավիրված OSCE փորձագետ) կողմից, որի դիտարկումների հիման վրա ՆԳՆ-ն և Կրթահամալիրը կպլանավորեն ընթացիկ բարեփոխումների ընթացքը:

Իսկ ինչ վերաբերում է մյուս շահակիցներին, ապա վերջիններիս կարիքները վերհանելու նպատակով իրականացվում են հարցումներ, քննարկումներ և այլն: Բացի այդ, Կրթահամալիրի շահակիցները ներգրավված են նաև որոշումներ կայացնող մարմիններում՝ Գիտական խորհրդում, Կրթահամալիրի և ուսանողական խորհուրդներում, որոնց շրջանակներում հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց կարիքները:

Փորձագիտական խմբի հանդիպումները ներքին և արտաքին շահակիցների հետ ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ը վերջիններիս (նախարարություն, ներքին շահակիցներ) հետ ունի արդյունավետ երկխոսություն: Արդյունավետ երկխոսության մասին է վկայում նաև այն, որ բոլոր ներքին շահակիցները տեղյակ են ՄՈՒՀ-ում իրականացվող բարեփոխումներից և միասնական գործունեությամբ փորձում են իրականացնել այն:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Կրթահամալիրը, հիմնվելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների վրա, իր ՌՊ նպատակների, խնդիրների և վերջիններիս ուղղված գործողությունների ձեռքբերումը գնահատելու նպատակով սահմանել է վերջնարդյունքների գնահատման քանակական և որակական առանցքային ցուցիչներ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սահմանված որոշ ցուցիչներում առկա է չափելիության խնդիր, օրինակ՝ Գիտական և հետազոտական գործունեության բարելավում ռազմավարական ուղղության համար նախատեսված է գործողություն ըստ թիրախային ոլորտների պարբերաբար մշակել գիտահետազոտական ծրագրեր՝ ներգրավելով գործատուների ներկայացուցիչներ, իսկ որպես ցուցիչ սահմանված է գիտահետազոտական ծրագրերի առկայությունը: Տեսանելի չէ, ակնկալվող ծրագրերի քանակը, ակնկալվող որակական արդյունքը:

ՌՊ նպատակների գնահատման նպատակով ՄՈՒՀ-ում գործում է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությանը

ներկայացվող պահանջները և ներկայացման» կարգը (2018թ.), որի համաձայն ՄՈՒՀ-ը իրականացնում է ՌՊ-ի տարեկան կատարողականի հաշվետվություն՝ հիմված ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների վրա: Հաշվետվությունները ներառում են ՌՊ-ով պլանավորված յուրաքանչյուր գործողության համար իրականացված քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը և չիրականացված գործողությունների ոչ նպատակային լինելու կամ չիրականացվելու հիմնավորումները: ՌՊ պլանի հաշվետվությունը վերլուծվում է մոնիթորինգային խմբի կողմից: Վերլուծության արդյունքում կազմվում է «Տեղեկանք» ՌՊ-ի կատարման վերաբերյալ, վերջինս ենթադրում է խմբի ընդհանուր եզրակացությունը ՌՊ նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների կատարման, ստորաբաժանումների աշխատանքի և ձեռքբերված արդյունքների ուղղությամբ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թե հաշվետվություններում, և թե տեղեկանքում անդրադարձ արված չէ արդյունավետության գնահատման ցուցիչներով (խոսքը վերաբերում է հատկապես քանակականին) սահմանված արդյունքների ձեռքբերմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրի դերակատարությունը պետական իրավապահ մարմինների, ոստիկանության համակարգի համար անհարժեշտ մասնագիտական կադրերի պատրաստության գործում, ովքեր տարիներ շարունակ համալրել են համակարգը:

Ապագայի տեսլականում Կրթահամալիրը վերակազմավորվելու է որպես ուսումնական հաստատություն՝ միանալով Ճգնաժամային կառավարման ակադեմիայի հետ: Առաջիկայում սպասվող միավորումը կհանգեցնի «նոր» առաքելության սահմանմանը, այս համատեքստում փորձագիտական խումբը ընդգծում է առաքելության վերաձևակերպման մեջ երկու ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի ոլորտային առանձնահատկությունների և աշխատաշուկայի հետ կապի արտահայտումը: Իսկ ինչ վերաբերում է բարեփոխումներին, ապա փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի միավորման անցումային ռազմավարության առկայությունը, որը հստակ կարտահայտի անցումային շրջանի նպատակները և խնդիրները բարեփոխումների ընթացքը (երկու ուսումնական հաստատությունների համատեղ կառավարման համար անհրաժեշտ միջանկյալ քայլերը) և ակնկալվող արդյունքները, այդ թվում նոր ՄԿԾ-ների մշակումը և սահուն անցումը նոր կազմակերպահիրավական կառուցվածքին:

Դրական է, որ Կրթահամալիրն ունի ռազմավարական պլան, որտեղ սահմանված են նպատակներ և խնդիրներ, որոնք ընդունելի են ներքին և արտաքին շահակիցների կողմից: Փորձագիտական խումբը միայն նշում է, որ նպատակներին հասնելու քայլերի կատարման ժամկետները հստակեցման, իսկ ֆինանսական ռեսուրսները՝ պլանավորելու կարիք ունեն: Ըստ էության ֆինանսական ռեսուրսների պլանավորումը և բաշխումը ուղիղ փոխկապակցված է ՌՊ գործողությունների կատարման ժամկետների հետ, որը ցույց կտա ՄՈՒՀ-ի կարողունակությունը հասնելու իր սահմանած նպատակներին, մյուս կողմից այս մոտեցումը կերաշխավորի ՌՊ-ի հետևողական իրականացմանը և ակնկալվող արդյունքների ձեռքբերումը: Ինչ վերաբերում է տարբեր խնդիրների լուծմանն ուղղված համանման

գործողություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջիններս հստակեցման կարիք ունեն, որը կնպաստի ՌՊ-ի օպտիմալացմանը և առավել արդյունավետ պլանավորման իրականացմանը: Անդրադառնալով նաև գործողությունների գնահատման առանցքային ցուցիչներին, ապա փորձագիտական խումբը արձանագրում է դրական առաջընթաց վերջիններիս սահմանման աշխատանքներում, այդուհանդերձ որոշ քանակական և որակական ցուցիչներ հստակեցման կարիք ունեն, վերոնշյալը կարևոր է նաև ապագայում պլանավորվող հաստատության ռազմավարական նպատակների գնահատման համար: Հստակեցումը թույլ կտա ՄՈՒՀ-ին գնահատել իրականացված գործողությունների արդյունավետությունը, բարելավելով որակի ապահովման մեխանիզմները, նպաստելով մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առավել մանրակրկիտ և հիմնավորված պլանավորման իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ը կարևորում է ռազմավարական պլանով սահմանված նպատակների և խնդիրների իրականացման հաշվետվողականությունը, ինչը նպաստում է ռազմավարական պլանի իրականացման ընթացքի վերահսկմանը և դրա հետևողական իրագործմանը: Այդուհանդերձ Ռազմավարական պլանի գնահատումն առավել արդյունավետ կիրականցվի, եթե հաշվետվություններում ՄՈՒՀ-ը հետևողական անդրադարձ կատարի սահմանված գնահատման ցուցիչներին, ինչպես նաև, եթե ՌՊ ամփոփ հաշվետվությունում ու տեղեկանքում վերլուծության առարկա հանդիսանա այն հարցը, թե արդյոք իրականացված աշխատանքները բավարար են եղել ցուցիչները ծածկելու/բավարար մակարդակով ապահովելու համար: Այս մոտեցումը հետագայում կնպաստի որակի ապահովման սկզբունքով ՌՊ-ով ակնկալվող արդյունքների գնահատման մեխանիզմների շարունակական բարելավմանը և հետևողական կիրառմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ կրթահամալիրն ունի ռազմավարական պլան, ձևակերպված առաքելություն, ապագայի տեսլական, որը կիսում են ներքին և արտաքին շահակիցները, ՄՈՒՀ-ը գիտակցում է իր դերակատարությունը և կարևորությունը ոստիկանական կադրերի պատրաստման ուղղությամբ, նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ներդրվել են ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը բավարարում է 1-ին չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՆԳՆ կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրը ոստիկանական կադրեր պատրաստող գերատեսչական միակ ուսումական հաստատությունն է, որով և պայմանավորված է կրթահամալիրի կառավարման համակարգի առանձնահատկությունը: Կրթահամալիրի կանոնադրությամբ սահմանվում է, որ . «Կրթահամալիրի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ (ՀՀ ներքին գործերի) նախարարությունը, գործադիր մարմինը՝ կրթահամալիրի պետը»:

Կրթահամալիրը իր մեջ որպես առանձին կառուցվածքային միավորներ ներառում է՝

- **Ակադեմիան**՝ իրականացնում է բարձրագույն և հետբուհական կրթություն, որի կազմում գործում է իրավագիտության, հեռակա ուսուցման ֆակուլտետները, 6 ամբիոններ և մագիստրատուրայի բաժանմունքը,
- **քոլեջը**՝ իրականացնում է միջին մասնագիտական կրթություն, որի կազմում գործում է ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը և 4 ամբիոններ, և
- **Ուսումական կենտրոնը**՝ նախնական մասնագիտական և լրացուցիչ կրթություն:

Յուրաքանչյուր կառուցվածքային միավոր կառավարվում է Կրթահամալիրի պետի կողմից նշանակված ղեկավար անձի կողմից, ում թեկնածությունը հաստատում է ՆԳՆ-ն:

Կրթահամալիրում կոլեգիալ կառավարման օղակներն են «Խորհուրդը» և «Գիտական խորհուրդը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառուցվածքային միավորները նույնպես ունեն իրենց խորհուրդները օրինակ՝ ակադեմիան և ուսումական կենտրոնը: Կրթահամալիրում գործում են նաև ֆակուլտետների և ամբիոնների խորհուրդները:

Կրթահամալիր խորհուրդը կրթահամալիրի պետին առընթեր խորհրդակցական մարմին է, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է կրթահամալիրի պետը: Կրթահամալիրի Խորհուրդը բաղկացած է մեկ արտաքին՝ (լիազոր մարմնի ներկայացուցիչ) և ներքին շահակիցներից, այդ թվում՝ կրթահամալիրի պետի տեղակալներ, Ակադեմիայի, Քոլեջի, Ուսումական կենտրոնի պետեր, դասախոսների, ուսանողների ներկայացուցիչներ: Խորհրդում քննարկվող հարցերը վերաբերվում են Կրթահամալիրի ընդհանուր գործունեությանը (իրավական ակտերի փոփոխություններ, ուսանողների հատկացվող զեղչեր, այլ գործող խորհուրդներից՝ օրինակ ակադեմիայի, ուսումական կենտրոնի խորհրդից ներկայացվող հարցերի քննարկում և այլն): Լսվում են կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, որոնց քննարկմանը հրավիրվում է նաև ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալը: Այսուհանդերձ հարկ է նշել, որ հիմնական որոշումները

հաստատվում են Կրթահամալիրի պետի կողմից: Կրթահամալիրի պետի որոշմամբ գործում է նաև օպերատիվ խորհրդակցական մարմին (ներգրավված են ստորաբաժանումների պետերը և տեղակալները), որը նիստ է գումարում շաբաթական մեկ անգամ, ընթացիկ հարցերի քննարկման համար:

Կրթահամալիրը որոշումները կայացնելիս որպես էթիկայի նորմերի պահպանման, բարեվարքության միջավայրի ապահովման քաղաքականության հիմք ընդունում և առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով (2005 թ.), ինչպես նաև Կրթահամալիրի «Ներքին կարգապահական կանոններով» (2015 թ.):

Կրթահամալիրի գործառնական ընթացիկ կառավարումն իրականացվում է պետի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների շրջանում վերջինս վայելում է հարգանք և վստահություն: Ներքին շահակիցները վստահում են վերջինիս որոշումների կայացման, այնպես էլ ՆԳՆ-ի, արտաքին շահակիցների հետ երկխոսություն վարելու գործընթացում: Այս ամենի վկայությունն նաև այն, որ ՄՈՒՀ-ի ներքին շահակիցները տեղեկացված են պլանավորվող բարեփոխումների բովանդակության մասին և աջակցում են պետին՝ նպաստելով գործընթացի անխափան և կանոնակարգված իրականացմանը:

Կրթահամալիրի կազմակերպական կառուցվածքը հաստատվում և փոփոխվում է ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ը վերանայել է իր կազմակերպական կառուցվածքը, իրականացվել է որոշակի օպտիմալացում՝ օրինակ միավորվել են Կրթության որակի ապահովման գիտական աշխատանքների բաժինը, նույն ձևաչափով է գործում միջազգայնացման և ՏՏ ներդրման բաժինը:

Կրթահամալիրի կառավարման համակարգին բնորոշ է ուղղահայաց կառավարումը (վերևից ներքև, ներքևից վերև), կազմակերպական կառուցվածքում հորիզոնական կապերը արտահայտված չեն, բացի այդ որոշ կառավարման օղակներ չեն երևում, օրինակ՝ կրթահամալիրի պետի չորս տեղակալներից միայն մեկն է՝ առաջին տեղակալը, ընդգծված ներկայացված գծապատկերում: Կրթահամալիրի պետի առաջին տեղակալի կողմից համակարգվում են «ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը» (որը իր հերթին համակարգում է «ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժինը», «միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժինը»), «կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժինը» և «վերապատրաստման կենտրոնը»: Մյուս տեղակալները համապատասխանաբար հանդիսանում են «Կադրերի և ԱՀՏԱ բաժնի», «Ծառայության բաժնի» և «Տնտեսական բաժնի» ղեկավարները: Այդուհանդերձ փորձագիտական այցը ցույց տվեց, որ ստորաբաժանումների միջև առկա են որոշակի հորիզոնական կապեր, որոնք գործում են Կրթահամալիրի պետի կողմից տրվող «հրամանների» իրագործման շրջանակներում գործառութային պարտականություններով պայմանավորված, օրինակ՝ ընդունելության գործընթացի կազմակերպումը: Վերոնշյալը նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ Կրթահամալիրում աշխատանքի ընդունվելը/ազատվելը, պաշտոնների համալրումը կարգավորվում է «Ոստիկանությունում

ծառայության մասին» ՀՀ օրենքով և Ոստիկանության ծառայողների կոչումների ենթակարգությամբ, որից և բխում են կառավարման գործառնական կապերը։ Համաձայն ինքնավերլուծության զեկույցի՝ Կրթահամալիրում առկա են մոտ 56 թափուր պաշտոններ, օրինակ՝ ամբիոնի վարիչի, ֆակուլտետի պետի և այլն։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ թափուր հաստիքները պայմանավորված են տվյալ հաստիք պաշտոնի անձնագրին համապատասխան կադրերի բացակայությամբ, որը որոշակի պահանջներ է սահմանում ինչպես տվյալ պաշտոնին համապատասխան ոստիկանական կոչման, այնպես էլ գիտական կոչման և աստիճանի նկատմամբ։ Նմանօրինակ թափուր հաստիքներին նշանակվում են ժամանակավոր պաշտոնակատարներ, մինչև համապատասխան պահանջները բավարարող թեկնածուի առաջադրումը։ Կրթահամալիրը ՀՀ Ներքին գործերի նախարարի կամ ոստիկանության պետի կողմից նշանակված հաստիքային աշխատակիցներից բացի, աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրության հիման վրա աշխատանքի է ընդունում նաև պայմանագրային հիմունքներով դասախոսների և այլ աշխատակիցների։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կրթահամալիրի և ճգնաժամային ակադեմիայի միավորումը ուղղակիորեն առնչվելու են կառավարման համակարգին, այդպիսով՝ Կրթահամալիրի գործունեության արտաքին գնահատման զեկույցի հիման վրա (2023թ.), նաև հաշվի առնելով զարգացած երկրների փորձը (մասնավորապես ընտրվել է Էստոնիայի մոդելը) կրթահամալիրի կառավարումը իրականացվելու է «քաղաքացիական» անձանց կողմից, ովքեր զբաղեցնելու են վարչական պաշտոնները, սակայն դասավանդողները կարող են լինել Ոստիկանության ծառայողներ։ Պլանավորվում է ՀՀ այլ բուհերի մոդելով ստեղծել կառավարման խորհուրդ, որը բաղկացած կլինի 12 անդամից՝ 6-ը ներքին շահակից, 6-ն արտաքին։ ՄՈՒՀ-ը այս տեսանկյունից նախարարությանը ներկայացրել է առաջարկությունների փաթեթ։

Կրթահամալիրն իր առաքելության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովման նպատակով ֆինանսների տնօրինման քաղաքականությունն իրականացնում է «ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն» (2018թ.)։

Կրթահամալիրի ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ ֆինանսական ռեսուրսների պլանավորում՝ ֆինանսական նախահաշվի կազմում, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխում, ֆինանսական ռիսկերի կանխատեսում և վերահսկում, այլընտրանքային ֆինանսական հոսքերի ապահովում։ Կրթահամալիրի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը Կրթահամալիրի պետի ներկայացմամբ հաստատում է ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության պետը։ Նույն իրավական մեխանիզմն է նախատեսված նաև արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման նախահաշվի հաստատման վերաբերությամբ։ Ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը։ Ֆինանսական միջոցների բաշխումն իրականացվում է ըստ ստացման ուղղությունների։

Կրթահամալիրի դրամական միջոցների ներհոսքը բաղկացած է հետևյալ եկամտային հոդվածներից.

- պետբյուջեից ստացված հոսքեր՝ նախնական մասնագիտական կրթական ծրագրի համար, միջին մասնագիտական կրթական ծրագրի համար, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպման համար,
- այլ եկամուտներ՝ նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն:

Կրթահամալիրի ֆինանսական միջոցների ձևավորման հիմական աղբյուրներից է հանդիսանում սովորողների ուսման վարձի նպատակով վճարված գումարները: ՄՈՒՀ-ը ՀՀ ոստիկանության միջոցով պետական ֆինանսավորում է ստանում պետական բյուջեից պետպատվերի շրջանակներում սովորողների համար: Անհրաժեշտ է նշել, որ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի ընդունելությունը դադարեցնելու հետ կապված, ուսման վճարներից եկող եկամուտները 2022թ. համեմատ նվազել են մոտ 17%-ով, միևնույն ժամանակ ավելացել են եկամուտները ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ: ՄՈՒՀ-ն ունի ֆինանսական մուտքեր վճարովի դասընթացներից, վարձակալությունից, դրամաշնորհներից և այլն:

Իսկ ինչ վերաբերում է ծախսերին, ապա անհրաժեշտ է նշել, որ հիմականը բաժին է ընկնում աշխատավարձին (մոտ 81%), մնացյալ 19%-ը բաժին է ընկնում կոմունալ ծախսերին, ռեսուրսների ձեռքբերմանը, հարկերին, ուսման վարձերի զեղչերին, գործուղումներին, դասախոսների մասնագիտական զարգացման ծախսերին և այլն:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՆԳՆ Կրթահամալիրի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ներքին շահակիցներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, որը ամրագրված է նաև կրթահամալիրի կանոնադրությամբ: Կրթահամալիրի ուսանողները և դասախոսները ընդգրկված են կոլեգիալ կառավարման մարմիններում՝ Կրթահամալիրի խորհրդում և Գիտական խորհրդում: Ուսանողները ընդգրկված են նաև Ուսանողական խորհրդում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների առաջարկով ՈՒԽ նախագահի կողմից Խորհրդում հարց է բարձրացվել կառուցել դատական նիստերի դահլիճ, որի կառուցման համար Կրթահամալիրը հատկացրել է մոտ 30 մլն դրամ:

Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը կազմում են կրթահամալիրի սովորողները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գիտական խորհրդին անդամակցելու համար պարտադիր չէ լինել ՈՒԽ անդամ:

Ուսանողները նաև ընդգրկված են Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի խորհրդի կազմում՝ 25 տոկոսը և այլ ֆակուլտետների խորհուրդների կազմում:

Կրթահամալիրի կառավարման տարբեր մակարդակներում ներգրավված են նաև ՊԴ կազմի ներկայացուցիչները:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ի երկարաժամկետ պլանավորման փաստաթուղթը հանդիսանում 2022-2026 Ռազմավարական պլանը: Կրթահամալիրը որպես միջնաժամկետ պլանավորման փաստաթուղթ ընդունում է նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր-ժամանակացույցը, որը պլանավորվել է իրականացնել 2020-2021թթ. ընթացքում: ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրումից հետո բարելավման պլանի գնահատման համար հաստատել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր-ժամանակացույցի կատարման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման» կարգը 2020թ., որը սահմանում է հաշվետվության կատարման պահանջները և ձևաչափը:

Կարճաժամկետ պլանավորման հիմքերը ստորաբաժանումների տարեկան պլանավորման փաստաթղթերն են: Ներկա փուլում ՄՈՒՀ-ում գերակշռում է կարճաժամկետ պլանավորումը, որը ՄՈՒՀ-ը փորձում է փոխկապակցել 2022-2026 ՌՊ-ի հետ: ՌՊ պլան ժամանակացույցում արտահայտված նպատակների և խնդիրների իրագործման համար սահմանված պատասխանատուներն իրենց ստորաբաժանումների (կրթաճյուղ, ֆակուլտետ, ամբիոն, բաժին) աշխատանքային պլաններում ներառում են համապատասխան ՌՊ-ի խնդիրների լուծման քայլերը:

ՄՈՒՀ-ում գործում է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացման և հաշվետվողականության» կարգը (2019թ.), համաձայն որի ՄՈՒՀ-ի ստորաբաժանումները իրենց աշխատանքային պլանի համաձայն հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր եռամսյակի համար (3-ամսյա, 6-ամսյա, 9-ամսյա, տարեկան): Հաշվետվությունները ամփոփում է միջազգային համագործակցության և SS ներդրման բաժինը, նույն պարբերականությամբ ՄՈՒՀ-ը հաշվետվություն է ներկայացնում ՆԳՆ-ը:

Կրթահամալիրի պետի կողմից ստեղծված մոնիթորինգային խումբը (2019թ. որոշմամբ) մշտադիտարկում է բոլոր ստորաբաժանումների կողմից իրենց պատասխանատվության ներքո գտնվող ՌՊ քայլերի իրագործման ընթացքը և ներկայացնում ամփոփ տարեկան հաշվետվություն:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը Կրթահամալիրին տրամադրել է խորհրդատվություն իրականացնել ներքին և արտաքին գործոնների համակարգված ուսումնասիրություն և ներդնել արդյունքները ռազմավարական պլանավորման մշակման հիմքում: Ներկայացված խորհրդատվությունը մասամբ է իրականացվում Կրթահամալիրի կողմից, քանի որ մի շարք արտաքին գործոններ ՄՈՒՀ-ի համար ուսումնասիրում է ՆԳՆ-ն՝ հաշվի առնելով Կրթահամալիրի ոլորտային և ենթակայության առանձնահատկությունները:

Կրթահամալիրը ունի որոշակի հնարավորություն առաջնային տեղեկանալու ի հայտ եկող արտաքին գործոնների մասին, քանի որ դրանք հաճախ կապված են ՆԳՆ որոշումներով և գտնվում են ՆԳՆ հսկողության ներքո: Օրինակ, 2022-2023 ուստարվանից «Իրավագիտություն» ՄԿԾ-ի ընդունելությունը չի իրականացվում, սակայն Կրթահամալիրն համագործակցելով ՆԳՆ-ի հետ, իրականացնում է պետական համակարգի աշխատակիցների վերապատրաստում՝ մեղմելով կրթական ծրագրի ընդունելության դադարեցման ֆինանսական հետևանքները: Կրթահամալիրի համար մյուս կարևոր արտաքին գործոններից է նաև այն, որ Կրթահամալիրում դասավանդող և միևնույն ժամանակ ոստիկանության ծառայող հանդիսացող աշխատակիցները երբեմն ՆԳՆ-ի կողմից նշանակվում են այլ պաշտոնների՝ հանգեցնելով թափուր հաստիքների: ՄՈՒՀ-ը դիտարկում է, որ այս գործոնի հաղթահարմանը հետագայում կնպաստեն ապագա բարեփոխումները, երբ ՄՈՒՀ-ը հնարավորություն կունենա որոշ հաստիքներ լրացնել քաղաքացիական անձանցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բացի վերը նշվածներից ՆԳՆ իրականացնում է ոլորտային վիճակագրական ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում որոշումների կայացման համար, օրինակ՝ որքան պարեկ է անհրաժեշտ ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումների շրջանակներում կադրային պահանջարկը համալրելու համար, որի համաձայն ըստ պահանջի հատկացվում են ընդունելության տեղերը և կազմակերպվում են դիմորդների ընդունելությունը, իրականացվում են դիմորդների ագիտացիոն աշխատանքներ: Օրենսդրական փոփոխությունները և այլ գործոնները ուղղակի կամ անուղղակի հիմք են հանդիսանում կրթահամալիրում գործընթացների կառավարման համար: Որպես գերատեսչական պետական ՄՈՒՀ Կրթահամալիրը առավելապես կախված է մակրո գործոններից, որոնք բխում են ՀՀ քաղաքացիների հասարակական անվտանգության ապահովման գերակա շահից: Այդուհանդերձ Կրթահամալիրը ներկայումս առավելապես հիմնվում է արտաքին գնահատման տվյալների վրա, վերոնշյալ գործոնների ուսումնասիրման ներքին մեխանիզմներ ներդրված չեն:

Ինչ վերաբերում է ներքին գործոններին, ապա վերջիններիս ուսումնասիրման հիմնական մեխանիզմ ծառայում են հարցումները, որոնք իրականացվում են ներքին և արտաքին շահակիցների շրջանակներում՝ հիմնականում կրթական և այլ ծառայությունների մատուցման որակի գնահատման համար: Անհրաժեշտ է նաև նշել, որ «Ոստիկանական գործ» նախնական մասնագիտական ՄԿԾ-ի իրականացման ընթացքում ի հայտ եկող ներքին և արտաքին գործոնները ուսումնասիրվում են ICITAP միջազգային կազմակերպության կողմից, ներկայացված տվյալների հիման վրա կազմակերպվում վերապատրաստումներ, փոփոխվում ծրագրերը:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Կրթահամալիրում 2017թ. նեդրվել է Որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որով և ՄՈՒՀ-ը առաջնորդվում է որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ապահովման հարցում: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՄՈՒՀ-ը նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների

հիման վրա բարելավել է պլանավորման գործընթացը, իրականացրել է իր երկամյա բարելավման պլանի կատարողական վերլուծությունը գնահատելով արդյունքները, վերջինիս հիման վրա կազմվել է նոր 2022-2026 ՌՊ-ը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ստորաբաժանումները հիմնականում գտնվում են իրականացման փուլում:

ՄԿԾ կառավարման տեսանկյունից ՊԻԳԲ շրջափուլը հաջողությամբ ապահովվում նախնական մասնագիտական «պարեկ» որակավորման ԿԾ-ի փաստաթղթային և գործընթացային բարելավման աշխատանքներում: 2020 թվականին ներդրված չափորոշիչը վերանայվել և լավարկվել է 2023 թվականին, հարկ է նշել, որ ծրագրի իրականացումը գտնվում է շարունակական ՊԻԳԲ ցիկլում:

Կրթահամալիրի մյուս կրթական ծրագրերում նույնպես իրականացվել են լավարկման աշխատանքներ («Իրավագիտության» համապատասխանեցումը ՈՈՇ-ի հետ), սակայն դրանք դեռևս իրականացման փուլում են:

Նախորդ հավատարմագրումից հետո մշակվել և ներդրվել են որոշ կանոնակարգող փաստաթղթեր (օրինակ՝ սովորողների վարչակազմին և ղեկավարությանը դիմելու ուղեցույց, ուսանողի ուղեցույց), սակայն գործող հիմնական փաստաթղթային հենքը հաստատվել է 2018-2019թթ. ընթացքում: Անհրաժեշտ է նշել, որ առկա են դեպքեր, երբ նույն ոլորտը կանոնակարգվում է երկու նույնանուն փաստաթղթերով, որոնք երբեմն հակասում են միմյանց, օրինակ՝ «ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ամբիոնների գիտական գործունեությունը գնահատելու» նույնանուն կարգերը, որտեղ առկա են հետազոտական աշխատանքների գնահատման միավորային տարբեր սանդղակներ: Անհրաժեշտ է նշել, որ փաստաթղթերի արդյունավետության գնահատում տեղի չի ունեցել:

ՀՀ կառավարության 2023 թվականի որոշմամբ (ապրիլի 6-ի թիվ 464-Ն) «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր», այդուհանդերձ այս փոփոխությունը չի արտացոլվել ներքին կանոնակարգերում փաստաթղթային հենքում, այս տեսանկյունից փաստաթղթային հենքի վերանայում չի եղել:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Կրթահամալիրի տարբեր գործընթացների իրականացման արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման հիմնական մեխանիզմը շահակիցների բավարարվածության հարցումներն են, որոնք անցկացվում են «ՀՀ ոստիկանության Կրթահամալիրում կրթական գործընթացների բարելավմանն ուղղված հարցումների անցկացման» կարգին (2018թ.) համապատասխան: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել, որ հարցման արդյունքների կիրառությունը հատվածային է, ոչ բոլոր դեպքերում են գնահատման արդյունքները հիմք հանդիսացել որոշումների կայացման համար:

ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման փորձառությունը ՄՈՒՀ-ը ձեռք է բերել «Պարեկ» որակավորման ծրագրի իրականացման ընթացքում, միջազգային գործընկերների հետ համատեղ մշակված ծրագիրը և նրա արդյունքները շարունակել են գտնվել անկախ գնահատողների ուշադրության ներքո, մասնավորապես ծրագրի իրականացման և վերջնարդյունքների բաղադրիչները: Ծրագրի մեկնարկին ընդառաջ դասավանդող անձնակազմը անցել է համապատասխան վերապատրաստում միտված դասավանդման մեթոդների և ակնկալվող արդյունքների փոխկապակցմանը: Յուրաքանչյուր կրթական հոսքի ավարտին իրականացվում դասավանդման որակի գնահատում ICITAP հայաստանյան առաքելության կողմից, արդյունքները հիմք են հանդիսանում դասավանդողների ընտրության և նրանց վերապատրաստումների լավարկման համար:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Կրթահամալիրում գործող ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության տարածման հիմնական միջոցներն են Կրթահամալիրի կայքէջը (www.edupolice.am) և Ֆեյսբուքյան էջը («MIA Educational Complex – ՆԳՆ կրթահամալիր»), առկա է նաև Յութուբյան ալիք: Կրթահամալիրի կայքեջը առանձին բաժիններով ներկայացնում է ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի աշխատանքները, ըստ ամբիոնների հրապարակված են դասավանդվող առարկաների նկարագրերը, ընդհանուր առմամբ լուսաբանվում է Կրթահամալիրի գործունեությունը:

Տարբեր աղբյուրներում այդ թվում կայքեջի և Ֆեյսբուքյան էջի հրապարակումների և դիտումների ակտիվությունը վերլուծվում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը նպատակաուղղված աշխատանքներ է իրականացնում կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ՝ փորձելով անցում կատարել ուղղահայաց կառավարման համակարգից դեպի առավել դինամիկ և մասնակցային կառավարման մոդելի: Ներկայումս Կրթահամալիրը հիմնականում կառավարվում է ուղղահայաց համակարգով, որտեղ որոշումների կայացման լիազորությունները կենտրոնացած են Կրթահամալիրի պետի և ՆԳՆ-ի շրջանակում: Սա կարող է որոշակիորեն սահմանափակել ներքին շահակիցների կարծիքների արտահայտման հնարավորությունը, հատկապես հաշվի առնելով Կրթահամալիրի ոլորտային առանձնահատկությունը և ոստիկանական կոչումների տարբերությունները:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Կառավարման համակարգի բարեփոխումները կարող են հնարավորություն ընձեռել Կրթահամալիրին ավելի մեծ ազատություններ ունենալ որոշումների կայացման գործընթացում, որը կբարձրացնի ՄՈՒՀ-ի պատասխանատվության և հաշվետվողականության շրջանակը:

Դրական է, որ Կրթահամալիրը ներկայիս կառավարման մոդելի շրջանակներում իր շահակիցներին ներգրավում է որոշումների կայացման գործընթացներում խորհրդակցական

կոլեգիալ տարբեր մարմինների միջոցով, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին և դասախոսների արտահայտելու իրենց կարիքները և գտնելու դրանց համարժեք լուծումները։ Իսկ ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի գործառնական կառավարմանը, ապա փորձագիտական խումբը դրականորեն մատնանշում է, որ Կրթահամալիրի պետի նկատմամբ ներքին և արտաքին շահակիցների վստահությունն ապահովում է կառավարման արդյունավետությունը և ՄՈՒՀ-ի համար կարևոր անցումային փուլում նպաստում է Կրթահամալիրի կանոնակարգված աշխատանքին։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կրթահամալիրի ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության առկայությունը։ Ուսանողների քանակի կրճատման հետևանքները Կրթահամալիրը կարողացել է որոշակիորեն կառավարել այլընտրանքային ֆինանսական հոսքերի ապահովման միջոցով, որը հանգեցրել է բյուջեի կայունության պահպանմանը։ Փորձագիտական խումբը խրախուսում է շարունակել ձեռնարկատիրական գործունեության և արտաբյուջետային ֆինանսավորման ընդլայնման ուղղությամբ աշխատանքները, որը հնարավորություն կընձեռի Կրթահամալիրին ոչ միայն ապահովել ֆինանսական կայունություն, այլ նաև զարգացնել կրթական ծրագրերը և բարելավել ՄՈՒՀ-ի ֆինանսական անկախությունը։

Կրթահամալիրում առկա թափուր պաշտոնների մասով փորձագիտական խումբը նշում է, որ ըստ ՌՊ-ի, կառուցվածքի և նախատեսված գործառույթների, անհրաժեշտ է գնահատել իրական աշխատակիցների պահանջը և վերլուծել, թե ինչպես է 56 թափուր հաստիքի առկայությունը ազդում Կրթահամալիրի բնականոն աշխատանքի վրա։ Նաև անհրաժեշտ է նշել, որ հաստիքների թափուր լինելը ոստիկանական կոչումները/պաշտոնները պաշտոնների տեղակայման պահանջների հետ փոխկապակցման հետևանք է, որը հանգեցնում է նրան, որ գիտական կոչում և աստիճան ունեցող մասնագետը հաճախ չի կարող համալրել թափուր պաշտոնը, քանի որ պահանջվում է նաև ոստիկանական կոչում։ Փորձագիտական խումբը խրախուսում է, որ ՄՈՒՀ-ը ապագայում վերանայի պաշտոնների համալրման իր մոտեցումը՝ ներդնելով ճկուն կառուցակարգեր աշխատակիցների ընդունման և առաջխաղացման հարցում, ներգրավելով նաև քաղաքացիական և ակադեմիական անձանց, ինչը կարող է մեղմել մարդկային ռեսուրսների սակավությունը։

Դրական է, որ Կրթահամալիրը նախորդ հավատարմագրումից հետո էականորեն բարելավել է իր գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների վերաբերյալ տվյալների հավաքագրումը և տվյալահենք որոշումների կայացումը։ Գերատեսչական պատկանելիությունը թույլ է տալիս ՄՈՒՀ-ին որոշ արտաքին գործոնների ուսումնասիրության հարցում աջակցություն ստանալ նաև ՆԳՆ-ից, որը նպաստում է տվյալահենք որոշումների կայացմանը հատկապես ընդունելության տեղերի պլանավորման ընթացքում։ Դրական է նաև միջազգային կազմակերպության կողմից «Ոստիկանական գործ» ՄԿԾ-ի վրա ազդող գործոնների բացահայտման փորձառությունը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ ակնհայտորեն տեսանելի չեն Կրթահամալիրի ջանքերը ներքին գործոնների մանրակրկիտ ուսումնասիրման և համակարգված տվյալների դուրսբերման ուղղությամբ։

Դրական է, որ որոշ ՄԿԾ-ներում ամբողջությամբ ներդրված է ՊԻԳԲ շրջափուլը, այնուամենայնիվ ոչ բոլոր ՄԿԾ-ներն են նույն փորձով և տրամաբանությամբ կառավարվում,

որը կարող է հանգեցնել ՄԿԾ-ների ոչ հավասարաչափ զարգացմանը և բարելավմանը: Վարչարարական գործընթացների ՊԻԳԲ շրջափուլը դեռևս գտնվում է իրականացման փուլում, և կան դեպքեր, երբ միևնույն ոլորտը կարգավորվում է երկու տարբեր փաստաթղթերով, որոնք ունեն որոշ հակասություններ: Վարչարարական գործընթացները կարիք ունեն գնահատման, որը հնարավորություն կտա հասկանալ կիրառական փաստաթղթերը, բացահայտել հակասությունները և իրականացնել բարելավումները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ շնորհիվող որակավորումների վերաբերյալ Կրթահամալիրը տեղեկատվությունը շահակիցներին հասանելի դարձնելուն պաշտոնական կայքէջի, սոցիալական էջերի միջոցով, որը նպաստում է ՄՈՒՀ-ի դերի բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ կրթահամալիրի կառավարման համակարգը, չնայած իր կառավարման ուղղահայաց առաձնահատկությամբ, փորձում է ապահովել որոշումների կայացման մասնակցային գործընթաց՝ ներգրավելով ներքին ու արտաքին շահակիցներին, ֆինանսական կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ապահովել բյուջեի կայունություն այլընտրանքային ֆինանսական հոսքերի միջոցով, ՄՈՒՀ-ն իրականացնում է գործառնական արդյունավետ կառավարում, որոշ գործընթացներում ներդրված է ՊԻԳԲ շրջափուլը, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը բավարարում է 2-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՆԳՆ կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհիվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը իրականացնում է նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական կրթություն Որակավորումների ազգային շրջանակի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներում: 2023-2024 ուսումնական տարվա դրությամբ ՄՈՒՀ-ում իրականացվում է 5 կրթական ծրագիր՝ «Ոստիկանական գործ» պարեկ որակավորմամբ, «Ոստիկանական գործ» քրեական ոստիկան որակավորմամբ (նախնական մասնագիտական), «Ոստիկանական

գործ» ոստիկանության սպա որակավորմամբ (միջին մասնագիտական), «Իրավագիտություն»՝ իրավագետի որակավորմամբ (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա)։ Անհրաժեշտ է նշել, որ «Իրավագիտություն» կրթական ծրագիրը տարանջատվում է հետևյալ դասակարգմամբ՝ վճարովի (առկա և հեռակա ուսուցմամբ), անվճար (առկա ուսուցմամբ) և հեռակա։ Անվճար համակարգում սովորում են այն ուսանողները, որոնք ուսմանը զուգընթաց գտնվում են ծառայության մեջ և ավարտելուց հետո պարտավորվում են համալրել ոստիկանության համակարգը նվազագույնը 5 տարով։ Վճարովի համակարգում սովորում են քաղաքացիական ուսանողները, իսկ հեռակա համակարգում կրթություն են ստանում ոստիկանության համակարգում արդեն գործունեություն ծավալող այն սպաները, ովքեր չունեն բարձրագույն կրթություն։

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ Կրթահամալիրի կրթական ծրագրերի ամբողջական փաթեթները կազմվել են 2019թ. (բարձրագույնի մասով)՝ առաջնորդվելով նույն թվականին հաստատված «ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում կրթական ծրագրերի մշակման կարգով»՝ չնայած դեռևս 2017 թվականի վերջնարդյունքներով մշակած են եղել առարկայական նկարագրերը։

Կրթահամալիրը 2022թ. իրականացրել է «Իրավագիտություն» բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների վերանայում կապված որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի հաստատումով (2021թ.)։ Փոխվել են առարկայացանկերը և կրեդիտները, առարկայական նկարագրերում ակնկալվող ուսումնառության արդյունքները, ՄԿԾ վերջնարդյունքները։ Նաև ավելացվել են գործնական ժամերի և պրակտիկայի տեսակարար կշիռները, այդուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Իրավագիտություն» հեռակա բաժնում դեռևս պրակտիկ բաղադրիչի ավելացման անհրաժեշտությունը շարունակում է նկատելի մնալ։

«Իրավագիտություն» ՄԿԾ-ի անվճար և վճարովի համակարգերի ուսումնական պլանների ուսումնասիրությունը թույլ է տալիս փորձագիտական խմբին արձանագրել, որ անվճար համակարգում ներկայացված առարկայացանկ, ժամաքանակը և մասնագիտական շեշտադրումները քրեաիրավական և քրեադատավարական առումով առավել ընդգծված են՝ հաշվի առնելով այս համակարգում սովորողների՝ ոստիկանության ծառայողներ լինելու հանգամանքը և նրանց կարիերայի զարգացման հեռանկարները։

Իրավագիտության կրթական ծրագրի ուսումնական պլանների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անվճար, վճարովի և հեռակա ուսուցման ծրագրերում առկա են կրեդիտների բաշխման տարբերություններ, ինչպես նաև տարբերվում է առարկայացանկը. անվճար ծրագրում ներառված է 61 առարկա, իսկ վճարովիում՝ 48։ Բացի այդ, անվճար ծրագրում նախատեսված է 4 պրակտիկա, մինչդեռ վճարովի ծրագրում՝ միայն 1-ը։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առարկայացանկի տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ առկա ուսուցման համակարգում ուսանողները ուսումնասիրում են նաև գաղտնիության ռեժիմով պահպանվող նյութեր և տվյալներ, որոնք վճարովի ուսուցման ծրագրի ուսանողներին հասանելի չեն։ Սակայն հարկ է նշել, որ թե՛ անվճար, թե՛ վճարովի ուսուցման ծրագրերում ուսանողների համար սահմանված կրթական ծրագրի վերջնարդյունքները նույնն են։

2020թ. հաստատվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «պարեկ» որակավորման պետական կրթական չափորոշիչը, որի համաձայն Կրթահամալիրը սկսել է իրականացնել տվյալ կրթական ծրագիրը: «Պարեկ» որակավորման ՊԿՉ-ն ներդրվել է ԱՄՆ Տեխաս նահանգի ոստիկանական ակադեմիայի ունեցած փորձի ուսումնասիրության արդյունքում և ՊԿՉ-ի մշակումը տեղի է ունեցել ԱՄՆ դեսպանատան հետ համատեղ ծրագրի շրջանակներում: Անհրաժեշտ է նշել, որ այս չափորոշիչը կիրառվում է միայն Կրթահամալիրում՝ քաղաքացիական անձանց համար որպես նախնական մասնագիտական կրթական ծրագիր (տևողությունը հինգ ամիս, տրամադրվում է դիպլոմ), իսկ գործող ոստիկանների համար, ովքեր ցանկանում են դառնալ պարեկներ՝ որպես վերապատրաստում (տևողությունը երկու ամիս, տրվում է վկայական): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական պլանի տևողությունը որոշվել է, հաշվի առնելով, որ ոստիկանության համակարգին բարեփոխումների իրականացման համար հրատապ անհրաժեշտ են համապատասխան քանակի մասնագետներ ամբողջ Հանրապետության համար: Ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսումնական պլանի տևողությունը, մոդուլներին հատկացվող ժամաքանակները սեղմ են: Կրթահամալիրը ապագայում (հիմնական կադրերի համալրումից հետո) հնարավորություն է տեսնում երկարացնելու կրթական ծրագրի իրականացման ժամանակահատվածը:

«Պարեկ» որակավորման ՄԿԾ-ի իրականացման ընթացքում բացահայտվել են ծրագրում ներառված մոդուլների ծրագրերի գործնական և տեսական ժամերի, մոդուլներին հատկացված ժամաքանակների խնդիրներ, ինչպես նաև մոդուլային արդյունքների կրկնություններ, ոչ արդիական թեմաներ: Հավաքագրված խնդիրները հիմք են հանդիսացել արդեն 2023 թվականին ՊԿՉ-ի ամբողջական լրամշակման համար: Անհրաժեշտ է փաստել, որ վերանայված չափորոշիչը հիմված է 70% գործնական և 30% տեսական ժամաքանակների հարաբերակցությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ները կազմելիս և վերանայելիս հաշվի են առնվել ամբիոնների դասախոսների և ամբիոնների պետերի կարծիքներն ու ուսումնասիրությունները, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ և իրավապահ համակարգի այլ ներկայացուցիչների հետ քննարկումները: Կրթահամալիրի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների բարելավման ու մշտադիտարկման գործում կարևոր դերակատարում են ունեցել կրթական ծրագրերի պատասխանատուները, մշտադիտարկման ենթակա կրթական ծրագրերի աշխատանքային խմբերը: Լավարկման համար նաև հիմք են հանդիսացել շրջանավարտների պարեկային ծառայության ընթացքում մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ գործատուից տրվող հետադարձ կապը, որը թույլ է տվել որոշել կրթական ծրագրի իրականացման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հասարակություն-պարեկ փոխգործակցության արդյունքում ի հայտ եկած հատուկ իրավիճակային դեպքերը:

Կրթական ծրագրերի ուսումնասիրության արդյունքում՝ փորձագիտական խումբը փաստում է, որ յուրաքանչյուր կրթական ծրագրում նշվում է ծրագրի նպատակը, դրա մշակման սկզբունքները, ծրագրի ուսումնական պլանը՝ առկա և հեռակա ուսուցման

տարբերակմամբ, առանձնացնում ծրագրի ուսումնական և հետազոտական կառուցամասերը, հստակեցված են ծրագրի ելքային արդյունքները, գնահատման մեթոդները, ուսուցման և դասավանդման մոտեցումները, շրջանավարտների մասնագիտական գործունեության բնութագիրը և կարիերայի հնարավորությունները: Առկա են նաև ՄԿԾ վերջնարդյունքների քարտեզագրումը դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդների հետ, ինչպես նաև և դասընթացների վերջնարդյունքների հետ: Կրթական ծրագրերի առարկայական նկարագրերում, ի թիվս այլնի, նշվում են համապատասխան մուտքային պահանջները, դասաժամերի բաշխումն ու տարվող աշխատանքները, կրթական ելքային արդյունքները, առարկայի թեմատիկ տրոհումը, գրականության ցանկը, թեմայի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

Ուսումնական պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում ենթադրվում են կամընտրական դասընթացների ընդգրկում, մինչդեռ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջիններս չեն իրականացվում:

«Իրավագիտություն» կրթական ծրագրի՝ տարբեր ամբիոնների կողմից կազմված առարկայական նկարագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ առանձին նկարագրեր (ՀՀ քաղաքացիական իրավունք, ՀՀ քրեական դատավարություն, ՀՀ իրավապահ մարմիններ և այլն) ներառված չեն ուսումնասիրության ենթակա նորմատիվ իրավական ակտերի ցանկը, ՀՀ վճռաբեկ, ՀՀ Սահմանադրական, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի շրջանակը: Բացի այդ, որոշ առարկաների գրականության ցանկում ներառված են առավելապես հայրենական և ռուսալեզու աշխատություններ (Միջազգային քրեական իրավունք, Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք և այլն), չեն պարունակում անգլիալեզու գրականություն:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմին մեթոդական աջակցություն տրամադրելու նպատակով 2018թ. մշակվել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման մեթոդական խորհրդատվություն» ձեռնարկը, իսկ 2022թ.՝ «Դասավանդման ինտերակտիվ մեթոդների առանձնահատկությունները. Մեթոդական խորհրդատվություն» ձեռնարկը:

«Իրավագիտություն» ՄԿԾ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագրերում առկա է «Ուսուցման և դասավանդման մոտեցումները» բաժինները, իսկ մասնագրերում ներկայացված են ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար կիրառվող դասավանդման և գնահատման մեթոդները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և դասալսումներից պարզ դարձավ, որ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդներում լայնորեն կիրառվում են դասախոսությունը, գործնական պարապմունքները, դեպքերի քննարկումները, դատախաղերը, անհատական և թիմային առաջադրանքները, բանավոր ելույթները, գրավոր

զեկույցները, իրավաբանական խնդիրները: Առանձին առաջադրանքերը միտված են ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանը, մասնավորապես՝ արտասահմանյան երկրների օրենսդրության ուսումնասիրությունները, իրավահամեմատական վերլուծությունները և այլն: Անվճար համակարգում սովորող ուսանողների մոտ առանձին վարժախաղերի միջոցով ձևավորվում են գործնական հմտություններ և կարողություններ, որոնք անհրաժեշտ կլինեն ոստիկանության համակարգում ծառայելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ նախնական մասնագիտական «Ոստիկանական գործ» կթական ծրագրում դասակները ձևավորվում են 25 հոգանոց խմբերով, որից 15-ը ոստիկանական համակարգի ներկայացուցիչներ են, իսկ՝ 10 քաղաքացիական անձիք: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասակների ձևավորման այս մեթոդաբանության նպատակն է քաղաքացիական անձանց հնարավորություն ընձեռել վերցնելու համակարգում գտնվող անձանց փորձառությունը: Իսկ ինչ վերաբերում է դասավանդման մեթոդներին, անհրաժեշտ է նշել, որ «Ոստիկանական գործ» կրթական ծրագրում կիրառվող դասավանդման մեթոդները քննարկվում և համաձայնեցվում են միջազգային գործընկերների հետ, ովքեր մշտադիտարկում են կրթական ծրագրի ընթացքը: Դասալսումներից պարզ դարձավ, որ ծրագիրն իրականացնելու համար կիրառվում են վարժախաղեր, դեպքերի վերլուծություններ, բանավոր իրավիճակային հարցումներ, տարբեր գործնական մոդուլների շրջանակներում հատուկ ֆիզիկական պատրաստության տեխնիկա-տակտիկական հնարքների ուսուցում և այլն: Հաշվի առնելով միջազգային փորձը, գործնական պարապմունքներում ներգրավվում են միանգամից երկու հրահանգիչ: Նույն ձևաչափով ներդրվել են դուալ դասախոսություններ:

Նախնական մասնագիտական ծրագրում ներդրված դասավանդման մեթոդները, գործնական առաջադրանքների և ոստիկանական համակարգից վերցված կոնկրետ դեպքերի հիման վրա սովորեցնելու դրական փորձը Կրթահամալիրը նաև տարածել է «Իրավագիտություն» ՄԿԾ-ում:

Փորձագիտական հանդիպումներից և վերլուծություններից պարզ դարձավ, որ «Ոստիկանական գործ» կրթական ծրագրի շրջանակներում հրահանգիչների և դասախոսական կազմի կողմից կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները ենթարկվում են նաև արտաքին գնահատման Միջազգային քրեական հետախուզության վերապատրաստման աջակցության ծրագրի (այսուհետ՝ ICITAP) կողմից: Կազմակերպության խորհրդատուների տրամադրած դիտարկումների հիման վրա փոխվում է դասավանդման մեթոդը, դասի կառուցվածքը և այլն:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Կրթահամալիրի 2022-2026 թվականների ռազմավարական պլան և գործողությունների կատարման ժամանակացույցով Կրթահամալիրը սահմանել է սովորողի և աշխատողի ակադեմիական ազատությունը: Կրթահամալիրում ուսանողների գնահատումը կազմակերպվում է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգ»-ի (այսուհետ՝

Գնահատման կարգ) և ըստ կրթական ծրագրերի մշակված համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերով:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր դասախոս մշակել է դասավանդվող առարկայի ելքային արդյունքների ձեռքբերմանը առավել համապատասխանող գնահատման գործիքակազմ և ուսանողների տրվող առաջադրանքներ, վերջիններս տեղ են գտել նաև առարկայական նկարագրում: Կրթահամալիրում հատկապես կարևորվում են գործնական կարողությունների գնահատումը՝ հաշվի առնելով դրանց անհրաժեշտությունը առօրյա մասնագիտական կյանքում: Գործնական հմտությունների ձևավորման տեսանկյունից կարևորում է ուսանողների կողմից անհրաժեշտ մակարդակով տիրապետելը, որի համար անհրաժեշտության դեպքում իրականացվում են լրացուցիչ պարապմունքներ:

Փորձագիտական խումբը փաստում է, որ կախված դասավանդվող առարկայի առանձնահատկությունից կիրառվում են գնահատման տարբեր մեթոդներ՝ գործնական աշխատանքների իրականացում դեպքի վայրերում, իրավիճակային խնդիրների վերլուծություններ, գրավոր և բանավոր ստուգումներ, թեստային առաջադրանքներ և այլն: Իրավագիտություն ՄԿԾ-ի դասալսման արդյունքներից պարզ դարձավ, որ երբեմն առանձին դասաժամերի ընթացքում բանավոր հարցումների գնահատականները դասախոսների կողմից չեն հրապարակվում, ուսանողները չեն տեղեկացվում գնահատականի վերաբերյալ: Բացի այդ տարբեր առարկաների շրջանակներում եզրափակիչ ստուգման ընթացքում փորձագիտական խմբին տրամադրված որոշ հարցատոմսերում առկա չեն յուրաքանչյուր հարցին տրամադրվող միավորը, տեսանելի չէ նաև թեստային աշխատանքների կշիռները:

Կրթահամալիրը ուսանողների համար ստեղծել է հատուկ սիմուլացիոն միջավայր (բնակարան, բանկ, սրճարան, VR լաբորատորիա), որտեղ գնահատվում է ուսանողի մասնագիտական մտածողությունը և վարքագիծը հենց աշխատանքի մեջ՝ դասավանդման ընթացքում կիրառելով ձևավորող գնահատում: Սիմուլյացիոն սենյակներում առկա են տեսաձայնագրող տեսախցիկներ, հեռարձակում հեռուստացույցի միջոցով, որին հնարավորություն ունեն հետևելու մյուս ուսանողները և դասավանդողը: Հատուկ գործողությունից հետո տեսագրության միջոց դասավանդողը և ուսանողները քննարկում և վերլուծում են ուսանողի կատարած աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը: Անհրաժեշտ է նաև նշել, որ հավաքագրված տեսանյութերը համալրում են բազան և հետագայում կարող են կիրառվել որպես ուսումնական նյութեր:

«Ոստիկանական գործ» ՄԿԾ-ում տեսական մոդուլների ամփոփիչ ստուգումը հիմնականում տեղի է ունենում առցանց թեստերի միջոցով, որի իրականացման համար Կրթահամալիրում առկա է համապատասխան քննական սենյակ համակարգիչներով, վերահսկող տեսաձայնագրիչներով: Գործնական մոդուլները ստուգվում են գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ առկա են գործնական առաջադրանքների գնահատման հստակ մշակված չափորոշիչներ, որոնք թույլ են տալիս ուսանողին գնահատել նույն ձևով՝ անկախ դասախոսի և հրահանգչի գործոնից:

Նախորդ հավատարմագրումից հետո «Իրավագիտություն» վճարովի համակարգում սովորող ուսանողները ամփոփիչ ատեստավորման քննությունների փոխարեն ներկայացնում

են ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր՝ ըստ «Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգի»: Կրթահամալիրում առկա են դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի, կուրսային աշխատանքների գնահատման մշակված չափանիշներ: Ավարտական աշխատանքները գնահատվում են 10 բալային համակարգով, իսկ մագիստրոսական թեզերը՝ 20: Ավարտական աշխատանքը գնահատվում է հետևյալ 3 չափանիշներով՝ ներկայացման որակ (4 միավոր), ձևակերպման որակ և կատարման ինքնուրույնություն (4 միավոր), արդիականություն (2 միավոր): Նույն չափանիշները վերաբերում են նաև մագիստրոսական թեզերին, փոխվում են միայն տրվող կշիռները: Փորձագիտական խումբը նշում է, որ սահմանված չափանիշները ընդհանրական են և հստակորեն չեն արտահայտում ուսանողին ներկայացվող պահանջները:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում ուսանողները ուսումնասիրում են վիճակագրական տվյալներ հանցագործությունների դինամիկաների վերաբերյալ, ինչպես նաև այդ ուղղություններով միջազգային փորձը, կատարում են համեմատություններ, վերլուծություններ և այլն, արդյունքում ուսանողները առաջարկում են իրավական դաշտում խնդրահարույց նվազագույնը երկու օրենսդրական կարգավորումներ և գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Անվճար և հեռակա համակարգերում սովորող ուսանողների ամփոփիչ ատեստավորումը տեղի է ունենում բանավոր քննությունների միջոցով, հարցաշարերի ուսումնասիրություն ցույց տվեց, որ հարցերից մեկը պարտադիր լինում է գործնական աշխատանք, սակայն հարցերի կշիռները ներկայացված չեն:

Կրթահամալիրում գործում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների գիտելիքների գնահատման ընթացակարգ և արդյունքների բողոքարկման կարգ, որը կանոնակարգում է ստուգման ձևերի ընթացակարգային խախտումների և արդյունքների բողոքարկման գործընթացը: Ուսանողների կողմից գնահատականի բողոքարկման պարագայում կրթահամալիրի պետի հրամանով ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արձանագրված բողոքարկման դեպքերը մեծաքանակ չեն:

Կրթահամալիրում ակադեմիական ազնվության երաշխավորման նպատակով գործում է «Ցիտման նորմերի պահպանման և գրագողությանը հակազդման մասին կանոնակարգը» (2019թ.), որի դրույթները տարածվում են Կրթահամալիրում հրապարակվող աշխատանքների վրա: Անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ում կիրառվող ակադեմիական ազնվության պահպանման հիմնական մեխանիզմը ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարների կողմից աշխատանքների ընթացիկ ստուգումն է (ստուգարք) նախքան ատեստավորումը, ակադեմիական ազնվությունը ստուգելու և ուսանողի կատարողականի պլանը գնահատելու համար: Ակադեմիական ազնվության այլ գործուն մեխանիզմներ ներդրված չեն:

Իսկ ինչ վերաբերվում է պրակտիկայի գնահատմանը, վերջիններս գնահատվում են ուսանողների կողմից լրացված պրակտիկայի օրագրերի, ուսանողի հաշվետվության և

բնութագրի հիման վրա: Անհրաժեշտ է նշել, որ պրակտիկաների գնահատման հստակ չափանիշներ ներդրված չեն:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

2018թ. ՄՈՒՀ-ի կողմից մշակվել է մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականություն և գործընթացն իրականացնելու ընթացակարգեր:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կրթահամալիրի Իրավագիտություն կրթական ծրագրերը և դրանց մասնագրերը մշակվել են՝ հաշվի առնելով գործընկեր բուհերում իրականացվող համանման ՄԿԾ-ները: Մասնավորապես 2022-2023 ուսումնական տարում համեմատական վերլուծություն է իրականացվել ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի և ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի իրավագիտության մասնագիտությունների ՄԿԾ-ների հետ: Արդյունքում վեր են հանվել կրթական ծրագրերում առարկայական ցանկերի տարբերությունները, ընդգծվել են ուսումնասիրության առարկա հանդիսացող կրթական ծրագրերում առկա դրական կողմերը և առաջարկություն է կատարվել Իրավագիտության ՄԿԾ-ի փաստաթղթերում կատարել անհրաժեշտ փոփոխությունները (օրինակ՝ առարկայական նկարագրերում տեղեկատվություն ներառել նախորդող և հաջորդող դասընթացների միջառարկայական կապերի վերաբերյալ) և ծրագրի բովանդակային լավարկումները (որոշ դասընթացների՝ այդ թվում կամընտրական դասընթացների ավելացում, որոնք դասավանդվում են Օմսկի ակադեմիայում):

Փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահնչություն ստեղծելու գործընթացում առաջանում են որոշ խնդիրներ՝ պայմանավորված ՆԳՆ գերատեսչական բուհ լինելու հանգամանքով: Վերջինս սահմանափակում է ուսանողների շարժունության հնարավորությունները, կապված ՀՀ ՆԳՆ կողմից սահմանված որոշ սահմանափակումների ուսանողների և դասախոսների ոստիկանությունում ծառայության առումով, ինչպես նաև այլ երկրների հետ համադրության պարագայում տարբեր օրենսդրական դաշտերի և իրավակարգավորումների շրջանակի, որոշ մասնագիտական առարկաների փոխարինումը և կրեդիտների փոխճանաչումը անհնար է դառնում: Շարժունության իրականացման խնդիրներից է նաև ուսանողների օտար լեզվի իմացությունը, որը գործնականում երբեմն անհնար է դարձնում այս գործընթացի իրականացումը:

Փոխադարձ այցերի և փորձի փոխանակման նպատակով 2020-2021թթ. Շվեդիայի թագավորության ոստիկանության ներկայացուցիչները, 2021-2022թթ.՝ ՌԴ, Վոլգոգրադի ակադեմիայի և Ֆրանսիայի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչները, 2022-2023թթ.՝ ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտի, Նիդերլանդների Թագավորության ոստիկանության ներկայացուցիչները, Չեխիայի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչները, ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտի և ՌԴ Ռոստովի

իրավաբանական ինստիտուտի ներկայացուցիչները այցելել են Կրթահամալիր: Կրթահամալիրի դասավանդողները 2020-2021թթ. այցելել են ՌԴ, Վոլգոգրադի ակադեմիա, ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտ, ՌԴ ՆԳՆ Օրյոլի իրավաբանական ինստիտուտ, իսկ 2022-2023թթ. ՌԴ, Ռոստովի իրավաբանական ինստիտուտ: Անհրաժեշտ է նշել, որ 2019-2023թթ. ընթացքում ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր չեն արձանագրվել:

Չնայած ակադեմիական շարժունության ծրագրերում Կրթահամալիրի մասնակցությունը մինչ օրս խնդրահարույց է եղել, այդուհանդերձ ՄԿԾ-ի միջազգայնացման ուղղությամբ իրականացվել են շոշափելի քայլեր, որոնցից մեկը «պարեկ» որակավորման ծրագրի վերջնարդյունքների համապատասխանեցումն է միջազգայնորեն ընդունված չափանիշներին: ՆԳՆ-հետ համատեղ ուսումնասիրվել են տարբեր երկրների ոստիկանական կադրերի պատրաստության փորձը՝ ինչպես տարածաշրջանային (Վրաստան) այնպես էլ Եվրոպական (Էստոնիա, Բուլղարիա, Մոլդովա) և Ամերիկյան փորձը, որը առնչվում է հասարակություն - ոստիկան փոխհարաբերությունների բարելավմանը՝ հաշվի առնելով որ այդ բարեփոխումների հիմքը անհրաժեշտ որակավորումներ ունեցող մասնագետների պատրաստությունն է: Կարելի է ընդգծել, որ վերոնշյալ աշխատանքների արդյունքում ՄԿԾ մոդուլների ուսումնառության արդյունքները ձևակերպելիս ներդրվել է ԱՄՆ ոստիկանական համակարգի փորձը (ուսումնասիրվել է ԱՄՆ-ի Տեխաս նահանգի ոստիկանական ակադեմիայի մեթոդաբանությունը): Ուսանողների, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները համապատասխանեցվել են ոստիկանական կադրերի պատրաստության միջազգային նորմերին, որի համար արտասահմանյան մասնագետները իրականացրել են վերապատրաստումներ տեղի դասախոսների հետ՝ փոխանցելով իրենց փորձառությունը, ոստիկանական գործողությունների հնարքների ուսուցման մեթոդաբանությունը, օրինակ ինչպես իրականացնել անվտանգ ձերբակալության գործողություն թե ոստիկանի, թե իրավախախտի համար և այլն:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Կրթահամալիրի՝ մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացները կազմակերպելու և համակարգելու համար ուսումնամեթոդական և զարգացման վարչության կողմից մշակվել և գիտխորհրդի կողմից հաստատվել են «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կրթական ծրագրերի մշակման կարգը» (2019թ.) և «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը» (2019թ.):

«ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ»-ով սահմանվում է Կրթահամալիրի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները՝ որպես կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմ: Կարգով նախատեսվում է կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն

իրականացնել երկամյա պարբերականությամբ, իսկ կրթական ծրագրերի պարբերական վերանայումը՝ հնգամյա պարբերականությամբ:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմ Կրթահամալիրը դիտարկում է Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի կողմից կրթական գործընթացի իրավիճակի ուսումնասիրությունը, ներքին շահակիցների բավարարվածության պարզման նպատակով իրականացվող հարցումները, դրանց հիման վրա իրականացվող վերլուծությունները: Հիշատակված Կարգի համաձայն՝ մշտադիտարկումս իրականացվում է դասալսումների, սովորողների և դասախոսների հետ խորհրդակցությունների, ուսանողներից և դասախոսներից հարցաթերթիկների միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություններից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022թ. նոյեմբեր ամսին Կրթահամալիրը ձեռնամուխ է եղել արտաքին շահակիցների՝ գործատուների շրջանում իրականացնել հարցումներ՝ շրջանավարտների մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների վերաբերյալ: Հարցումներ են ուղարկվել ՀՀ ոստիկանության կադրային քաղաքականության վարչություն, Երևան քաղաքի վարչություն և մարզային վարչություններ: Հարցումներում ներառվել են շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության, տեսական գիտելիքների իմացության, գործնական հմտությունների, կազմակերպչական, ստեղծագործական, հաղորդակցական կարողությունների, անձնային, կամային հատկանիշների և թիմային աշխատանք կատարելու ունակությունների գնահատման վերաբերյալ չափանիշները: Հարցումներին մասնակցել են ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների 54 շահակից:

Ըստ ինքնավերլուծության՝ վերջին 3 տարիների ընթացքում 3 ՄԿԾ-ների ուսումնական պլանները վերանայվել, լրամշակվել և հաստատվել են ընդհանուր առմամբ 17 անգամ, որի պատճառը, ըստ Կրթահամալիրի կողմից ներկայացված տեղեկատվության, ծրագրերի շարունակական լավարկումս է, ինչպես նաև դրանք օրենսդրական փոփոխությունների և զարգացող իրավահարաբերություններին համահնչեցումը:

Կրթահամլիրը նաև հետադարձ կապ է ստանում ՆԳՆ կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքների և միջազգային գործընկերների անկախ ուսումնասիրության արդյունքներից՝ Պարեկ որակավորման շրջանավարտների գործնական հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև հասարակական կարծիքի ուսումնասիրությունները, պարեկային ծառայության վերաբերյալ, որոնք իրենց հերթին հիմք է համդիսանում կրթական ծրագրի բարելավման և անհրաժեշտ դասընթացների վերջնարդյունքների վերանայման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրականորեն արձագանքում է, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ն իրականացրել է ՄԿԾ-ների բարելավման աշխատանքներ, արագ արձագանքել է պետության կողմից իրականացվող փոփոխություններին և շուկայի պահանջներին՝ ապահովելով կրթական ծրագրերի ճկունությունը և շարունակական զարգացումը: Գովելի է մասնավորապես ՄԿԾ-ներում գործնական բաղադրիչի մեծացումը և ՄԿԾ-ների մշակման գործընթացում ինչպես ներքին,

այնպես էլ արտաքին շահակիցների ներգրավումը: Փորձագիտական խումբը միայն նշում է, որ բարձրագույն կրթության մակարդակում կամընտրական առարկաների ներդրման և իրականացման անհրաժեշտությունը նամանավանդ վճարովի համակարգում, որը ուսանողներին հնարավորություն կընձեռի ընդլայնելու իրենց կարիերայի հնարավորությունները:

Իսկ ինչ վերաբերում է «Ոստիկանության գործ» ՄԿԾ-ում դասակների ձևավորման քաղաքականությանը՝ ոստիկանության համակարգի ներկայացուցիչների և քաղաքացիական անձանց համամասնությամբ, ապա անհրաժեշտ է նշել, որ այս մոտեցումը նպաստում է ուսանողների փորձի փոխանակմանը և քաղաքացիական անձանց ոստիկանական համակարգ ներգրավելու առավել դյուրին կազմակերպմանը, որը ընդգծվեց նաև ուսումնառողների կողմից: Դրական է, որ վերջին տարիներին ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել ինտերակտիվ մեթոդների կիրառմանը և իրական, պրակտիկ դեպքերի հիման վրա ուսուցման կազմակերպմանը, որը նպաստում են ուսանողների ակտիվ մասնակցությանը դասապրոցեսին և սեփական մասնագիտության նկատմամբ պատասխանատվության մեծացմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև «Ոստիկանական գործ» ՄԿԾ-ի շարունակականությունը, և հետագայում կարևորում է ՄԿԾ-ի ուսումնառության ժամանակահատվածի երկարացումը, քանի որ համակարգի ներկայացուցիչների վերապատրաստման գործընթացի ավարտից հետո դասակները համալրվելու են միայն քաղաքացիական անձանցով, և փորձի փոխանակում ոստիկանական համակարգում երկար փորձառություն ունեցող և քաղաքացիական անձանց միջև տեղի չի ունենալու: Ներկայիս սահմանված ժամանակահատվածը գուցե հնարավորություն չընձեռի ապահովելու սահմանված բոլոր վերջնարդյունքների ձեռքբերումը այն դասակներում, որոնք համալրված լինեն միայն քաղաքացիական անձանցով:

«Իրավագիտություն» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողներին տրամադրվող գրականությունն առավելապես հայրենական և ռուսալեզու է: Փորձագիտական խումբը կարևորում է, որ տարբեր առարկաների շրջանակներում ուսումնասիրվեն նաև անգլիալեզու գրականություն, որը կնպաստի ինչպես ուսանողների գիտելիքների հարստացմանը, այնպես էլ վերջիններիս անգլերեն լեզվի իմացության բարելավմանը: Դրական է նաև «Ոստիկանական գործ» նախնական մասնագիտական ՄԿԾ-ում միջազգային գործընկերոջ կողմից դասավանդման գործընթացի արդյունավետության գնահատումը, հետագայում այդ փորձառությունը կարող է տեղայնացվել Որակի ներքին ապահովման համակարգում և նման գնահատման գործընթաց կազմակերպվեն ՄՈՒՀ-ի բոլոր ՄԿԾ-ների համար:

Գովելի է Կրթահամալիրի որդեգրած մոտեցումը ուսանողների ընթացիկ գնահատումը մոդելավորված միջավայրում իրականացնելու ուղղությամբ, վերջինս ապահովում է ուսանողի մոտ մասնագիտական մտածողության և վարքագծի գնահատմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է գնահատման գործընթացի թափանցիկությունը, այդ իսկ պատճառով շեշտադրում է **«Իրավագիտություն»** ՄԿԾ-ում ուսանողների ձեռքբերած գնահատականների բարձրաձայնմանը կամ քննատոմսերում միավորների ներկայացման անհրաժեշտությունը, որը կնպաստի գնահատման չափանիշների հստակեցմանը:

Չնայած նրան, որ կրթահամալիրում ներդրված են ավարտական և մագիստրոսական թեզերի գնահատման որոշ չափանիշներ, այնուամենայնիվ վերջիններս շատ ընդհանրական են և հավելյալ մեկնաբանման, հստակեցման կարիք ունեն: Հստակ սահմանված չափանիշները կնպաստեն, որպեսզի ուսանողները հստակ պատկերացում կազմեն, թե իրենց առջև ինչպիսի պահանջներ են դրված: Ի հավելումս այս ամենի, փորձագիտական խումբը նշում է նաև ակադեմիական ազնվության պահպանմանն ուղղված հստակ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որը կբացառի արտագրությունները՝ ապահովելով ուսանողի գնահատման թափանցիկությունը:

Չնայած նրան, որ Կրթահամալիրը ՆԳՆ գերատեսչական ուսումնական հաստատություն է և կրթական ծրագրերի համահնչեցման մասով առաջ են գալիս որոշ սահմանափակումներ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը կարող է նախաձեռնողական լինել համագործակցության ուղիներ գտնելու ոստիկանության այլ ակադեմիաների, համալսարանների կամ իրավապահ մարմինների վերապատրաստման կենտրոնների հետ միջազգային մակարդակում, որը թույլ կտա ծրագրերում ստեղծել որոշ բաց պատուհաններ՝ ապահովել ուսանողների և դասախոսների մասնակցությունը փոխանակման ծրագրերին, համատեղ դասընթացներին և պրակտիկաներին: Հաշվի առնելով ապագա բարեփոխումները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ նման հնարավորություններ ապահովելը ուսանողների և դասախոսների համար կդառնա հնարավոր:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Կրթահամալիրում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն: Գովելի է նամանավանդ նախնական մասնագիտական «Ոստիկանական գործ» ՄԿԾ-ի մշտադիտարկման, խնդիրների համակողմանի բացահայտման և շարունակական բարելավման փորձառությունը: Փորձագիտական խումբը լիահույս է, որ այս դրական փորձառությունը հետագայում կներդրվի Կրթահամալիրում իրականացվող բոլոր կրթական ծրագրերում՝ ապահովելով ՄԿԾ-ների շարունակական բարելավում հիմնավորված և վերլուծված տվյալների վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ կրթահամալիրի ՄԿԾ-ները բխում են հաստատության առաքելությունից, համահունչ են ՈԱՇ-ին, Իրավագիտություն ՄԿԾ-ի դեպքում նաև ՈՈՇ-ին, ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացնում դասավանդման և ուսումնառության մեթոդների շարունակական գնահատման և արդիականացման ուղղությամբ, ներդրվել է ուսանողների ձևավորող գնահատման մոտեցում, ուսանողներին տրվող առաջադրանքները բխում են ոստիկանական համակարգում եղած խնդիրներից և կարիքներից, ՄՈՒՀ-ն ունի կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային առումով միջազգային պահանջներին համահնչեցման փորձառություն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ն համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: ՆԳՆ կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՆԳՆ կրթահամալիրում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Ուսանողներին հավաքագրելու նպատակով կազմակերպվում են ավագ դպրոցների աշակերտների ճանաչողական այցերը Կրթահամալիր, Կրթահամալիրի մի շարք աշխատակիցներ և ուսանողական խորհրդի անդամներ կազմակերպում են նաև այցելություններ տարբեր դպրոցներ՝ ներկայացնելով առկա կրթական ծրագրերը և հաստատության հնարավորությունները: Ուսանողները մասնակցում են նաև ամենամյա կրթական էքսպոների և ներկայացնում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գործունեությանը: Դիմորդների հավաքագրման մեխանիզմներ են համարվում նաև բուկլետների տարածումը, ՀՀ ոստիկանության կայքը՝ www.police.am, հեռուստատեսությունը, ռադիոն, էլեկտրոնային պարբերականները կամ լրագրերը, Կրթահամալիրի պաշտոնական կայքէջը՝ www.edupolice.am, և այլն:

Կրթահամալիրում ընդունելությունն իրականացվում է «Կրթահամալիրում դիմորդների ընտրության և ընդունելության» կարգով, վերջինս հաստատվել է 2015թ., իսկ 2023թ. գիտական խորհրդի որոշմամբ վերանայվել է: Նշված կարգը սահմանում է կրթահամալիրի բակալավրիատի և մագիստրատուրայի վճարովի ուսուցման ձևերում դիմորդների ընտրության և ընդունելության, ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնական կենտրոնում առկա վճարովի դասընթացներին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունելության կարգը:

Կրթահամալիրի ակադեմիայի «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի առկա վճարովի և մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա վճարովի ուսուցման համար ընդունելության տեղերը սահմանվում է ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով: Դիմորդներն ընդունելության քննություններ են հանձնում մրցութային երկու առարկաներից՝ հայոց լեզու (թելադրություն) և հայոց պատմություն (թեստ):

Մագիստրոսական կրթական ծրագրում ուսումը շարունակելու համար, դիմորդները պետք է ունենան իրավագիտության բակալավրի աստիճան և անցնում են հարցազրույց:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ «Իրավագիտություն» ՄԿԾ-ում ընդունելություն 2023թ.-ից չի իրականացվում: Այս հանգամանքով պայմանավորված 2020թ.-ից նկատելի է բակալավրիատի կրթական ծրագրում ուսանողների թվաքանակի ցածր ընդունելության ցուցանիշներ, առկա համակարգում սովորող ուսանողների քանակը 2019 թվականի համեմատ 2023 թվականին նվազել է 104-ով կամ 24%-ով (365-ի փոխարեն 276) : Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը 2019 թվականի համեմատ 2023 թվականին նվազել է 93-ով կամ 41%-ով (225-ի փոխարեն 132):

Իսկ ինչ վերաբերում է «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրով դիմորդների ընդունելությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջինս իրականացվում է ըստ «Ոստիկանության ուսումնական հաստատությունում դիմորդների ընդունելության կարգի» (հաստատված 2012թ.)։ Ընդունելությունն իրականացվում է մրցույթով, գնահատվում է դիմորդի ֆիզիկական պատրաստականությունը (ըստ սահմանված նորմատիվների) և մասնագիտական պիտանելիությունը (թեստավորում)։ Այս ծրագրում սովորելու կարևոր պարտադիր նախապայմաններից է նաև «B» կարգի վարորդական վկայականի ներկայացումը նախապես կամ մրցույթի անցնելուց 2 ամիս հետո վերջինիս ձեռքբերումը։

Ըստ Կրթահամալիրի տրամադրած տվյալների՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման կրթական ծրագրով 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության 1-ին հոսքի հարցազրույցի փուլի արդյունքում 435 ներկայացած դիմորդներից (որից 245-ը քաղաքացիական անձինք, 190-ը ոստիկանության ծառայողներ) բացասական միավոր ստացել է 72 դիմորդ կամ դիմորդների մոտ 17%-ը (որից 44-ը քաղաքացիական անձինք, 28-ը ոստիկանության ծառայողներ)։

ՀՀ տարածքում պարեկային ծառայության ամբողջական գործարկման շրջանակներում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում 2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի սեպտեմբերը անցկացվել է 4 հոսքերի 5-ամսյա դասընթացներ։ Ընդհանուր առմամբ 2445 ընդունվածներից դասընթացն հաջողությամբ ավարտել է 2167-ը կամ մոտ 89%-ը։

Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ Կրթահամալիրից դուրս մնացած ուսանողների թիվը վերջին 5 տարիների ընթացքում աճում է, եթե 2019թ. այն կազմել է 5.1%, ապա 2023թ. հասել է 12.3%-ի։ Միևնույն ժամանակ վերականգնված ուսանողների թիվը տատանվում է միջինում 1-2%-ի շրջանում։

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր։

Սովորողների կրթական կարիքների բացահայտման նպատակով Կրթահամալիրում պարբերաբար իրականացվում են հարցումներ, որոնք ուղղված են բացահայտելու մասնագիտական կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության մակարդակը, սովորողների կողմից ուսումնական գործընթացն ապահովող նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատմանը և այլն։ Հարցաշարերն իրենց մեջ պարունակում են նաև «առաջարկություններ» բաժինը, որտեղ ուսանողները ազատ շարադրում են իրենց կարիքները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների առաջարկով կառուցվել է առանձին լսարան, որը ծառայում է որպես դատախաղերի սենյակ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմ է նաև Ուսանողական խորհուրդը, որոնց անդամները ներգրավված են նաև կրթահամալիրի գիտական խորհրդում և իրավագիտության ֆակուլտետի խորհրդում (խոսքը վերաբերում է միայն ակադեմիայի ուսանողներին), այստեղ ուսանողներն ունեն 25% ներգրավվածություն։ Վերջիններս մասնակցում են ուսանողներին տրամադրվող զեղչերի, կրթաթոշակների, ՄՈԳ-երի և ուսանողներին վերաբերող այլ թեմաների քննարկումներին։

Խորհուրդներին անդամակցող ուսանողներին ընտրում են կուրսերը՝ կուրսերի պետերի միջնորդությամբ:

Ուսանողներին աջակցություն տրամադրելու նպատակով բոլոր կուրսերին կցված են կուրսի պետեր, վերջիններս ներգրավվում են դասախոսական կազմից: Մշակվել է նաև կուրսի պետերի խորհրդատվական աշխատանքների վերաբերյալ կարգ, որը հաստատվել է Կրթահամալիրի պետի հրամանով: Խորհրդատուները պատասխանատվություն են կրում իրենց կուրսի համար, բարձրաձայնում են սովորողների կրթական կարիքները և օգնում են նրանց հարմարվել ուսումնակրթական համակարգին:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի 2019 թվականի հրամանով հաստատվել է «Լրացուցիչ խորհրդատվական գործունեության իրականացման կարգը»: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի կողմից կանոնակարգված (ըստ հաստատված ժամանակացույցի) խորհրդատվական աշխատանքներ ուսանողների հետ իրականացվում են հիմականում նախաքննական շրջանում: Անհրաժեշտ է նշել, որ անվճար համակարգում սովորող ուսանողները գտնվում են նաև ոստիկանական ծառայության մեջ և իրականացնում են հերթապահություններ կրթահամալիրի տարածքում՝ երբեմն բաց թողնելով որոշ դասաժամեր: Բաց թողնված դասերը լրացվում են ըստ ուսանողների նախաձեռնությամբ՝ լրացուցիչ խորհրդատվությունների միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում ուսանողների համար պարբերաբար կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ հրավիրյալ բանախոսների հետ, ովքեր ուսանողների հետ կիսվում են իրենց մասնագիտական փորձառությամբ: Բանախոսները ՀՀ-ում գործունեություն ծավալող մասնագետներ են՝ հիմականում պետական կառավարման ապարատից (դատավորներ, իրավաբաններ և այլն) և կրթահամալիրի գործընկեր կառույցներից:

Ուսանողների օտար լեզվի իմացության բարելավման նպատակով ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են որոշ լրացուցիչ դասընթացներ British Council կազմակերպության հետ համագործակցությամբ, որի արդյունքում սովորողներից որոշները կարողանում են դատական պրակտիկաները վերլուծել անգլերենով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կրթահամալիրը նաև աջակցություն է տրամադրում «Ոստիկանական գործ» ՄԿԾ-ում սովորող ուսանողներին ձեռք բերելու «B» կարգի վարորդական վկայական՝ կազմակերպելով ուսանողների համար ավտոմեքենայի վարման դասընթացներ:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ը մշակել է «Կրթահամալիրում սովորողների կողմից կրթահամալիրի ղեկավարությանը և վարչակազմին

դիմելու ուղեցույց», որում, ըստ ստորաբաժանումների և սովորողների կարիքների տեսակների, սահմանվում է համապատասխան ժամանակացույց վերջիններիս դիմելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սահմանված ժամանակացույցին ուսանողները մի մասը ծանոթ չեն, այդուհանդերձ ուսանողներն, ըստ անհրաժեշտության, կարող են ցանկացած ժամանակ դիմել վարչական աշխատակազմին: Նաև պարզվեց, որ սովորողները պարբերաբար հանդիպումներ են ունենում Կրթահամալիրի ղեկավար կազմի հետ, որի ժամանակ ներկայացնում են իրենց կարծիքներն ու առաջարկությունները ուսումնական պարապմունքների անցկացման վերաբերյալ:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում պետական պատվերի շրջանակներում անվճար հիմունքով սովորող ուսանողները կրթությունն ավարտելուց հետո անմիջապես անցնում են ծառայության: Փորձագիտական այցից և ներքին, արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կրթահամալիրի վճարովի համակարգում սովորողները առաջնահերթություն ունեն ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու հարցում՝ այլ բուհերի շրջանավարտների համեմատությամբ: Կրթահամալիրի հեռակա ուսուցման ձևում սովորողները արդեն իսկ հանդիսանում են ոստիկանության ծառայողներ և համատեղում են ուսման հետ:

Կրթահամալիրի շրջանավարտները պաշտոններ են զբաղեցնում ՀՀ ուժային և այլ գերատեսչություններում (ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և այլն): Ըստ Կրթահամալիրի բակալավրի առկա, հեռակա անվճար համակարգի, մագիստրատուրայի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի շրջանավարտներից բոլորը (100%) ունեն զբաղվածություն պետական ապարատում, միայն բակալավրի առկա վճարովի համակարգի շրջանավարտներն են, ովքեր ունեն 60-70% զբաղվածություն:

Կրթահամալիրում գործում է «Pro bono» իրավաբանական կլինիկա, որը իրավաբանական անվճար խորհդատվություն է տրամադրում ՀՀ քաղաքացիներին: «Իրավագիտություն» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսի բարձր առաջադիմություն ունեցող սովորողները հնավորություն ունեն ընդգրկվելու կլինիկայի աշխատանքներում՝ ձեռք բերելու մասնագիտական գործնական կարողություններ: Կլինիկայի աշխատանքներում ներգրավվելու համար ուսանողը հանձնում է հարցազրույց, որի արդյունքում ընտրված սովորողների հետ իրականացվում է չորսշաբաթյա տևողությամբ դասընթաց, որից հետո ուսանողը հանձնում է քննություն՝ հաջողություն գրանցած ուսանողները իրավունք են ստանում տրամադրելու իրավաբանական խորհրդատվություն քաղաքացիներին: Անհրաժեշտ է նշել, որ ուսանողներին տրամադրվող կարիերայի այլ ծառայություններ առկա չեն:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում սովորողները ներգրավված են հետազոտական աշխատանքներում այնքանով, որ «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողները հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրվում են հոդվածներ, մասնակցում են տարբեր ուսանողական գիտաժողովների: Կրթահամալիրի որոշ ամբիոններում (որոնք սպասարկում են «Իրավագիտություն» ՄԿԾ-ն) գործում են գիտական խմբակներ՝ ուսանողների ներգրավմամբ, որը խրախուսում և օժանդակում է ուսումնառողներին գիտական հոդվածներ գրելու ուղղությամբ: Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ 2022-2024թթ. ուսանողները տպագրել են 8 հոդված դասախոսի հետ համահեղինակությամբ:

«Իրավագիտություն» կրթական ծրագրի վճարովի համակարգում սովորող ուսանողները որպես հետազոտական աշխատանքներ գրում են նաև կուրսային, ավարտական աշխատանքներ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողներն իրենց իրավունքների և պարտականությունների մասին առաջին հերթին տեղեկանում են ուսանողի և Կրթահամալիրի միջև կնքվող պայմանագրից, սովորողների ուղեցույցից (հրապարակված 2022թ.) :

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որի կանոնադրությամբ սահմանվում է հանձնառությունը ուսանողների իրավունքների պաշտպանության: «Ուսանողական խորհուրդը» ընտրովի, ներկայացուցչական մարմին է, որին անդամակցում է 22 ուսանող կրթահամալիրի տարբեր կրթական ծրագրերից և կուրսերից: Խորհրդի նախագահի պաշտոնն ընտրովի է, վերջինս նշանակում է խորհրդի քարտուղար և հանձնաժողովների ղեկավարներ: ՈՒԽ նախագահն ի պաշտոնե Կրթահամալիրի խորհրդի անդամ է և հաշվետու է խորհրդի անդամներին: Փորձագիտական այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ ՈՒԽ առաջարկությամբ վերանայվել է բակալավրիատի և մագիստրատուրայի գնահատման համակարգը՝ 5 միավորից դառնալով 20 միավոր, քննարկվել է ուսանողների ներքին շարժունության ապահովման հնարավորությունները և այլն:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ուսանողներին մատուցվող կրթական ծառայությունները անցնում են ներքին և արտաքին (արտաքինը վերաբերում է միայն «Պարեկ» որակավորմանը) գնահատում: ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ներքին գնահատման նպատակով իրականացվում են «Կրթահամալիրում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում», «Կրթահամալիրի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատում», «Կրթահամալիրից ներքին շահակիցների բավարարվածության հարցում»: Անհրաժեշտ է նշել, որ ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների արդյունավետությունը ՄՈՒՀ-ը չի գնահատում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կողմից իրականացվող աշխատանքները ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության ուղղությամբ: Ուսանողների հավաքագրման ուղղությամբ ներդրված են հստակ մեխանիզմեր և իրականցվում է կանոնակարգված գործընթաց: Չնայած նրան, որ ՄՈՒՀ-ում սովորողների թիվը շարունակաբար նվազում է, այնուամենայնիվ փորձագիտական խումբը հաշվի է առնում ՄՈՒՀ-ի՝ գերատեսչական լինելու կարգավիճակը և բարեփոխումների փուլում լինելու հանգամանքը:

Գովելի է, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կարիքների վերհանման հստակ մեխանիզմեր և գործընթացներ, որոնք թույլ են տալիս շարունակաբար հաղորդակցության մեջ լինել ուսանողների հետ, բացահայտել նրանց կարիքները և գտնել դրանց համարժեք լուծումներ, այս մոտեցումը ապահովում է ուսանող-ՄՈՒՀ համագործակցություն և շարունակական բարելավում:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին տրամադրվող լրացուցիչ խորհրդատվություններին, ապա փորձագիտական խումբը դրական է համարում ոլորտը կարգավորող կարգի առկայությունը, այդուհանդերձ խումբը նաև նշում է, որ ուսանողների կողմից ծառայության պատճառով բաց թողնված դասաժամերը անհրաժեշտ է լրացնել պարտադիր ձևով, քանի որ վերջինս կարող է հանգեցնել ուսանողի անհավասար ակադեմիական առաջադիմությանը՝ կախված ուսանողի նախաձեռնողականությունից:

Դրական է, որ Կրթահամալիրի գերատեսչական լինելու հանգամանքը նպաստում է ուսանողների կարիերայի զարգացմանը, նամանավանդ անվճար համակարգում սովորողները ուսանողական տարիներից համարվում են ոստիկանական համակարգի աշխատակիցներ: Այս մոտեցումը նպաստում է շրջանավարտների զբաղվածության բարձր ցուցանիշների ապահովմանը: Ինչ վերաբերում է վճարովի համակարգում սովորող ուսանողներին, ապա այս դեպքում ևս Կրթահամալիրի ուսանողները մրցակցային առավելություն ունեն պետական պաշտոններ զբաղեցնելու տեսանկյունից, ինչը նույնպես նպաստում է շրջանավարտների զբաղվածության բարձր ցուցանիշներին:

Իրավագիտություն ՄԿԾ-ն սպասարկող ամբիոններից որոշներում առկա է դրական փորձ՝ ուսանողների ներգրավվելու հետազոտական աշխատանքներում, որը տեղի է ունենում ամբիոնում գործող գիտական խմբակների միջոցով, որոնց միանում են ուսանողները, սակայն կարևոր է նշել, որ դրական փորձի տարածելի դարձնելը ավելի շատ ամբիոնների շրջանակներում դրական ազդեցություն կունենա ՄՈՒՀ-ի գիտահետազոտական ուղղությամբ քայլերի տարվող աշխատանքների վրա:

ՄՈՒՀ-ում սովորողների կրթական միջավայրի ձևավորման տեսանկյունից կարևոր դեր ունի Ուսանողական խորհուրդը, այս մասով դրական հանգամանք է, որ խորհրդի առաջարկով ՄՈՒՀ-ում փոփոխվել է գնահատման համակարգը, ինչը փաստում է, որ ըստ անհրաժեշտության խորհուրդը ունի մեխանիզմեր որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալու համար:

Դրական է, որ Կրթահամալիրում ներդրված են ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմեր, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ խորհրդատվական լրացուցիչ ծառայությունների արդյունավետությունը

ՄՈՒՀ-ը նույնպես կարիք ունի գնահատելու, որը հնարավորություն կընձեռի գնահատելու՝ որքանով են տրամադրված խորհրդատվությունները նպաստում ուսանողների ակադեմիական առաջադիմությանը, ինչպես նաև կբարձրացնի խորհրդատվական գործընթացի արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ Կրթահամալիրն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործող կարգեր, առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանման և որոշումների վրա ազդեցություն ունենալու մեխանիզմներ, առկա է ուսանողների կողմից վարչական կազմին դիմելու դրական փորձառություն, ուսանողներին տրամադրվում են լրացուցիչ դասընթացների մասնակցելու հնարավորություններ, առկա է շրջանավարտների զբաղվածության բարձր մակարդակ, ինչը նպաստում է ուսանողների կարիերայի առաջընթացին, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: ՆԳՆ կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Կրթահամալիրում իրականացվող կրթական ծրագրերն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր: Կախված ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի ներգրավվածության բնույթից՝ ընտրության քաղաքականությունն ու ընթացակարգերը տարբերակվում են:

Կրթահամալիրում հաստիքային դասախոսները դիտարկվում են որպես ոստիկանության ծառայողներ: Ծառայության անցնելը, այլ ծառայության տեղափոխվելը, ծառայությունից ազատվելը կարգավորվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով: Նախորդ հավատարմագրումից հետո կրթահամալիրում վերանայվել են պայմանագրային հիմունքներով դասախոսի ընդունման պահանջները, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով 2021թ. հաստատվել է «ՀՀ

ոստիկանության կրթահամալիրում դասախոսներին պայմանագրային հիմունքներով աշխատանքի ընդունման գործընթացն իրականացնելու կարգը»: Ըստ կարգի՝ պայմանագրային հիմունքներով Կրթահամալիրում դասավանդելու համար դասախոսի վերաբերյալ ամբիոնի պետը տալիս է համապատասխան կարծիք, որը վերաբերվում է հավակնորդ դասախոսի մասնագիտական ունակություններին, մանկավարժական կարողություններին, աշխատանքային ստաժին և հրատարակված ուսումնական, ուսումնամեթոդական և գիտական աշխատանքներին, որից հետո եռօրյա ժամկետում նրա հետ կարող է կնքվել պայմանագիր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առանձին դեպքերում դասախոսներին հնարավորություն է ընձեռնվում մի քանի դաս վարել, ինչը հնարավորություն է տալիս հասկանալ դասախոսի գիտամանկավարժական հնարավորությունները հետագայում համագործակցությունը շարունակելու նկատառումներից ելնելով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրավագիտություն մասնագիտության շրջանակներում դասավանդվող առարկաների դասախոսներն առավելապես ներգրավվում են մասնագիտական հանրույթից անձնական կապերի միջոցով, այս եղանակը, ըստ ՄՈՒՀ-ի, հնարավորություն է ընձեռում Կրթահամալիրի ՊԴ կազմում ընդգրկել տեսական և գործնական հարուստ գիտելիքներով օժտված անձանց, ովքեր իրավաբանական շրջանակներում ունեն բազմամյա փորձ և հեղինակություն:

Նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Պարեկ» որակավորման մասնագիտության համար պահանջվող դասախոսական կազմի ընտրության նպատակով Կրթահամալիրում 2020թ. սկսած կազմակերպվում է բաց մրցույթ: Անհրաժեշտ է նշել, որ մրցույթ/հայտարարելու խորհրդատվություն ՄՈՒՀ-ին տրամադրվել է նաև նախորդ հավատարմագրման արդյունքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մրցույթը հաղթահարած լավագույն դասախոսները ներգրավվում են նաև Կրթահամալիրի կողմից իրականացվող այլ ծրագրի շրջանակներում համապատասխան առարկաներ դասավանդելու: Դասավանդելու համար ներգրավվել են նաև «պարեկ» որակավորում ստացած շրջանավարտները, ովքեր արդեն ունեն պրակտիկ աշխատանքային փորձառություն:

Համաձայն Կրթահամալիրի կողմից տրամադրած տվյալների՝ ուսումնական կենտրոնի դասախոսական կազմում ընդգրկված է 61 դասախոս, քոլեջում՝ 44, բակալավրիատում՝ 83, իսկ մագիստրատուրայում՝ 22, ընդ որում՝ դասախոսական կազմում ընդգրկված դասախոսների գերակշիռ մասը համատեղում է պրակտիկ գործունեությունը մանկավարժական և գիտամանկավարժական գործունեության հետ: ՊԴ կազմից 36-ը գիտությունների թեկնածուներ են, որից 7-ն ունեն դոցենտի պաշտոն, իսկ 3-ը գիտությունների դոկտորներ են:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՀՀ ոստիկանության պետի 15.05.2015թ. թիվ 1105-Ա հրամանով հաստատված ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջների՝ Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմում

ընդգրկված են գիտամանկավարժական գործունեություն իրականացնող հետևյալ պաշտոններ զբաղեցնող ծառայողները՝ ուսումնական ասիստենտ, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի (կրթաճյուղի) և ֆակուլտետի պետեր, նրանց տեղակալներ: Հիշատակված փաստաթղթի շրջանակներում հստակ նախանշված են յուրաքանչյուր պաշտոնի նշանակման համար ներկայացված պահանջները, ի թիվս այլնի, ներառելով գիտական աստիճանը, կոչումը, գիտամանկավարժական աշխատանքի ստաժը և այլն:

Պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջներն ամրագրվել են նաև բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագրերում, որը բովանդակում է ինչպես **մասնագիտական** (առարկայի խորը իմացություն, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, առարկայական չափորոշիչների և ծրագրերի իմացություն, դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթության առկայություն, առարկայի շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին իմացություն և այլն), այնպես էլ **անձնային** (տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու, լսարանին համոզելու, ուսումնառողների ներուժի գնահատման կարողություններ և այլն), **մանկավարժական** (մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, ուսանողների քննադատական մտածողության զարգացում, սովորողների ուսումնական-ճանաչողական գործունեության խթանում), **գիտահետազոտական** (գիտական աստիճանի/կոչման առկայություն, մասնակցություն գիտաժողովներին, հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամություն և այլն), **կազմակերպչական** (բանավեճեր, քննարկումների կազմակերպելու կարողություն, ուսանողների ակտիվությունը խթանելու կարողություն և այլն), **հաղորդակցական** (խոսքի բարձր մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն, օտար լեզվով մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն և այլն) պահանջները:

Փորձագիտական այցից և հանդիպումներից պարզ դարձավ, որ Կրթահամալիրը դասախոսական կազմի ընտրության մեջ կարևորում է ոլորտում գործնական փորձառություն ունեցող մասնագետների ներգրավումը:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կրթահամալիրում դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է ներքին և արտաքին (միայն պարեկ որակավորման համար) կառույցների կողմից:

Ներքին գնահատումը տեղի է ունենում Կրթահամալիրի «ՀՀ ոստիկանության Կրթահամալիրում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման կարգ»-ի (2020թ.) պահանջներին համապատասխան: Ըստ վարկանիշավորման կարգի՝ ՄՈՒՀ-ը հաշվի է առնում դասախոսական կազմի կատարած ուսումնամեթոդական, մեթոդական, կազմակերպչական, գիտական, ինչպես նաև սովորողների հետ իրականացվող աշխատանքները և այլն: Յուրաքանչյուր տիրույթի համար սահմանված են արդյունքներ և դրանց տրվող միավորներ,

օրինակ՝ արտասահմանում տպագրված մեկ դասագիրքը 2 միավոր, մենագրություններ 4 միավոր և այլն։ Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին դասախոսն ամբիոնի պետի հաստատմանն է ներկայացնում իր անհատական աշխատանքային պլանը, որտեղ ներկայացված են դասախոսի իրականացրած աշխատանքը, ըստ սահմանված վարկանիշի ամբիոնը վերլուծում և միջին թվաբանական ցուցանիշի հաշվարկվում է դասախոսի ձեռքբերած միավորները։ Բարձր ցուցանիշներ ունեցող դասախոսները ստանում ֆինանսական խրախուսումներ։

Պրոֆեսորադասախոսական կազմի արդյունավետության գնահատման մեխանիզմներից է դասալսումները։ Դասալսումներ իրականացնում են պետի առաջին տեղակալը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետը ակադեմիայի պետը, համապատասխան ամբիոնները և այլն։ Ղեկավարության կողմից իրականացված դասալսումների արդյունքների վերաբերյալ կազմվում է համապատասխան ակտ, որը ստորագրում է դասալսում իրականացնողը և դասախոսը։ Անհրաժեշտ է նշել, որ դասալսումների և ուսանողների հարցումների արդյունքները հանդիսանում են վարկանիշավորման հինգերորդ բաղադրիչը, որի միավորային գնահատումը տրվում է ամբիոնի պետի կողմից։, սակայն մեկնաբանված չէ միավորի ձևավորման տրամաբանությունը։ Դասալսման արդյունքները նաև քննարկվում են ամբիոնային նիստերում։

Կրթահամալիրում պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատման մեխանիզմներից է նաև գիտահետազոտական գործունեության գնահատումը, ինչն իր մեջ ներառում է դասախոսի հեղինակությամբ տպագրված գիտական հոդվածները, մենագրությունները, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, ինչպես նաև մասնակցությունը ամբիոններում կազմակերպվող գիտական սեմինարներին, կլոր սեղան-քննարկումներին։

Դասախոսական կազմի գնահատման մեկ այլ մեխանիզմ է անանուն հարցումները սովորողների կողմից։ Հարցումների միջոցով գնահատվում է մատուցված նյութի մատչելիությունը, այն յուրացնելու շրջանակներում դասախոսի օժանդակության առկայությունը, դասախոսի ժամանակի կառավարման հմտությունները և այլն։

Փորձագիտական հանդիպումներից ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պարեկներին դասավանդող հրահանգիչները և դասախոսական անձնակազմը գնահատվում են նաև արտաքին կազմակերպության՝ ICITAP-ի կողմից։ Կազմակերպությունը ներգրավվել է այս աշխատանքներում ԱՄՆ դեսպանատան միջնորդությամբ։ Միջազգային փորձագետները դիտարկում և գնահատում են դասախոսի դասին պատրաստվելու կարողությունը, դասի ընթացքում ժամանակի կառավարումը, դասի պլանին հետևելը, տարբեր հրահանգիչների կողմից կիրառվող նույն մեթոդաբանությանը հետևելը և սահմանված արդյունքների ձեռքբերումը, պարեկին մատուցվող ժամանակակից տեխնիկաները և այլն։ Արդյունքում ՄՈՒՀ-ին տրամադրվում է զեկույց բացահայտված ուժեղ և բարելավման ենթակա կողմերի վերաբերյալ։ Ներկայացված արդյունքների հիման վրա որոշում է կայացվում հրահանգչի կամ դասախոսի վերապատրաստման, ինչպես նաև վերջիններիս աշխատանքը շարունակել կամ չշարունակելու վերաբերյալ։

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում ներդրված չէ ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստումների և կարողությունների զարգացման հստակ քաղաքականություն, ծրագրեր և ժամանակացույց: Դասախոսական կազմի մասնագիտական կարիքների բացահայտման և պլանավորված վերապատրաստումների կազմակերպման ուղղությամբ ակտիվ քայլեր չեն իրականացվում: Վերապատրաստումների մեծ մասը տեղի է ունենում ըստ ՄՈՒՀ-ի հնարավորության՝ հիմնականում հրավերքների դեպքում: Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ վերջին տարիներին իրականացվել են հետևյալ վերապատրաստումները՝ 2023թ. CEPOL-ի շրջանակներում կազմակերպվել է «Police English» դասընթացը, որին մասնակցել է ուսումնաօժանդակ անձնակազմից մեկ ծառայող, 2023 թ. նաև Կրթահամալիրի հինգ ծառայողներ մասնակցել են նույն հարթակի առցանց հետևյալ դասընթացներին. «EMPACT for the EaP Region», «Money laundering», «Fraud on Social Media», իսկ 2024 թ. CEPOL-ի կողմից կազմակերպված դասընթացին մասնակցել է երկու դասախոս և մեկ ծառայող ուսումնաօժանդակ անձնակազմից: Նաև մեկ աշխատակից 2024թ.մասնակցել է փոխանակման ծրագրի Միլանում՝ ուսումնասիրելու կիբեռ ստորաբաժանումների համար ծառայողների պատրաստման գործընթացը:

Դասավանդողների կատարելագործման ուղղությամբ այլ է պատկերը Նախնական մասնագիտական «Ոստիկանական գործ» ՄԿԾ-ում, այս ծրագրի շրջանակներում դասախոսական կազմը մշտադիտարկվում է միջազգային կազմակերպության կողմից և կարիքի բացահայտման պարագայում դասավանդողը անցնում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային վերապատրաստում: Անհրաժեշտ է նշել, որ դասախոսական անձնակազմի վերապատրաստումների կամ կարողությունների զարգացման դասընթացների վերաբերյալ համակարգային տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն տեղի չի ունենում:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը երաշխավորելու համար Կրթահամալիրում իրականացվում են մի շարք միջոցառումներ, դրանցից են աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը, ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը գերազանցելու դեպքում մեկանգամյա հավելավճարների տրամադրումը, դասախոսական կազմը սեփական շրջանավարտներով համալրելը և այլն:
Ըստ Կրթահամալիրի տրամադրած տվյալների՝ ՊԴ կազմը վերջին երեք տարիների ընթացքում համալրվել է 5 անձով: Աշխատանքից ազատվել են 10-ը, որոնցից 5-ը սահմանային տարիքը լրանալու, 2-ը կենսաթոշակի անցնելու, 2-ն այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, 1-ը՝ այլ պատճառով: ՊԴ կազմի 39%-ը Կրթահամալիրի շրջանավարտներն են: ՊԴ կազմի միջին տարիքը 45-ն է, իսկ միջին ստաժը կրթահամալիրում՝ 14 տարի: ՊԴ կազմի կայունության նպատակով ՄՈՒՀ-ը խթանում է նաև գիտական կոչումների և աստիճանների ձեռքբերումը,

2023 թվականի դրությամբ ՆԳՆ Կրթահամալիրն ունի 3 ասպիրանտ, որից 1-ը արդեն իսկ դասախոսական անձնակազմի ներկայացուցիչ է, իսկ 2 ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից: Անհրաժեշտ է նաև նշել, որ գիտական կոչումի և աստիճանի ձեռքբերման համար դասախոսը ստանում է վարկանիշավորման միավոր: Այս ամենով հանդերձ փորձագիտական խումբը նշում է, որ Կրթահամալիրը որոշակիորեն ունի հոսունության խնդիր, թափուր են որոշ դասախոսների, ամբիոնների, ֆակուլտետների պետերի պաշտոններ: Հոսունությունը պայմանավորված է ՆԳՆ-ում կամ պետական համակարգում առավել բարձր պաշտոնների զբաղեցմամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կրթահամալիրում առկա է նաև դասախոսական կազմ բազա, որտեղ ներառված են աշխատած և աշխատող բոլոր մասնագետների տվյալները, և ըստ անհրաժեշտության, ընտրվում են ՊԴ կազմի ներկայացուցիչներ՝ որևէ առարկայի դասախոսի փոխարինման կամ նոր դասախոս համալրելու նպատակով:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված են գիտամանկավարժական գործունեություն իրականացնող հետևյալ պաշտոնները՝ ուսումնական ասիստենտ, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: Ուսումնական ասիստենտի հաստիքը դիտարկվում է հարթակ սկսնակ կադրերին կայանալու և աստիճանաբար դասախոսական գործունեության անցնելու և դասախոսի, ավագ դասախոսի հաստիքի նշանակվելու համար:

Նախորդ հավատարմագրումից հետո ՊԴ կազմի որակավորման բարձրացմանը խթանելու նպատակով սահմանվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքային աշխատողներին գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման համար ամսական հավելավճար սահմանելու կարգը, որի հիման վրա դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող աշխատակիցները խրախուսվում են ամենամսյա 25.000դրամ հավելավճարով, իսկ գիտությունների թեկնածուի և դոկտորի կոչում ունեցողները՝ 50.000 դրամ հավելավճարով, եթե իրականացնում են լսարանային աշխատանք և տպագրում են տարեկան նվազագույնը մեկ գիտական հոդված:

Ըստ Կրթահամալիրի տրամադրած տվյալների 2020թ. ընթացքում Կրթահամալիրի հիմական պրոֆեսորադասախոսական անձնակազմից խրախուսվել են 15-ը, 2021թ.՝ 10-ը, 2022թ.՝ 31-ը, իսկ 2023թ.՝ 2-ը:

Ելնելով ՄՈՒՀ-ի առանձնահատկություններից՝ ՄՈՒՀ-ում առկա են նաև ոստիկանական կոչումներ՝ լեյտենանտ, մայոր և այլն: Դասախոսական անձնակազմը ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու, ծառայողական և կատարողական կարգապահություն ցուցաբերելու համար խրախուսվում են նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

Իսկ ինչ վերաբերում է մասնագիտական առաջընթացին, ապա անհրաժեշտ է նշել, որ ըստ կրթահամալիրի տրամադրած տվյալների՝ 2021-2023թթ. գրանցվել են պաշտոնի

առաջխաղացման 7 դեպք, երբ դասախոսից դարձել են ավագ դասախոս, ապա կրթաճյուղի կամ ամբիոնի պետեր և այլն:
Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը մշակել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում սկսնակ դասախոսների մենթորության իրականացման կարգը», համաձայն որի՝ սկսնակ դասախոսների փորձառու դասախոսները (մենթորները) ուղղորդում և օժանդակում են սկսնակ դասախոսներին դասավանդման և հետազոտական ոլորտում առաջավոր, մանկավարժական հմտությունների, կրթության ոլորտում կազմակերպչական կարողությունների ձեռքբերման և մասնագիտական առաջընթացի արձանագրման նպատակով անհրաժեշտ հիմքեր ստեղծելու համար: Մենթորության արդյունավետությունը ՄՈՒՀ-ում գնահատված չէ:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ըստ Կրթահամալիրի տրամադրած տվյալների՝ 2023թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ հաստիքացուցակով սահմանված է եղել 261 հաստիք, որից համալրված է եղել 205-ը, իսկ 56-ը եղել է թափուր: ՄՈՒՀ-ը հաստիքները բաժանում է հետևյալ խմբերի՝ գլխավոր, ավագ, միջին, կրտսեր և քաղաքացիական աշխատանք կատարողներ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:
Ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ կազմը՝ փորձագիտական խումբն արձանագրում է, որ ըստ Կրթահամալիրի կողմից ներկայացված տվյալների, կրթահամալիրի ղեկավար անձնակազմը և առանձնացված ստորաբաժանման ղեկավարները կրթահամալիրում ունեն միջինը 20 տարվա աշխատանքային փորձ:

Դատողություններ: Դրական է, որ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու համար հավաքագրված են անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ: Ողջունելի են ՄՈՒՀ-ի ջանքերը «Պարեկ» որակավորման շրջանակներում դասախոսական կազմի ընտրությունը մրցութային կարգով իրականացնելու ուղղությամբ, որը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին դասախոսական կազմը համալրել նոր, երիտասարդ և հեռանկարային անձնակազմով:
Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասախոսական կազմի մեծ մասը պրակտիկ ոլորտի մասնագետներ են, որը նպաստում է ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը և անմիջապես ոստիկանական համակարգի խնդիրներից և մարտահրավերներից եկած առաջադրանքների տրամադրմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ Կրթահամալիրն իրականացնում է նաև բարձրագույն և հետբուհական կրթություն, որը ենթադրում է պատասխանատվություն ոստիկանության համակարգի մարտահրավերների բացահայտման, միջդիսցիպլինար խորքային վերլուծությունների իրականացման և լուծումների առաջադրման համար: Հետազոտական ուղղության զարգացման համար կարևոր է գիտությունների թեկնածուների, դոկտորների և հետազոտողների քանակի ավելացումը:

Կրթահամալիրի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմում նշանակալի թիվ են կազմում նաև Կրթահամալիրի շրջանավարտները, որոնք գործնականում ձեռքբերած գիտելիքները, կարողություններն ու հմտություններն ներդնում են Կրթահամալիրի կրթական գործընթացների լավարկման գործում, ինչը դրական է գնահատվում նաև անձնակազմի և ՊԴ կազմի սերնդափոխության տեսանկյունից՝ երաշխավորելով նաև անձնակազմի կայունությունը: Շրջանավարտներին աշխատանքի ընդունելու քաղաքականությունը նպաստում է Կրթահամալիրը երիտասարդ, բանիմաց և հեռանկարային կադրերով համալրելուն:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում գործում է դասախոսական կազմի գնահատման բազմաբաղադրիչ համակարգ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսին տրվող միավորները ոչ միշտ են օբյեկտիվորեն արտահայտում դասախոսի ձեռքբերումները, մասնավորապես գնահատման հիմք են ծառայում հարցումները, դասալսումները, որոնք որոշակիորեն պարունակում են սուբյեկտիվ գործոններ, օրինակ՝ հարցարանների արդյունավետության գնահատման բացակայություն, դասալսումների և հարցումների արդյունքների ամբողջականացում առանց հստակ չափանիշների և միավորային սանդղակի:

Ինչ վերաբերում է դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը, ապա փորձագիտական խումբը շեշտադրում է կարողությունների զարգացման հստակ սահմանված ռազմավարության, ծրագրերի և նախաձեռնությունների առկայության անհրաժեշտությունը: Այլ է պատկերը «Ոստիկանական գործ» նախնական մասնագիտական կրթական ծրագրում, որտեղ առկա է դասախոսական անձնակազմի գնահատման և կարողությունների զարգացման կառուցվածքային հստակ մոտեցում: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ բոլոր կրթական ծրագրերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ է ցուցաբերել դասախոսական կազմի զարգացման հետևողական նույն մոտեցումը, միայն այդ պարագայում է հնարավոր ապահովել կրթական ծրագրերի հավասարաչափ զարգացումը: Փորձագիտական խումբը նշում է, որ եղած լավ փորձը անհրաժեշտ է տարածել ողջ Կրթահամալիրում:

Փորձագիտական խումբը հավելում է, որ անհրաժեշտ է ՊԴ կազմի վերապատրաստումները համակարգային ձևով արձանագրել, տվյալները հավաքագրել, հետագայում նաև վերլուծել, այս մոտեցումը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին հետևելու դասախոսի առաջընթացին և կայացնել հիմնավորված որոշումներ ռեսուրսները բաշխելիս:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում առկա են ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, առկա են ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, առկա է ՊԴ կազմի գնահատման և մասնագիտական առաջընթացի ապահովման դրական փորձառություն, ներդրված են դասախոսական կազմի երիտասարդացման մեխանիզմներ, դասախոսական կազմը կայուն է, առկա է դասախոսական կազմի բազա, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրը իր «2022-2026 թթ. ռազմավարական պլան և գործողությունների կատարման ժամանակացույց» փաստաթղթի երկրորդ նպատակում սահմանում է հետազոտության իրականացման հետևյալ 3 նպատակները.

- Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեությունը խթանող նորարարական մեխանիզմներ, տեխնոլոգիաներ ու մեթոդներ:
- Մշակել Կրթահամալիրի գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունների, նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր:
- Ապահովել Կրթահամալիրի գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը:

Այս նպատակների իրագործման ուղղությամբ սահմանվել են 3 խնդիրներ, դրանք են՝

1. Հետազոտական նախագծերում ՊԴ կազմի ներգրավածության ընդլայնում,
2. Սահմանել Կրթահամալիրի հետազոտական թեմատիկ առաջնահերթությունները՝ ներառելով նաև արտաքին շահակիցներին,
3. Ընդլայնել կրթահամալիրի հետազոտական գործունեությունը հանրապետական և միջազգային մակարդակներում:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր խնդիրների լուծման համար գործողությունների կատարման ժամկետ նշված է 2022-2026թ.: Խնդիրները լուծելու նպատակով սահմանվել են նաև 8 գործողություններ և դրանց արդյունավետության գնահատման ցուցիչներ: Քանակական ցուցիչներից է նաև այն, որ տարեկան միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ՊԴ կազմի հրապարակումների աճ տարեկան 5%-ով: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը սահմանված ցուցիչների ձեռքբերմանը չի հետևում: Ավելին, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի հրապարակումների ցուցանիշները ըստ տարիների, կարող ենք նկատել, որ վերջին երկու տարում որոշակի անկում է ապրել՝ 2021թ. կազմելով 39 հրապարակում, 2022թ.՝ 73, իսկ 2023թ.-ին՝ 50:

Հետազոտական գործունեության ուղղությամբ Կրթահամալիրի ստորաբաժանումները սահմանել են իրավագիտության ուղղությամբ հետևյալ առաջնահերթությունները՝

- ՀՀ ոստիկանության միջազգային համագործակցության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության կողմից հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման ուղղված գործունեության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության թույլտվության և լիցենզավորման գործունեության ոլորտը,
- ՀՀ ոստիկանության աշխատանքների պլանավորումը, որոշումների կայացումը վերաբերյալ ոլորտը,
- ՀՀ ոստիկանության վերաբերյալ ոլորտը։

Անհրաժեշտ է նշել, որ հետազոտական գործունեությամբ հիմնականում զբաղվում է Կրթահամալիրի ակադեմիան և նրանում ընդգրկված ամբիոնները։ Իսկ ինչ վերաբերում է ֆինանսական հատկացումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին Կրթահամալիրը գիտահետազոտական ուղղության զարգացման նպատակով տրամադրել է բյուջեի մոտ 3.5%-ը։

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները։

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը որպես երկարաժամկետ ռազմավարական ծրագիր դիտարկում է իր 2022-2026թթ. ՌՊ-ն։ Միջնաժամկետ պլանավորում ՄՈՒՀ-ը դիտարկում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Գիտահետազոտական ոլորտի ուղենիշները և զարգացման տեսլականը» փաստաթուղթը (հաստատված 2019թ.: Այս փաստաթղթում ներկայացված է գիտական հետազոտությունների կազմակերպման և համակարգման տեսլականը 2019-2023թթ համար։ Այստեղ առաջադրվել են լուծել հետևյալ խնդիրները.

1. Նպաստել կրթահամալիրի հետազոտական աշխատանքների քանակի ավելացմանը և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ ներգրավվածությունը գիտական ծրագրերում։
2. Նպաստել հետազոտական նախաձեռնություններում կրթահամալիրի սովորողների ներգրավվածության մեծացմանը։
3. Հետբուհական կրթության կատարելագործումը։
4. Ընդլայնել հետազոտական բաղադրիչը միջազգային համագործակցության մեջ։

Յուրաքանչյուր վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով Կրթահամալիրը սահմանել է քայլերի հերթականություն, կատարման ժամանակահատված, պատասխանատու ստորաբաժանում, անհրաժեշտ ռեսուրսներ, վերջնարդյունքներ և գործունեության առանցքային ցուցիչներ։ Անհրաժեշտ է նշել, որ փաստաթղթի գործունեության ժամանակահատվածն արդեն ավարտվել է, սակայն կրթահամալիրի կողմից վերջինիս իրականացման արդյունավետությունը չի գնահատվել։

Որպես կարճաժամկետ ծրագրեր Կրթահամալիրը դիտարկում է առանձին ստորաբաժանումների, մասնավորապես ամբիոնների գիտահետազոտական կիսամյակային և տարեկան պլանավորումները։ Կրթահամալիրը կարճաժամկետ հետազոտական ծրագրեր է դիտարկում ակադեմիայի ամբիոններում գործող գիտական խմբակների գործունեությունը,

որոնց աշխատանքային պլանները կազմվում են տարեկան կտրվածքով: Այս խմբակների գործունեության շրջանակներում քննարկվում են կրթահամալիրի համապատասխան մասնագիտությունների և կրթական ծրագրերի մասնագիտական ուղղվածությամբ հետազոտական թեմաներ թե դասախոսական, և թե ուսանողական համակազմի կողմից, իսկ հանձնաժողովի կողմից երաշխավորված թեմաները ներկայացվում են տպագրության հոդվածի տեսքով կամ ներկայացվում գիտաժողովի մասնակցության:

Անհրաժեշտ է նշել, որ գիտահետազոտական աշխատանքները Կրթահամալիրում համակարգվում են Որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բաժնում գործունեություն է ծավալում 3 աշխատակից՝ պետը, բաժնի պետի տեղակալը և ավագ գիտաշխատողը: Առկա է թափուր երկու հաստիք:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հետազոտությունների իրականացումը համակարգվում է կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի կանոնադրությամբ: Այս փաստաթղթով սահմանվում են հետազոտական ուղղվածության խնդիրները, բաժնի գործառույթները: Կրթահամալիրում գործում է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հրատարակությունների տեսակների, դրանց գրախոսմանը և տպագրության երաշխավորմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ ուղեցույց», որով սահմանվում են հրատարակումների տեսակները, դրանց գրախոսմանը և տպագրության երաշխավորմանը ներկայացվող պահանջները:

Առկա է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ամբիոնների գիտական գործունեությունը գնահատելու կարգ», որով գնահատվում է ամբիոնների կողմից կատարված գիտական գործունեությունը ըստ առանձին միջոցառումների: Մյուս կողմից փորձագիտական խմբին տրամադրված փաստաթղթերի վերլուծությունը ցույց տվեց, որ առկա են 2 նմանատիպ փաստաթղթեր, որոնցից մեկում ամբիոնի գիտական գործունեությունը գնահատվում է 10 միավորային, իսկ մյուսում 12 բալային սանդղակներով: Մի փաստաթղթով «Ուսումնական ձեռնարկի հրապարակում» միջոցառման համար դասախոսին տրվում է «5» միավոր, իսկ ըստ մյուս փաստաթղթի «8» միավոր: Ըստ այս կարգի Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժին ներկայացվող հաշվետվությունների հիման վրա ամփոփվում է Կրթահամալիրի ամբիոնների գիտական գործունեությունը և Կրթահամալիրի գիտական խորհրդի նիստում հրապարակվում է արդյունքները, որի հիման վրա ամենաշատ միավորներ հավաքած ամբիոնը խրախուսվում է «Գիտական գործունեության լավագույն արդյունքները ապահովելու համար» շնորհակալագրով:

Կրթահամալիրում հրատարակվում է «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը, որը ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում դեռևս 2018թ.-ից: 2020-2024թթ ընթացքում հրատարակվել են այս ամսագրի 9 համարներ, որոնք ընդգրկում են 5 տարվա կտրվածքով 177 հոդված, որից 29-ը այլազգի հեղինակներ են: Կրթահամալիրի ներքին շահակիցները իրենց աշխատանքները

այս ամսագրում տպագրում են անվճար: Ըստ ինքնավերլուծության կրթահամալիրի անձնակազմի 2021-2023թթ ընթացքում տեղական գրախոսվող ամսագրերում հրապարակումների թիվը կազմել է 116, ԱՊՀ երկրներում՝ 42, իսկ օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում՝ ընդամենը 4: Կրթահամալիրի աշխատակիցները իրենց գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքները իրականացնելիս առաջնորդվում են 2019թ. հաստատված «Ցիտման նորմերի պահպանման և գրագողությանը հակազդման մասին» կանոնակարգով, որով սահմանվում է գրագողության դրսևորումները, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը: Ըստ փորձագիտական խմբին ներկայացված կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների կողմից երաշխավորված հրատարակությունների ցանկի՝ կրթահամալիրում 2020-2023թթ ընթացքում հրատարակվել են 20 ուսումադիտակտիկ, ուսումագործնական, ուսումատեղեկատվական և օժանդակ ձեռնարկներ, 6 մենագրություն, 2 խնդրագիրք և թեստերի ժողովածու, 1 դասախոսությունների դասընթաց, 1 ուղեցույց և 1 բառարան:
Ինչպես պարզվեց փորձագիտական այցից և ներկայացված փաստաթղթային փաթեթից, կրթահամալիրում գիտահետազոտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերը բացակայում են:

Կրթահամալիրի որոշակի միջոցներ է տրամադրվում գիտական բնույթի տարբեր միջոցառումների իրականացման համար, մասնավորապես գիտաժողովների կազմակերպման, անցկացմանը, գիտական գործուղումների նպատակներով: Ֆինանսական միջոցներ են ծախսվում նաև գիտաժողովների նյութերի ժողովածուների, մենագրությունների, հոդվածների հրատարակման համար:

Իսկ ինչ վերաբերում է Նախնական և միջին մասնագիտական կրթական մակարդակներում ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացմանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ այս ծրագրերն առավել կիրառական են և ուսանողներին տրամադրվում են իրավիճակային մասնագիտական խնդիրներ, որոնք ուսանողների կողմից վերլուծվում, մեկնաբանվում և հիմնավորվում են: Խնդիրները վերցված են ոստիկանական գործունեության պրակտիկայից և դրանք ուղղված են ուսանողների, ստեղծագործական մտածողության, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշման հմտությունների զարգացմանը:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը իր ՌԾ-ի 2-րդ ուղղության (գիտական և հետազոտական գործունեության բարելավում) 3-րդ ռազմավարական նպատակով սահմանում է «ապահովել կրթահամալիրի գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը»: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ըստ «Հայաստանի հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին որոշման 46-րդ կետի համաձայն կրթահամալիրը իրավունք ունի իրականացնել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ուսումական հաստատությունների հետ համատեղ

գիտական հետազոտություններ, կազմակերպել միջազգային համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ միայն նախարարի համաձայնությամբ: Մյուս կողմից միջազգային հետազոտական համագործակցության մեկնարկից առաջ անհրաժեշտություն կա քայլերը համաձայնեցնել լիազոր մարմնի հետ:

Կրթահամալիրը ունի մի շարք փոխըմբռնման հուշագրեր, համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր շուրջ 20 օտարերկրյա (Ռուսաստանի դաշնություն, Լեհաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Վրաստան, Բելոռուս, Մոլդովա, Ղազախստան, Իսպանիա, Բուլղարիա) և տեղական տարբեր ուսումնական հաստատությունների հետ: Ինչպես պարզվեց փաստաթղթերի ուսումնասիրություններից և փորձագիտական այցից, այս համագործակցությունները սահմանափակվում են գիտաժողովների մասնակցությամբ, փոխադարձ այցելություններով և համատեղ որոշակի ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակմամբ: Համատեղ գիտահետազոտական աշխատանքները բացակայում են:
Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրում կազմակերպվել են 4 միջազգային գիտաժողով: Ինչպես նաև կրթահամալիրի ներքին շահակիցները մասնակցել են այլ միջազգային ուսումնական հաստատությունների կողմից կազմակերպված տարբեր գիտաժողովների և մրցույթների:

Կրթահամալիրի ակադեմիայի պրոֆեսորադասախոսական անձնակազմից 2-ը ընդգրկված են արտասահմանյան շուրջ 5 գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների կազմում, իսկ «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի խմբագրական խորհրդում ընդգրկված են արտասահմանյան ոստիկանական բուհերի 4 ներկայացուցիչներ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Կրթահամալիրում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները կախված կրթական ծրագրից տարբեր են: Մասնավորապես, մագիստրոսական կրթական ծրագրի մասնագրի համաձայն հետազոտական կառուցամասը կազմում է 48 կրեդիտ և ձևավորվում է հետևյալ կերպ՝ գիտական սեմինար՝ 12 կրեդիտ, գիտահետազոտական աշխատանք՝ 18 կրեդիտ, գիտահետազոտական (3 կրեդիտ) և գիտամանկավարժական (3 կրեդիտ) պրակտիկաներ, մագիստրոսական ատենախոսություն՝ 12 կրեդիտ: Բացի վերոնշյալից մագիստրոսական ՄԿԾ-ի ուսումնական պլանով իրականացվում է նաև «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը: Բակալավրական կրթական ծրագրի շրջանակներում հետազոտական բաղադրիչ են պարունակում կուրսային աշխատանքները, պրակտիկաները (հատկապես նախաավարտական) և ամփոփիչ ատեստավորումները: Վճարովի համակարգով սովորողների մոտ ամփոփիչ ատեստավորումը հանդիսանում է ավարտական աշխատանքը: Համապատասխան փաստաթղթերով սահմանված են պրակտիկաների, կուրսային աշխատանքների և ավարտական աշխատանքների իրականացման կարգերը: Քոլեջի և պարեկի կրթական ծրագրով կուրսային և ավարտական աշխատանքներ չկան, սակայն փորձագիտական այցը, դասալսումները և փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց

տվեցին, որ տարբեր դասընթացների առաջադրանքները սովորողների մոտ ձևավորում են վերլուծական կարողություններ, անորոշ պայմաններում ճիշտ կողմնորոշման հմտություններ: Գործում է նաև գիտաժողովների, ամենամյա գիտական հետազոտությունների ամփոփման կազմակերպման և անցկացման կարգը: Ամենամյա գիտաժողովների կազմակերպման նպատակը գիտահետազոտական մշակումների ներկայացումն է, գործընկեր կազմակերպությունների և այլ հաստատությունների ներկայացուցիչների և երիտասարդ գիտանականների միջև երկխոսության ստեղծումը, գիտական, հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների կատարելագործումը: Ըստ համապատասխան կարգի պարտադիր է այստեղ ուսանողների ընդգրկվածությունը: Վերջիններիս թեկնածությունը առաջարկում է ամբիոնը գնահատելով սովորողի ունակությունները և կարողությունները: Գիտաժողովների հաջող ներկայացված ուսանողների աշխատանքները տպագրվում են «Իրավունքի արդի հիմնախնդիրները», «ՀՀ նոր քրեական և քրեադատավարական օրենսդրությունը. Նորություններն ու իրավակիրառման հնարավոր խնդիրներ» հոդվածների ժողովածուներում և այլ պարբերականներում:

Կրթահամալիրը հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման դրսևորում է դիտարկում նաև գիտական խմբակների գործունեությունը: Կրթահամալիրի համապատասխան ամբիոններում գործում են հետևյալ գիտական խմբակները՝ «Մասնավոր և քաղաքացիական դատավարության իրավունք», «Հանցագործության և պատժի հիմնահարցերի հետազոտություն», «Հանցագործությունների բացահայտման և քննության հիմնահարցեր», «Պետաիրավական առարկաներ», «Հասարակագիտական առարկաներ», որոնք աշխատանքային պլանի համաձայն կազմակերպում են կլոր սեղան քննարկումներ, կոնֆերանսներ: Գիտական խմբակների ղեկավարները կիսամյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացնում ԿՈԱ և գիտական աշխատանքների բաժին: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման դրսևորում է նաև դասախոսական կազմի կողմից հրատարակված շուրջ 45 աշխատանքները, այդ թվում՝ ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, խնդրագրքեր, ուղեցույցներ և այլն, որոնք ներդրվում են դասավանդման գործընթացում:

Դատողություններ: Դրական է, որ Կրթահամալիրն իր ՌՊ-ում կարևորել է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ Կրթահամալիրը լիարժեքորեն չի հետևում սահմանված ցուցանիշների ձեռքբերմանը, ինչը դժվարացնում է գնահատել արդյունքների բավարար կամ ոչ բավարար լինելը: Իսկ ինչ վերաբերում է ՊԴ կազմի հրապարակումների աճի ապահովմանը միջազգային գիտական շտեմարաններում տարեկան 5% և այդ ցուցանիշի չպահպանմանը, փորձագիտական խումբը կարող է եզրակացնել, որ հետազոտական գործունեության խթանման մեխանիզմները լիարժեքորեն չեն գործում: Մինչդեռ Կրթահամալիրի կողմից իրականացրած հետազոտությունները կարող են կարևոր դերակատարում ունենալ ոստիկանական համակարգի շարունակական զարգացման և ի հայտ եկած խնդիրներին ակադեմիական և գիտական տեսանկյունից արձագանքելու գործում:

Չնայած նրան, որ բարձրագույն կրթական ծրագրերով դադարեցվել է ընդունելությունը, փորձագիտական խումբը լիահույս է, որ Կրթահամալիրը քայլեր կձեռնարկի ՊԴ կազմի հետազոտական ներուժի պահպանման և հետազոտական աշխատանքների զարգացման ուղղությամբ:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը սահմանել է իր հետազոտական առաջնահերթությունները՝ ընդգրկելով միջազգային համագործակցության, օպերատիվ-հետախուզական գործունեության և հանցագործությունների կանխարգելման ոլորտները, որոնք կարևոր են ոստիկանության գործունեության համար: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ Կրթահամալիրը կարող է ընդլայնել իր հետազոտությունների շրջանակը՝ ներառելով նորարարական թեմաներ, ինչպիսիք են տվյալագիտության և թվային տեխնոլոգիաների կիրառումը ոստիկանության գործունեությունում, այդ թվում՝ կիբեռ անվտանգության ապահովումը, արհեստական բանականության կիրառումը հանցագործությունների կանխարգելման և հետաքննության գործընթացներում, և տվյալների վերլուծությունը՝ հանցավորության կանխատեսման ու որոշումների կայացման արդյունավետության բարձրացման համար: Բացի այդ, ճգնաժամային կառավարման ակադեմիայի հետ համագործակցությունը կարող է ընձեռել հնարավորություն իրականացնելու միջդիսցիպլինար հետազոտություններ: Այսպիսի նորարարական մոտեցումները կնպաստեն Կրթահամալիրի իրականացրած հետազոտությունների նկատմամբ հասարակության և ակադեմիական հանրույթի հետաքրքրության մեծացմանը և դրանց տարածմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը կարող է խորացնել նաև իր համագործակցության շրջանակը միջազգային գործընկերների հետ՝ կոնֆերանսներից և հրապարակումներից դուրս գիտահետազոտական միասնական համագործակցություններ սկսելու ուղղությամբ: Համատեղ հետազոտական նախագծերում ներգրավվելը էապես կբարձրացնի ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտությունների կշիռը:

Դրական է, որ Կրթահամալիրում հրատարակվում է գիտամեթոդական ամսագիր, որը հնարավորություն է ընձեռում ներքին շահակիցներին իրենց աշխատանքները անվճար տպագրելու՝ խրախուսելով հետազոտական ակտիվությունը: Ըստ ներկայացված տվյալների՝ ՊԴ կազմի հետազոտական ակտիվությունը հիմնականում դրսևորվում է տեղական մակարդակում, փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգային հանդեսներում տպագրությունները մեծացնելու նպատակով ՄՈՒՀ-ը կարող է ներդնել նաև ներքին հետազոտական դրամաշնորհային ծրագրեր, որի հիմնական արդյունքներից կարող է լինել միջազգային վարկանիշավորված պարբերականներում տպագրությունների ապահովումը:
Փորձագիտական խումբը գովելի է համարում միջին «Ոստիկանական գործ» նախնական մասնագիտական ՄԿԾ-ում իրավիճակային քննարկումների, համապատասխան առաջադրանքների, հանձնարարականների դատախաղերի առկայությունը, որոնք ուսանողների մոտ ձևավորում են համապատասխան վերլուծական և գործնական կարողություններ:

Դրական է, որ Կրթահամալիրում գործում է գիտական գործունեության գնահատման կարգը, այնուամենայնիվ գնահատման տարբեր սանդղակների առկայությունը երկու

փաստաթղթերում կարող է հանգեցնել գնահատման անհամապատասխանությունների և ոչ օբյեկտիվ մոտեցման:

Կրթահամալիրում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման տարբեր մեխանիզմներ՝ կախված կրթական ծրագրերից, ինչը նպաստում է ուսանողների վերլուծական և գործնական կարողությունների զարգացմանը: Գիտաժողովների և դասախոսական կազմի հրատարակությունները նպաստում են նաև ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի արդյունավետ ներդրմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ կրթահամալիրում հետազոտությունը դիտարկվում է ռազմավարական նպատակ, հետազոտական աշխատանքների իրականացման ուղղությամբ սահմանվել են առաջնահերթ ոլորտներ, դասախոսական կազմն իրականացնում է որոշակի հետազոտություններ, առկա են հետազոտությունների իրականացման խրախուսման որոշակի մեխանիզմներ, գործում են հետազոտությունների իրականացման կարճաժամկետ և միջնաժամկետ պլաններ, առկա են գիտական խմբակներ, ուսանողներին տրվում են առաջադրանքներ, որոնք նպաստում են ուսանողների վերլուծական կարողությունների ձևավորմանը, առկա են հետազոտական աշխատանքները դասավանդման գործընթացում ներդնելու մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրը կարևորելով իր առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համար համապատասխան ուսումնական միջավայրի առկայությունը իր 2022-2026թթ. ռազմավարական պլանի 5-րդ ռազմավարական ուղղության (ենթակառուցվածքներ և ռեսուրսներ) նպատակներում սահմանել է՝

- Արդիականացնել Կրթահամալիրի ենթակառուցվածքները և կառուցվածքային ստորաբաժանումները:
- Բարելավել Կրթահամալիրում կրթական միջավայրը՝ բարեկարգելով սովորողների և ՊԴ կազմի համար նախատեսված լսարանային և կաբինետային պայմանները,

սպորտային մարզումներին և կրթական նպատակներին ծառայող շենքային մյուս տարածքները, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանները:

- Համալրել Կրթահամալիրի նյութատեխնիկական բազան:

Կրթահամալիրը կրթական գործունեությունը կազմակերպում է 5 մասնաշենքերի 56 լսարաններում, 19 մասնագիտական կաբինետներում ու լաբորատորիաներում:
Անհրաժեշտ է նշել, որ բարձրագույն կրթական ծրագրերով ընդհանրական ձևով սահմանված են, թե ինչպիսի ռեսուրսներ են անհրաժեշտ տվյալ ծրագիրն իրականացնելու համար, մասնավորապես՝ պրոֆեսորադասախոսական կազմ, նյութատեխնիկական և ուսումնաօժանդակ միջոցներ: Կրթահամալիրը շարունակաբար բարելավում է ենթակառուցվածքները և նյութատեխնիկական բազան: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ն իրականացրել է ենթակառուցվածքների բարելավում: Բոլոր լսարանները հագեցվել են հովացման համակարգերով, պրոեկտորներով, համակարգիչներով և այլ դիդակտիկ նյութերով: Կառուցվել և կահավորվել է նաև դատախաղերի համար նախատեսված դատական սրահ: Կրիմինալիստիկայի դասընթացի շրջանակներում դեպքի վայրերի զննության իրականացման նպատակով ՄՈՒՀ-ը ձեռք է բերել VR լսարան, ուսանողները առցանց տիրույթում հնարավորություն ունեն ուսումնասիրելու սցենարային վայրեր, գտնելու ապացույցներ և այլն: Այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը ջանքեր է գործադրում առցանց տարածքները և սցենարները ավելացնելու ուղղությամբ: Կրթահամալիրը բացի իր ունեցած ռեսուրսներից, ուսանողների որոշ կարողությունների ձեռքբերման համար կիրառում է նաև Փորձաքրեական վարչության ռեսուրսները:

Ուսանողների մասնագիտական կարողությունները և վարքագիծը գնահատելու նպատակով Կրթահամալիրը կառուցել և համապատասխանաբար կահավորել է տարբեր դեպքի վայրեր՝ բանկ, բնակարան, սրճարան և այլն: Դեպքի վայրի զննության լաբորատորիաները կիրառվում են ոստիկանական գործողությունների սիմուլյացիաների մշակման համար: Բոլոր սենյակները հագեցած են նաև տեսաձայնագրող սարքերով: Սիմուլյացիոն սենյակներին կից գործում է նաև լսարան մեծ էկրանով, ուսանողները հնարավորություն ունեն դեպքի վայրում դասախոսի հետ դիտարկել ընկերոջը և վերլուծել վերջինիս աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը: Արդյունքները քննարկվում են ուսանողների հետ:

Կրթահամալիրն ունի 2 գրադարան՝ հատուկ և ընդհանուր, ինչպես նաև գրապահոց, ընթերցասրահ: Կրթահամալիրում գրադարանի գրքերի ընդհանուր թիվը նախորդ հավատարմագրման գործընթացից հետո 25393-ից դարձել է 28908, այդ թվում՝ մասնագիտական՝ և գեղարվեստական գրականություն, դասագրքեր, օրենսգրքեր, ձեռնարկներ, ուղեցույցեր, մագիստրոսական թեզեր, քարտեզներ և ատլասներ, բառարաններ և այլ գրականություն: Գրականության թվայնացման տեմպերը դանդաղ են:
Հարկ է նշել, որ նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Պարեկ» որակավորման սովորողների համար դիֆերենցված ստուգարքները և քննությունները անցկացվում են Moodle հարթակի միջոցով:

Կրթահամալիրում գործում են նաև վարժահրապարակ, դահլիճներ (հագեցված տեխնիկական միջոցներով՝ գիտաժողովների, տարբեր բնույթի միջոցառումների

կազմակերպման համար), լսարաններ, կաբինետներ, ճաշարան, բուժկետ, ինչպես նաև կառուցվել է Օպերատիվ հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնին կից փորձակայանը, որը բաղկացած է երեք հատվածներից, համակարգչային 5 սրահ, ինտերակտիվ ուսուցման 1 կաբինետ, ճաշարան, բուժկետ, թանգարան: Կրթահամալիրի 4 մարզասրահները հագեցած են ժամանակակից մարզասարքերով, առկա է բաց լողավազան: Առկա են նաև մարտական և լազերային հրաձգարանները, իրավաբանական կլինիկան:

Բուհում առկա է նաև 450մ² տարածքով ուսանողական հանրակացարան նախատեսված մինչև 45 անձի համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջինիցս օգտվում է 10-ն ուսանող:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Կրթահամալիրում բյուջեի նախագիծը կազմվում է կրթահամալիրի պետի, պետի տեղակալի և ֆինանսական բաժնի կողմից՝ հաշվի առնելով եկամուտները և կատարվելիք ընդհանուր ծախսերը: Այդ նախագիծը քննարկվում է խորհրդի նիստում և ներկայացվում հաստատման: Կրթահամալիրի բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերի և ծախսերի նախահաշիվները հաստատվում է լիազոր մարմնի՝ ՆԳՆ-ի կողմից:

2023թ. համար կրթահամալիրի բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝ ուսման վարձավճարները կազմում են բյուջեի մուտքերի շուրջ 9.4%-ը, պետական ֆինանսավորումը՝ 87%, այլ եկամուտները՝ նախորդ հավատարմագրումից հետո 0.7%-ից աճել է դառնալով 3.6 %: Անհրաժեշտ է նաև նշել, որ չնայած նրան, Կրթահամալիրում տեղի է ունեցել ուսանողների քանակի նվազում, այնուամենայնիվ բյուջեի նվազում չի նկատվում, վերջինս կայուն է: Ավելին, վերջին տարիների Կրթահամալիրի ֆինանսական միջոցներն ավելացել են, վերջինս հիմնականում պայմանավորված է պետական ֆինանսավորման ավելացմամբ և ոստիկանական համակարգի բարեփոխումներով:

Իսկ ինչ վերաբերում են ծախսային ուղղություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջին երեք տարիներին նշանակալի մեծացել են ֆինանսական ներդրումները շենքերի և շինությունների կառուցման, վերանորոգման ուղղությամբ: Միայն 2022թ. ՄՈՒՀ-ը շինարարական աշխատանքներին տրամադրել է իր բյուջեի մոտ 47%-ը, 2023թ.՝ 35.44%-ը, իսկ 2024թ. 20.42%-ը:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Անհրաժեշտ է փաստել, որ Կրթահամալիրում ՄԿԾ-ները հիմնականում ապահովված են համապատասխան ռեսուրսային բազայով: Ոստիկանական համակարգի բարեփոխումների շրջանակում վերջին տարիներին որոշակիորեն համալրել և բարելավվել են ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական ռեսուրսները:

Կրթահամալիրում ֆինանսական միջոցների բաշխումն ըստ առանձին կրթական ծրագրերի չի իրականացվում: Լինելով ոլորտային ուսումնական հաստատություն՝ ՄՈՒՀ-ի լաբորատորիաներից, (մարզա)դահլիճներից և մյուս այլ ռեսուրսներից օգտվում են գրեթե բոլոր կրթական ծրագրերը:

Կրթահամալիրում ռեսուրսների բաշխման մեխանիզմներից է համապատասխան առանձին ստորաբաժանումների կողմից ներկայացված հայտերի հիման վրա գնումների խմբի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը:

Տարեվերջին կրթահամալիրի խորհրդի նիստում քննարկվում է բյուջեի կատարողականը, որոշվում կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները, պլանավորվում հաջորդ տարվա եկամուտները և ծախսերը: Կրթահամալիրի ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ամեն տարի տրվում են աուդիտորական եզրակացություններ:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Կրթահամալիրի ռեսուրսային բազան հիմնականում ապահովում է կրթական գործընթացների իրականացումը: ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան պարբերաբար համալրվում է, ինչպես սեփական միջոցների, այնպես էլ գործընկերների ներդրումների միջոցով:

ՄՈՒՀ-ում ներդրվում են էլեկտրոնային գնահատման համակարգեր և այլն: ՄՈՒՀ-ն ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով պլանավորում է անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումը և համալրումը: Անհրաժեշտ է նշել, որ ռազմավարական պլանի և ՄԿԾ-ների իրականացման համար ՄՈՒՀ-ը ներկայումս ունի անհրաժեշտ ռեսուրսներ: Ուսումնական գործընթացների ռեսուրսային պլանավորումն իրականացնում են ստորաբաժանումների պահանջագրերի, ռեսուրսների գնահատման հարցումների հիման վրա: ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ների իրականացման համար ունի իր ռեսուրսային բազան, միևնույն ժամանակ կիրառում է գործընկերների ռեսուրսային բազան: Տարբեր ՄԿԾ-ների շրջանակներում պրակտիկաները անցկացվում են ոստիկանության համակարգի համապատասխան ստորաբաժանումներում և այլ իրավապահ կառույցներում:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Կրթահամալիրում տեղեկատվության և փաստաթղթերի ներքին ու արտաքին շարժը իրականացվում է գործավարության կարգին համապատասխան: Ներդրվել է փաստաթղթաշրջանառության Mulberry էլեկտրոնային համակարգը, որն ապահովում է փաստաթղթաշրջանառությունը լիազոր մարմնի հետ: Կրթահամալիրի ներքին փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանցման կառավարումը իրականացվում է միասնական ներքին ցանցի միջոցով, որին միացված են 500 համակարգիչ (նախորդ հավատարմագրման ժամանակ 300 համակարգիչ): Այս գործընթացի կառավարումը

իրականացվում է միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի կողմից:

Կայքում առանձին բաժնով տեղադրվում են գիտական և գիտամեթոդական հոդվածներ, ժողովածուներ, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկները և այլն: «Պարեկ» կրթական ծրագրի համար ներդրված է Moodle համակարգը:

Կրթահամալիրի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է նաև կրթահամալիրի պաշտոնական կաքի, տեղեկատվական ձեռնարկների, բուկլետների, տպագիր և էլեկտրոնային մամուլի, հայտարարությունների միջոցներով:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Կրթահամալիրն ունենալով զորամասային կարգավիճակ՝ իր տարածքների անվտանգությունն ապահովվում է շուրջօրյա հերթապահության միջոցով, որը կազմակերպվում է ծառայության բաժնի կողմից և այդ գործընթացում ընդգրկված են նաև ուսանողները: Գործում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, որը տարածվում է սովորողների և ողջ անձնակազմի վրա:

ՄՈՒՀ-ում առկա են քաղպաշտպանության կառուցվածքային և պլանային փաստաթղթերը, նկուղային հարկ, որը կարող է օգտագործվել որպես ապաստարան: Սովորողների իրազեկության բարձրացման և արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորման նպատակով տարբեր կրթական ծրագրերով դասավանդվում են «Քաղաքացիական պաշտպանություն» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» դասընթացները:

Կրթահամալիրում առողջապահական ոլորտի ծառայություն է իրականացնում բուժկետը, որը համալրված է սանհանգույցներով, լոգարաններով, վիրակապարաններով և 3 հիվանդասենյակներով: Բուժկետն ապահովված է առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և որոշ սարքավորումներով: Այստեղ աշխատում է մեկ բժիշկ և 1 բուժքույր, ովքեր իրենց պարտականությունների շրջանակում ցուցաբերում են առաջին բուժօգնություն, իսկ առանձին դեպքերում սովորողներին կամ աշխատակիցներին ուղեկցում են քաղաքային պոլիկլինիկա կամ հիվանդանոց՝ հետագա բուժսպասարկման համար:

Կրթահամալիրի հակահրդեհային անվտանգության ապահովման նպատակով բոլոր հարկաբաժիններում տեսանելի վայրերում փակցված են տարհանման պլան-սխեմաներ և անհրաժեշտ կրակմարիչներ: Կրթահամալիրում հատուկ կարիք ունեցող ուսանողների առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված քաղաքականություն և ընթացակարգեր առկա չեն, քանի որ այդպիսի ուսանողներ Կրթահամալիրը չունի և չի ունեցել: Հետևաբար շենքային պայմանները ևս նրանց համար հարմարեցված չեն:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմերն է դիտարկում Կրթահամալիրը ՊԴ կազմի, շրջանավարտների և ուսանողների կողմից ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները:

Ներքին շահակիցները հնարավորություն ունեն ռեսուրսների վերաբերյալ իրենց կարծիքները, հուզող հարցերը և խնդիրները արտահայտել ղեկավար կազմի հետ հանդիպումների ժամանակ, ընդգրկված համապատասխան խորհուրդներում (գիտ. Խորհուրդ, ուսանողական խորհուրդ, ֆակուլտետի խորհուրդ), ամբիոնի նիստերում:

Կրթահամալիրի կողմից իրականացվում են ռեսուրսների բավարարվածության հարցումներ, թե ուսանողների թե շրջանավարտների շրջանում: Առկա են հարցումներ նաև դասախոսն ուսանողի հայացքով: Մյուս կողմից, սակայն, կրթահամալիրը չի իրականացրել տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման ամբողջական վերլուծություն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթահամալիրի ներկայիս ռեսուրսները ապահովում են բոլոր կրթական աստիճաններում ՄԿԾ-ների նպատակների իրականացումը: Դրական է, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ակնհայտորեն բարելավվել և վերազինվել են մասնագիտական կաբինետները, լաբորատորիաները և լսարանները, բացվել են նոր մասնագիտացված լսարաններ և լաբորատորիաներ, որոնք նպաստել են նաև դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացմանը և կրթական ծրագրերով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: ՄՈՒՀ-ի բյուջեի հիմնական մասը կախված է պետական ֆինանսավորումից, որը մի կողմից Կրթահամալիրին ապահովում է կայուն ֆինանսական ներհոսքով, մյուս կողմից կարող է առաջացնել ֆինանսական կախվածության ռիսկ: Ապագայում Կրթահամալիրը կարիք կունենա իրականացնել մի շարք միջոցառումներ Ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումն ապահովելու համար, ինչպիսիք են օրինակ վճարովի ծառայությունների մատուցման ծառայությունների զարգացումը, միջազգային ծրագրերով ֆինանսական միջոցների ներգրավումը և այլն: Կրթահամալիրը կարող է նաև ստեղծել նաև նվիրատվության ֆոնդեր (endowment funds), որոնք կարող են ապահովել հաստատության ֆինանսական կայունությունը երկարաժամկետ կտրվածքով և օգտագործվել կրթական ծրագրերի զարգացման, հետազոտությունների խթանմա և այլն նպատակներով:

Իսկ ինչ վերաբերում է ըստ ՄԿԾ-ների ռեսուրսների բաշխմանը, փորձագիտական խումբը նշում է, որ բարձրագույն ՄԿԾ-ներում ռեսուրսային բաշխվածությունն առավել ընդհանրական է: ՄԿԾ-ների ընթացիկ ռեսուրսային պլանավորումն առավել արդյունավետ իրականացնելու համար առավել նպատակահարմար կլիներ ռեսուրսային անհրաժեշտությունը ներկայացնել ըստ ամեն ՄԿԾ-ի և դասընթացի համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կրթահամալիրի ունեցած ռեսուրսները էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ուղղությամբ, ինչը նպաստում է արագ և արդյունավետ ներքին և արտաքին փաստաթղթավարման կանոնակարգմանը:

Փորձագիտական խումբը խրախուսում է նաև իրականացնել գրադարանի թվայնացման աշխատանքներ, ինչպես նաև առցանց դասընթացների հարթակների ստեղծում, վերջինս կնպաստի ՄՈՒՀ-ի ունեցած ռեսուրսների առավել մեծ հասանելիության ապահովմանը, ինչպես նաև դասերից բացակայող ուսանողներին, կարճաժամկետ դասընթացներին մասնակցող ուսանողներին ուսումնառության նյութերով ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Կրթահամալիրում առողջապահական և միջավայրի անվտանգության ապահովման ուղղությամբ իրականացվող ծառայությունների առկայությունը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ բժշկական անձնակազմի սակավությունը (ընդամենը 2 հոգի) կարող է չբավարարել վարժանքների ժամանակ վնասվածք ստացածներին ժամանակին տրամադրել առաջին բուժօգնություն՝ հաշվի առնելով դասակների, խմբերի մեծ քանակը և գործնական ժամերի ավելացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում կրթահամալիրում ներդրված կրթական միջավայրի գնահատման համար տարաբնույթ հարցումների իրականացումը, որը նպաստում է կարիքների վերհանմանը և կրթական միջավայրի բարելավմանը: Սակայն մյուս կողմից կրթական միջավայրի գնահատման մեխանիզմների արդյունավետության վերլուծությունները դեռևս բացակայում են:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՆԳՆ կրթահամալիրում բարենպաստ կրթական միջավայրի առկայությունը, մասնավորապես, տեխնիկապես հագեցված լսարանային և լաբորատոր բազան, նյութատեխնիկական ռեսուրսները, անվտանգության և առողջապահական ծառայությունների իրականացումը, ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության առկայությունը, տեղեկատվության տարածման և փաստաթղթավորման համակարգերի ներդնումը, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Եզրակացություն: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը իր 7-րդ ռազմավարական ուղղությամբ (Հանրային ներգրավում, սոցիալական համագործակցություն և ծառայություններ) սահմանել է երեք

ռազմավարական նպատակներ՝ «Բարձրացնել կրթահամալիրի հասարակական պատասխանատվությունը և ապահովել գործունեության հաշվետվողականությունը», «Ընդլայնել կրթահամալիրի գործունեությունը հասարակությանը մատուցվող ծառայություններում գիտելիքի ստեղծման և տարածման միջոցով» և «Ապահովել կրթահամալիրի գործունեության վերաբերյալ հասարակության լայն շրջանակների իրազեկումը»:

Կրթահամալիրում գործող աստիճանակարգային հաշվետվողականության հիմքում ընկած են «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղեկատվական - վերլուծական աշխատանքների իրականացման և հաշվետվողականության կարգ»-ը (հաստատված 17.07.2019թ) և «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությանը ներկայացվող պահանջների և ներկայացման կարգը» (հաստատված 2018թ.):

Ներքին հաշվետվողականության նպատակով Կրթահամալիրի յուրաքանչյուր բաժնի, ստորաբաժանման կողմից կազմվում են (ըստ գործառութային ոլորտների) գործունեության եռամսյակային, 6-ամսյա, 9-ամսյա և տարեկան հաշվետվություններ: Հաշվետվությունները փոխանցվում են ուսումնամեթոդական և զարգացման վարչություն, վերջինս ամփոփում է ստորաբաժանումների հաշվետվությունները և ներկայացնում ամբողջ կրթահամալիրի գործունեության վերլուծության մասին տարեկան տեղեկանք-հաշվետվություն: Հաշվետվությունները քննարկվում են օպերատիվ խորհրդակցության ժամանակ: Հաշվետու ժամանակահատվածում կրթահամալիրի գործունեության արդյունքների վերլուծության մասին տեղեկանք-հաշվետվությունը և օպերատիվ խորհրդակցությունների արդյունքներով ընդունված կառավարչական որոշումները և հանձնարարականները, որակն ու արդյունքները քննարկվում է նաև կրթահամալիրի խորհրդի նիստում և ապա կրթահամալիրի պետի կողմից գրությամբ 1 օրինակ որպես արտաքին հաշվետվողականություն ներկայացվում է լիազոր մարմին՝ ՀՀ ոստիկանության շտաբ, իսկ 2-րդ օրինակը պահվում է քարտուղարությունում: Փորձագիտական խմբին փոխանցված համապատասխան հաշվետվությունների (3-ամսյա, 6-ամսյա, 9-ամսյա) վերլուծությունները ցույց տվեցին, որ դրանք հիմնականում կրում էին նկարագրողական բնույթ և փաստում էին ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքները, բացակայում էին վերլուծությունները:

Յուրաքանչյուր տարվա համար կազմվում է նաև ռազմավարական պլանի կատարման վերաբերյալ հաշվետվություն, որտեղ սահմանվում են ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցով նախատեսված գործողության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, ժամանակացույցով նախատեսված քայլի նկարագիրը, քայլի իրագործման արդյունքները, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանումները և անհրաժեշտ ռեսուրսները: Այս հաշվետվությունները արդեն անմիջականորեն փոխկապակցված են ՌԾ-ի նպատակների և խնդիրների հետ, մանրամասն նկարագրված է՝ ինչ քայլեր են ձեռնարկվել համապատասխան ուղղությամբ, որ ստորաբաժանման կողմից: Այստեղ սահմանված են նաև որևէ խնդրի չլուծման պատճառները:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Կրթահամալիրը 7-րդ ռազմավարական ուղղության խնդիր 1-ում սահմանում է «ապահովել կրթահամալիրի գործունեության մասին տեղեկատվության մատչելիությունն ու հասանելիությունը և գործունեության հրապարակայունությունն ու թափանցիկությունը»: Համաձայն դեռևս 2018թ. -ի մշակված հանրային կապերի զարգացման հայեցակարգի՝ Կրթահամալիրի հիմնական խնդիրներից է գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը: Ինչպես երևում է, երկու փաստաթղթերը խնդիրների սահմանման տեսանկյունից անմիջականորեն փոխկապակցված են: Այս ուղղությամբ աշխատանքների համակարգման պատասխանատու ստորաբաժանում է նշանակված Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժինը, որը գործում է 2019թ. մշակված կանոնադրությամբ և դրանով սահմանված գործառույթներով: Բաժինը ենթակա է կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչությանը: Բաժնի կողմից կրթահամալիրի գործունեության վերաբերյալ կանոնակարգային և ընթացակարգային փաստաթղթերը, հասարակությանը հասանելի են դառնում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պաշտոնական կայքի՝ edupolice.am, իսկ տեղեկատվությունը, նորությունները, և հայտարարությունները նաև ֆեյսբուքյան էջի , «Պատիվ ունեմ» ամսաթերթի, համացանցային Յութուբյան ալիքի և այլ զանգվածային լրատվական միջոցներով:

Կրթահամալիրի կայքէջը եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն), պետք է նշել, որ, ի տարբերություն հայերենի, կայքէջի օտարալեզու ներբեռնումները սակավաթիվ են, մի շարք բաժիններում հրապարակումներ և տեղեկատվություն առկա չէ:

Անհրաժեշտ է նշել, որ Կրթահամալիրը վերլուծում է ինչպես պաշտոնական կայքէջը այնպես էլ համապատասխան ֆեյսբուքյան էջի այցելուների հաճախականությունը: Մասնավորապես, կայքէջի այցելությունների թիվը միայն 2023թ . կազմել է 76. 455: Ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվը կազմում է 9700:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Կրթահամալիրը հասարակության հետ կապերի ձևավորման մեխանիզմներից է դիտարկում էլեկտրոնային լրատվամիջոցներով արված գովազդային արշավները, տեղեկատվական նյութերի, բրոշյուրների հրապարակումը, ծնողների և դպրոցների հետ հանդիպումները, Expo ցուցահանդեսները:

Կրթահամալիրը հանրության հետ հետադարձ կապի միջոցներից առավել արդյունավետ է համարում պաշտոնական ֆեյսբուքյան էջի հնարավորությունները: Այն բացի հետադարձ կապի ապահովումից, դիտվում է նաև հասարակությանը և շահակիցներին տեղեկատվության արագ փոխանցման, գովազդի և հանրային կապերն ակտիվացնելու լավագույն միջոց (էջը ունի շուրջ 10000 հետևորդ): Կրթահամալիրը հետադարձ կապի արդյունավետ միջոց է դիտարկում նաև պաշտոնական կայքէջը, որի միջոցով շահակիցները կարող են նաև իրենց հուզող հարցերը անձնական նամակի տեսքով «կապը մեզ հետ» բաժնի միջոցով ուղղել կրթահամալիրին: Յուրաքանչյուր տարի պաշտոնական կայքի հետադարձ

կապի միջոցով տարեկան դիմողների թիվը կազմում է շուրջ 300: Մյուս կողմից փորձագիտական խմբի և կրթահամալիրի հետ հանդիպումները և կրթահամալիրի կողմից ներկայացված փաստաթղթային փաստաթղթային փաթեթների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ բացակայում են վերլուծությունները հետադարձ կապի մեխանիզմների գնահատման և արդյունավետության վերաբերյալ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Կրթահամալիրը՝ լինելով ոլորտի միակ մասնագիտական ուսումնական հաստատությունը, իր խնդիրներից է համարում քաղաքացիական հասարակության անվտանգության, հասարակական կարգի պահպանման, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանության ոլորտում կրթական, գիտական, մեթոդական, փորձագիտական, ծառայությունների մատուցումը:

Հասարակական պատասխանատվության և հասարակությանը անվճար ծառայություն մատուցելու տեսանկյունից անհրաժեշտ է նշել Կրթահամալիրի «Pro bono» իրավաբանական կլինիկայի գործունեությունը: Ցանկացած անձ սահմանված ընթացակարգի և ժամանակացույցի համաձայն կարող է խորհրդատվություն ստանալ քաղաքացիաիրավական, քրեաիրավական և վարչաիրավական հարցերով:

ՀՀ տարածաշրջանի ապօրինությունների դեմ պայքարի, թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի, հասարակություն և ոստիկանություն կապի ամրապնդման նպատակով Կրթահամալիրը դպրոցականների շրջանում իրականացնում է բացատրական և տեղեկատվական հանդիպումներ:

Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աշխատանքների և ձեռքբերումների մասին տեղեկացնելու, ՀՀ-ում գիտական մտքի զարգացմանը նպաստելու և տարածելու նպատակով կայքում տեղադրված են «Օրենքի պատվար» գիտամեթոդական պարբերականի հոդվածների բոլոր համարները ու «Պատիվ ունեմ» ամսաթերթը:

Հասարակությանը գիտելիք փոխանցելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև կրթահամալիրի թանգարանի գործունեությունը: Յուրաքանչյուր տարվա կտրվածքով թանգարանի այցելուների թիվ կազմում է շուրջ 450, որտեղ այցելուները ծանոթանում են ՀՀ ոստիկանության պատմությանը, վերջինիս դերին և նշանակությանը ՀՀ իրավապահ համակարգում և պետության կայացման գործում:

Դատողություններ: Կրթահամալիրը առաջնորդվում է ուժային կառույցներին բնորոշ աստիճանակարգային հաշվետվողական համակարգով, որը սերտացնում է ՆԳՆ-ի և կրթահամալիրի միջև կապը: Փորձագիտական խումբը գտնում է, որ 3-ամսյա, 6-ամսյա, 9-ամսյա ստորաբաժանումների հաշվետվություններում կարող են ներդրվել առաջարկությունների կամ բարելավման կողմերի ներկայացման պահանջ, որը կնպաստի ստորաբաժանումների գործունեության առաջխաղացմանը: Դրական է, որ Կրթահամալիրը, հիմվելով նախորդ փորձագիտական զեկույցի խորհրդատվությունների վրա, կազմում է ռազմավարական պլանի տարեկան հաշվետվություն, որտեղ մանրամասն ներկայացված են

ժամանակացույցով նախատեսված քայլերի իրագործման արդյունքները, պատասխանատու ստորաբաժանումները և ռեսուրսները: Հաշվետվության այս ձևաչափը թույլ է տալիս վերհանելու սահմանված խնդիրների չլուծման պատճառները և գտնելու լուծումների նոր հնարավորություններ:

Դրական է, որ Կրթահամալիրը տարբեր մեխանիզմների միջոցով ապահովում է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը և թափանցիկությունը: Փորձագիտական խումբը միայն գտնում է, որ Կրթահամալիրի կողմից տրամադրած տեղեկատվության ներկայացումը նաև օտար լեզուներով կնպաստի միջազգային գործընկերների շրջանում տեսանելիության բարձրացմանը:

Կարևոր է նաև հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հայեցակարգի կիրառումը, համապատասխան գործիքների և միջոցների առկայությունը, սակայն դեռևս հետադարձ կապի վերլուծության պակասը թույլ չի տալիս գնահատել դրանց ազդեցությունը կրթահամալիրի գործունեության վրա:

Հասարակությանը գիտելիքների կամ արժեքների փոխանցման հետ կապված փորձագիտական խմբի կողմից բարձր է գնահատվում իրավաբանական կլինիկայի գործունեությունը, որը անվճար խորհրդատվություն է տրամադրում քաղաքացիներին տարբեր իրավական հարցերի շուրջ: Ինչպես նաև փորձագիտական խումբը կարևորում է աշակերտների շրջանում իրավական մտածողության ձևավորմանն ուղղված Կրթահամալիրի ջանքերը, և լիահույս է, որ այսպիսի նախաձեռնությունները ապագայում առավել շատ կլինեն՝ նպաստելով հասարակություն-ոստիկանություն կապերի ամրապնդմանը և իրավապահ հասարակության ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ կրթահամալիրում գործում է ներքին և արտաքին շահակիցներին հասանելի աստիճանակարգային հաշվետվողական համակարգ, գործում են հետադարձ կապի ապահովման տարբեր մեխանիզմներ, իր գործընթացների թափանցիկությունն ապահովելու նպատակով գործում են տարբեր հարթակներ, մեծ է ՄՈՒՀ-ի դերակատարությունը քաղաքացիական հասարակության անվտանգության, հասարակական կարգի պահպանման, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ոլորտում, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ըստ 2022-2026թթ. ռազմավարական պլան և գործողությունների կատարման ժամանակացույցի՝ արտաքին կապերի և միջազգայնացման ընդլայնումը դիտարկվում է Կրթահամալիրի ռազմավարական ուղղություններից: Այս ուղղությամբ Կրթահամալիրը սահմանել է 3 նպատակ: Վերջիններիս ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք երբեմն ընդհանրական են և ոչ տեղային, օրինակ՝ ապահովել Բոլոնիայի գործընթացի նպատակների հետևողական իրագործումը Կրթահամալիրում:

Սահմանված 3 նպատակների համար առանձնացված են 4 նախանշվող վերջնարդյունքներ և 5 խնդիրներ: Նախանշված վերջնարդյունքները երբեմն անորոշ են և ոչ չափելի, օրինակ՝ շարժունությանը օժանդակող գործընթացների առկայություն, միջազգային փոխանակման և շարժունության ծրագրերի իրականացման և մասնակցության աճ: Անհրաժեշտ է փաստել, միշտ չէ, որ տեսանելի է, թե Կրթահամալիրն ինչի է ձգտում, օրինակ՝ փոխանակման և շարժունության քանի ծրագրում է ցանկանում ներգրավվել, դասախոսական և ուսանողական կազմի քանի տոկոսին է պլանավորում ներգրավել նման գործընթացներում և այլն:

Սահմանված նպատակներին համապատասխան ՄՈՒՀ-ի առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

1. Աջակցել Կրթահամալիրի ՊԴ կազմին հետազոտությունների արդյունքների հրապարակումը միջազգային պարբերականներում, գործընկեր բուհերի ՊԴ կազմի հրապարակումներում և Կրթահամալիրի պարբերականներում:
2. Ուսումնասիրել արտասահմանյան համանման բուհերի միջազգային առաջավոր փորձը և ստացված տվյալները /հնարավորության դեպքում/ ներդնել ՄԿԾ-ներում:
3. Միջոցառումներ ձեռնարկել ՊԴ կազմի և սովորողների շարժունության ծրագրերին մասնակցելու համար Կրթահամալիրի գործող երկկողմ միջազգային պայմանագրերի և միջազգային այլ ծրագրերի շրջանակներում:
4. Իրականացնել համապատասխան միջոցառումներ Կրթահամալիրի վարչակազմի, ՊԴ և ուսումնաօժանդակ անձնակազմի օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Խնդիրների լուծման ուղղությամբ սահմանված են նաև վերջնարդյունքներ, որոնց մի մասը քանակական է, օրինակ՝ միջազգային պարբերականներում տպագրությունների թվաքանակի աճ տարեկան 5%-ով, մյուս մասը՝ որակական: Առանձնացված են նաև վերջնարդյունքների ապահովման պատասխանատուներ և կատարման ժամկետներ:

Կրթահամալիրի միջազգային կապերի ընդլայնումն ու բազմազանեցումը խթանելու, կրթական ծրագրերի միջազգայնացումը երաշխավորելու, ինչպես նաև սովորողների և աշխատողների ակադեմիական շարժունության հնարավորությունները ընդլայնելու նպատակով Կրթահամալիրը 2021թ հաստատել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների» կարգը, որի նպատակն է կարգավորելու հիշյալ հարաբերությունները: Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին գործուղումներին ուղղված ծախսերն ավելացել են, եթե դրանք 2022թ. կազմում են ընդհանուր բյուջեի 1. 77%-ը, ապա 2024թ. հուլիս ամսվա դրությամբ կազմել է 3.44%: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործուղումների հիմնական նպատակները փորձի փոխանակման ուսումնասիրություններն են և տարբեր վերապատրաստումների, դասընթացների մասնակցությունը:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ արտաքին կապերի և միջազգայնացման առանձին քաղաքականություն և ընթացակարգեր սահմանված չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների շարժունության դեպքեր չեն արձանագրվել, վերջինս ՄՈՒՀ-ը բացատրում է իր՝ գերատեսչական հաստություն լինելով և կրթական ծրագրերի առանձնահատկություններով:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման, Կրթահամալիրի միջազգայնացմանն առնչվող ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները համակարգելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է Ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժինը, որը գործունեություն ծավալելիս առաջնորդվում է իր Կանոնադրությամբ: Սույն ստորաբաժանումն ապահովում է օտարերկրյա պետությունների ոստիկանական հաստատությունների հետ միջազգային համագործակցությունը, կրթական գործընթացի միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունը, ուսումնական գործընթացի բարելավման և արդիականացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը: Բաժինը գործում է Կրթահամալիրի Ուսումնամեթոդական և զարգացման վարչության ենթակայության տակ և ունի 8 հաստիք, որից համալրված է 3-ը: Բաժնի աշխատակիցները կատարում է իրենց գործառույթները՝ բաժնի հաստատված կանոնադրության և գործառութային պարտականությունների համաձայն: Բաժնի կանոնադրության ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ արտաքին կապերի և SS ոլորտում բաժնի գործառույթները միախառնված են և տարանջատում առկա չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգային զարգացման ուղղությամբ աշխատանքներում ներգրավված են նաև Կրթահամալիրի պետը և նրա տեղակալները:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բաժինն աշխատում է Կրթահամալիրի պետի կողմից հաստատված միջոցառումների պլանի շրջանակներում: Ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժինը հանդիսանում է ԵՄ իրավապահ

մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) ազգային մարմինը, իսկ բաժնի ղեկավարը ազգային համակարգողը: Բաժնի ներկայացուցիչը նաև հանդիսանում է CEPOL-ի էլեկտրոնային ուսուցման հարթակի (Leed) ազգային մենեջերը: Բաժնի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ 2 աշխատակից մասնակցել է Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված անգլերեն լեզվի դասընթացներին, 2 աշխատակից՝ Բուդապեշտում CEPOL-ի կողմից կազմակերպված էլեկտրոնային ուսուցման վերաբերյալ դասընթացներին, 1 աշխատակից ԱՄՆ-ում մասնակցել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված Միջազգային այցելու առաջնորդության ծրագրին, ևս 1 աշխատակից՝ ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի կազմակերպած վերապատրաստման դասընթացին:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Կրթահամալիրը փոխգործակցում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հաստատությունների և կառույցների հետ: Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը փոխըմբռնման հուշագրեր է կնքել ՌԴ ՆԳՆ Վ.Վ.Լուկյանովի անվան Օրյոլի իրավաբանական ինստիտուտի, Ուկրաինայի ՆԳՆ Օդեսայի պետական համալսարանի, ՌԴ ՆԳՆ Սիբիրի իրավաբանական ինստիտուտի, Նոր Բուլղարական համալսարանի հետ: ՄՈՒՀ-ը հանդիսանում է չորս միջազգային կազմակերպությունների (CEPOL, AEPC, International Forum on Police Education Cooperation, Association of Higher Educational Institutions of the MIA of CIS Member States) անդամ, որի շրջանակներում իրականացվում են գիտագործնական համաժողովներ, առկա և առցանց դասընթացներ, փոխայցեր: Մասնավորապես՝ 2024թ. կրթահամալիրի մեկ ծառայող CEPOL TOPCOP ծրագրի շրջանակներում մասնակցել է կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ծրագրին, որի շրջանակներում Իտալիայի Հանրապետության կարբիներների կորպուսի կիբեռհանցագործությունների բաժնի պետը հաճախել է Կրթահամալիր, որին հաջորդել էր կրթահամալիրի ներկայացուցչի այցը Միլան:
Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կրթահամալիրը համագործակցում է նաև Չեխիայի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության կրթական և վերապատրաստման վարչության, ICITAP հայաստանյան առաքելության, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի հետ: Համագործակցությունների շրջանակներում Կրթահամալիրի դասախոսները մասնակցում են վերապատրաստումների, ՄՈՒՀ-ում ներդրվում են ուսանողների և դասախոսների համար անգլերեն լեզվի զարգացման դասընթացներ, իսկ ICITAP ծրագրի շրջանակներում միջազգային 2 դասախոսներ Տեխաս նահանգից ներգրավվել են նաև որպես դասախոսներ նախնական մասնագիտական ՄԿԾ-ում դասավանդելու համար:

Կրթահամալիրի՝ ՀՀ գործընկեր բուհերի շրջանակն ընդգրկում է Գլաձոր համալսարանը, Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը, Հայաստանի Եվրոպական համալսարանը, Արդարադատության ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական

կենտրոնը: Հիմական համագործակցությունը տեղի է ունենում «Իրավագիտություն» ՄԿԾ-ի շրջանակներում՝ գիաժողովներին մասնակցությունների ձևով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2021-2023թթ. Կրթահամալիրն իրականացրել է դասախոսների և վարչական աշխատակիցների մասնակցությամբ փորձի փոխանակման 31 և սովորողների 1 փոխհամագործակցություն: 2024թ. Կրթահամալիրի պատվիրակությունը՝ Ուսումական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնի պետի ղեկավարությամբ և ակադեմիայի երկու սովորողների մասնակցությամբ, ամրապնդելով համագործակցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործընկեր բուհերի հետ, 2024 թվականի հունիսի 6-19-ը Չինաստանի հանրային անվտանգության ժողովրդական համալսարանի հրավերով մասնակցել է Պեկինում կազմակերպված ամառային դպրոցին, որի երկշաբաթյա ծրագրի շրջանակներում ներառվել են նաև Չինաստանի իրավապահ գործունեության մասին տեսական և գործնական դասընթացներ:

Նույն թվականին ՄՈՒՀ-ի ներկայացուցչությունը մասնակցել է նաև Նիդերլանդների թագավորությունում, Լիտվայում տեղի է ունեցած ոստիկանության ոլորտի բարեփոխումներին ուղղված միջոցառումներին:

Անհրաժեշտ է նշել, որ այցերի, գործուղումների արդյունավետության գնահատում ՄՈՒՀ-ը չի իրականցնում:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողների շարժունությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ նման դեպքեր չեն արձանագրվել:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Կրթահամալիրում վարչական, դասախոսական, ՊԴ կազմի օտար լեզվի (մասնավորապես անգլերենի) իմացության բարելավումը ՌԾ խնդիրներից է: Որպես վերջնարդյունք սահմանված է նաև, որ Կրթահամալիրի աշխատակիցները փուլային ընդգրկվածություն ունենան օտար լեզվի բարելավման դասընթացներին 10%-ի չափով:

Ըստ ինքնավերլուծության՝ դասավանդողների 70%-ը, վարչական անձնակազմի 76%-ը, ուսումնաօժանդակ կազմի 43%-ը տիրապետում են օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն և այլն): Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին, ապա անհրաժեշտ է նշել, որ 2023թ. տվյալներով բակալավրիատի անվճար ուսանողներից 65%-ը, բակալավրիատի վճարովի ուսանողերից 30%-ը, քոլեջի ուսանողների 28%-ը տիրապետում են օտար լեզուների:

ՄՈՒՀ-ի աշխատակիցների և ուսանողների անգլերեն լեզվի իմացության բարելավման նպատակով Կրթահամալիրը համագործակցում է «British council» կազմակերպության հետ: Կրթահամալիրի կողմից կազմակերպվել է 2 դասընթաց, որում ներգրավվել են շուրջ 30 աշխատակից և սովորող:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտար լեզուների իմացության դրական դինամիկա դասընթացների արդյունքում մեծ չէ: Վերջինս Կրթահամալիրը պայմանավորում է աշխատակիցների և սովորողների կողմից օտար լեզուներ ուսումնասիրելու մոտիվացիայի բացակայությամբ, որի ապացույցն է հանդիսանում վերը նշված դասընթացների

մասնակիցների թվի նվազումը դասընթացի ավարտին: Միևնույն ժամանակ լեզվի ուսուցման դասընթացի արդյունավետության բացահայտման նպատակով Կրթահամալիրում իրականացվել է հարցում, որի համաձայն, օտար լեզվի դասընթացներին ներքին շահակիցների մասնակցության ցածր մակարդակը պայմանավորված է դասընթացների՝ անհարմար ժամերին կազմակերպելու և դրանց ոչ շարունակական բնույթ ունենալու հանգամանքներով:

CEPOL-ի շրջանակներում 2023 թվականին LEED առցանց հարթակի միջոցով Police English օտար լեզվի բարելավման դասընթացին մասնակցել է ուսումնաօժանդակ անձնակազմից մեկ ծառայող: 2024 թվականին նույն դասընթացին մասնակցել է երկու դասախոս և մեկ ծառայող ուսումնաօժանդակ անձնակազմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «British council»-ի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն, 2024թ. երկրորդ կիսամյակում անգլերեն լեզվի դասընթացին պլանավորվում է ընդգրկել 20 մասնակից, այն է՝ 8 դասախոս, 7 անձ ուսումնաօժանդակ անձնակազմից և 5 սովորող: Սույն դասընթացը նախատեսվում է անցկացնել անգլերենի իմացության B1 կամ A2 մակարդակ ունեցող անձնակազմի համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը դիտարկվում են Կրթահամալիրի առաջնահերթություններից, այնուամենայնիվ որոշ ռազմավարական նպատակներ ընդհանրական են, ինչը որոշակիորեն դժվարացնում է գնահատել վերջիններիս ձեռքբերումը: Առավել արդյունավետ պլանավորում իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել նպատակները, և վերջնարդյունքների ձեռքբերումը սահմանել առավել չափելի՝ կիրառելով նաև գնահատման քանակական ցուցանիշներ:

Դրական է, որ Կրթահամալիրն ունի միջազգային համագործակցության աշխատանքները համակարգող բաժին, անձնակազմս անցել է տարբեր վերապատրաստումներ և ունի փորձառություն միջազգային գործընկերների հետ աշխատանքի, ինչը հնարավորություն կտա ՄՈՒՀ-ին արդյունավետորեն կազմակերպել իր աշխատանքները: Մյուս կողմից SS գործառույթների համատեղումը արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներին մտահոգիչ է աշխատանքի հստակ բաժանման և արդյունավետ իրականացման տեսանկյունից՝ հաշվի առնելով նաև աշխատակիցների փոքր քանակը և ներկայացված խոշոր գործառույթները, բացի այդ այս երկու ոլորտները միմյանցից բավականին տարբեր են և աշխատակիցներից պահանջում են իրարից անկախ տարբեր կարողություններ:

Գովելի է, որ վերջին տարիներին Կրթահամալիրը տարբեր ծրագրերի շրջանակում ակտիվորեն համագործակցում է միջազգային գործընկերների հետ, որը նպաստում է ՊԴ և վարչական անձնակազմի փորձի փոխանակմանը և մասնագիտական կարողությունների զարգացմանը: Իսկ ինչ վերաբերում է ուսանողների շարժունությանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ եվրոպական կրթական տարածքում առկա են մի շարք լավ փորձեր, երբ գերատեսչական ուսումնական հաստատություններին հաջողվել է իր ուսանողներին և դասախոսներին ներգրավել շարժունության տարբեր ծրագրերի: Եղած լավ փորձը

տեղայնացնելու նպատակով Կրթահամալիրը կարիք կունենա գտնելու ոլորտային այնպիսի ուսումնական հաստատություններ, որոնք ունեն նման լավագույն փորձ, ուսումնասիրի վերջիններիս իրավական հիմքերը և կրթական ծրագրերը, ապա դրանք քննարկի իր ներքին և արտաքին շահակիցների հետ՝ հարմարեցնելով իր տեղական համատեքստին: Այս գործընթացը կարիք կլինի մանրակրկիտ պլանավորել՝ ապահովելով բոլոր քայլերի տրամաբանական հաջորդականությունը և ճիշտ ժամանակին իրականացումը:

Դրական են Կրթահամալիրի ձեռնարկած քայլերը և ֆինանսական ներդրումները միտված ուսանողների և դասախոսների օտար լեզվի բարելավմանն ուղղությամբ, այնուամենայնիվ դասընթացների մշտադիտարկման արդյունքները դեռևս գոհացնող չեն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների օտար լեզվի հմտությունները բարելավելու նպատակով անհրաժեշտ է նաև մյուս առարկաների (ներառյալ մասնագիտական) շրջանակներում ուսանողներին տրամադրել հանձնարարություններ օտար լեզվով: Իսկ ուսանողների համար Օտար լեզվի դասընթացները նույնիսկ կարող են ներառվել որպես պարտադիր կրթական բաղադրիչ՝ որոշակի կրեդիտային պահանջների մաս կազմելով: Աշխատակիցների դեպքում, օտար լեզվի դասընթացների մասնակցությունը կարող է դրվել որպես պարտադիր մասնագիտական զարգացման բաղադրիչ, լեզվի մակարդակի բարելավումով պայմանավորված կարող է որոշվել վերջինիս վարձատրության չափը, պաշտոնի առաջխաղացումը և այլն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ Կրթահամալիրը արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների զարգացումը դիտարկում է ռազմավարական առաջնահերթություն, սահմանված նպատակների և խնդիրների իրականացման նպատակով առկա է համապատասխան ստորաբաժանում, նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ակտիվ քայլեր են իրականացվել միջազգային գործընկերների, ծրագրերի ներգրավման ուղղությամբ, որը նպաստում է Կրթահամալիրի ներքին շահակիցների փորձի փոխանակմանը և կարողությունների զարգացմանը, կազմակերպվում են ներքին շահակիցների օտար լեզվի բարելավման դասընթացներ փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

2022-2026թթ. ՌՊ-ում որակը ընդգծվում է մեայուն արժեքների թվում, իսկ կրթության որակի ապահովումը՝ ռազմավարական ուղղություն: Կրթահամալիրում որակի ապահովման «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի որակի ներքին ապահովման քաղաքականությունը և «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մասնագիտական կրթության որակի ապահովման հայեցակարգը» ընդունվել են 2017թ. և վերանայվել է 2024թ.: Նույն թվականին վերանայվել է նաև որակի ապահովման ձեռնարկը, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ձեռնարկը երաշխավորվել է և գտնվում է տպագրման փուլում, իսկ էլեկտրոնային տարբերակը հասանելի է ներքին շահակիցներին: Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ վերանայված ձեռնարկում էական բովանդակային փոփոխություններ չեն եղել, այն համապատասխանեցվել է բաժնի նոր անվանմանը և գործառույթներին, ներկայացվել է որակի կառավարման համակարգը:

ՄՈՒՀ-ում գործում է նաև «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կրթական գործընթացների բարելավմանն ուղղված հարցումների անցկացման» կարգը (2018թ.): Ուսումնասիրելով ՈԱ հարցարանները՝ կարելի է ընդգծել, որ դրանք հիմնականում գնահատում են մասնագիտական կրթական ծրագրերից բավարարվածության աստիճանը: Կրթահամալիրում «որակ» հասկացությունը փոխկապակցված է կրթության որակի հետ, իսկ կիրառվող որակի ապահովման մեխանիզմները հիմնականում վերաբերվում են կրթական ծրագրերի որակի ապահովմանը: Որակի ապահովման և մշտադիտարկման տիրույթում ոչ բոլոր ինստիտուցիոնալ գործընթացներն են, որոնք անուղղակիորեն կապված են կրթության որակի ապահովման հետ՝ ինչպես օրինակ կառավարման համակարգի, միջազգայանացման, հետազոտության արդյունավետությունը և դրանց գնահատումը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Մինչև 2022 թվականը ՄՈՒՀ-ում գործել է կրթության որակի ապահովման բաժանմունքը, որը 2022 թ. վերանվանվել է Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժին, իր մեջ միավորելով նաև նախկինում առանձին գործող գիտական աշխատանքների բաժինը: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը նոր խմբագրությամբ հաստատվել է 2022թ.: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բաժինը և վերջինիս աշխատանքը առավելապես կենտրոնացած է որակի ապահովման գործընթացների՝ քան գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ:

Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժինը ունի երկու առանձնացված աշխատասենյակ, բաժնի պետի և երկու աշխատակիցների համար, որոնցից

մեկը պատասխանատու է կրթության որակի ապահովման ուղղությամբ, իսկ երկրորդը գիտական ուղղվածության աշխատանքների իրականացման համար: Բաժնում կա թափուր հաստիք՝ ավագ տեսուչի պաշտոն, որին համապատասխանող թեկնածու դեռևս առկա չէ: Բաժինը գործում է կրթահամալիրի պետի առաջին տեղակալի կողմից ղեկավարվող ուսումնամեթոդական վարչության ներքո, ըստ կազմակերպական կառուցվածքի Կրթահամալիրի պետի հետ բաժնի պետի կապը միջնորդավորված է:

Բաժինը համալրված է անհրաժեշտ սարքավորումներով, այդուհանդերձ առանձին ֆինանսական ռեսուրսներ նախատեսված չէ բաժնի աշխատանքների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերոնշյալը պայմանավորված է ՄՈՒՀ-ի ֆինանսների բաշխման քաղաքականությամբ, անհրաժեշտության դեպքում ըստ պահանջագրի բաժնին հատկացվում են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները (օրինակ՝ որակի ձեռնարկի տպագրություն, քանի որ գիտական աշխատանքները նույնպես համակարգվում են նույն բաժնի կողմից, ապա հատկացումներ են կատարվում ձեռնարկների, հոդվածների, ՄՈՒՀ-ի պարբերականների տպագրության համար):

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Ներքին և արտաքին շահակիցները որակի ապահովման աշխատանքներում հիմնականում ներգրավված են հարցումների միջոցով, նաև կատարվել են ֆոկուս-խմբային քննարկումներ: Հարցումներ են իրականացվում հետևյալ ուղղություններով ուսանողների հետ՝ «Դասախոսներն ուսանողների աչքերով», «Մասնագիտական կրթական ծրագրից բավարարվածության մակարդակի բացահայտմանն ուղղված հարցաշար», «Սովորողների կողմից ուսումնական գործընթացը ապահովող նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատմանն ուղղված ուսումնասիրություն», «Կուրսի պետի մասնագիտական գործունեության արդյունավետության բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն», դասախոսների հետ՝ «Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում» շրջանավարտների հետ՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի շրջանավարտների շրջանում կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցաշար», գործատուների հետ՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անվճար ուսուցման շրջանավարտների մասնագիտական կարողությունների բարելավման վերաբերյալ»:

Հարցաթերթերի և դրանց վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա են բարելավման առաջարկություններ: Այդուհանդերձ կիրառվող հարցարանները ոչ միշտ են նպաստում օբյեկտիվ տեղեկատվության հավաքագրմանը, քանի որ ունեն այո, ոչ, բավարարում է, չի բավարարում և այլ նմանօրինակ պատասխաններ (օրինակ՝ Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում): Հարցումները նախկինում ուսանողների շրջանում իրականացվել են առցանց ձևով, սակայն ուսանողների ցանկությամբ անցում է կատարվել թղթային տարբերակին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժինը պարբերաբար քննարկումներ է ունենում

ստորաբաժանումների հետ, մասնավորապես ներկայումս ներգրավում են ամբիոններին, որպեսզի վերջիններս նույնպես վերլուծություններ իրականացնեն իրենց հաշվետվություններում: Ուսանողները ներգրավված են նաև Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովում, որի գործառույթների շրջանակում է նաև կազմակերպվող հարցումների վերաբերյալ իրազեկումը և ուսանողների ներգրավումը հարցումների մասնակցությանը:

Համաձայն ինքնավերլուծության՝ Կրթահամալիրի արտաքին շահակիցներն են շրջանավարտները, գործատուները և պետական համապատասխան մարմինները, որոնք ընդգրկված են Կրթահամալիրի խորհրդում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը կրթության որակի ապահովման աշխատանքներում արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմ է համարում նաև դիմորդների ընդունելության գործընթացը, ըստ այդմ նախկինում հասարակական կազմակերպությունները (ՀԿ) եղել են միայն դիմորդների ընդունելության հանձնաժողովում: Արտաքին շահակիցները՝ ՆԳՆ ներկայացուցիչ և գործատուներ, ներգրավված են նաև ամփոփիչ ատեստավորման գործընթացներում: ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքներում ներգրավված են նաև արտաքին գնահատողներ, մասնավորապես «պարեկ» որակավորման ՄԿԾ-ի գնահատումը իրականացվում է ՀԿ-ի մոնիթորինգային խմբի կողմից, հատկանշական է, որ վերջիններս հանդես են գալիս նաև առաջարկություններով կրթական ծրագրի լավարկման և ՊԴ կազմի վերապատրաստման և ընտրության մրցույթի պահանջների համար, առաջարկությունները լսվում և քննարկվում են ԳԽ-ի նիստերում: Անհրաժեշտ է նշել, որ այս գործընթացները ՄՈՒՀ-ի ներքին ՈԱ գործընթացների հետ կապակցված չեն: ՄԿԾ-ի մշտադիտարկման և գնահատման չափանիշները մշակվել և կիրառվում են արտաքին գնահատողների կողմից, որի արդյունքները և վերլուծությունները հասանելի են նաև Կրթահամալիրին: Փորձագիտական խումբը նաև նկատում է, որ ՄՈՒՀ-ի հաջողված փորձը կապված «պարեկ» որակավորման ՄԿԾ-ի գնահատման հետ հիմված է արտաքին գնահատողների կողմից ներդրված մեխանիզմների արդյունավետ կիրառության վրա, սակայն միևնույն ժամանակ դրանք չեն տեղայնացվել ՄՈՒՀ-ում:

ԳԽ-ին կից գործում է նաև «ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման» հանձնաժողովը, որը իր գործառույթների շրջանակներում քննարկում է ՄԿԾ-ների իրագործման կանոնակարգերը, ստորաբաժանումների որակի ապահոման վերաբերյալ հաշվետվությունները և այլն:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՄՈՒՀ-ը ձգտում է տարբեր գործընթացների որակի ապահովումն իրագործել «պլանավորում – իրականացում – գնահատում - բարելավում» շրջափուլով, որը ավելի լավ է արտահայտված կրթական գործընթացներում, մյուս գործընթացներում դրանք կրում են հատվածային բնույթ, հիմնականում Կրթահամալիրը գտնվում է իրականացման փուլում:

Կրթահամալիրի որակի ներքին ապահովման համակարգը գործում է համաձայն հաստատված փաստաթղթային հենքի, այդուհանդերձ փորձագիտական խումբը արձանագրում է, որ Կրթահամալիրում գործող բազմաթիվ կանոնակարգող փաստաթղթեր

հաստատվել են նախորդ հավատարմագրման փուլում 2018-2019թթ.: Որակի համակարգի վերանայման տեսանկյունից նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը ստացել մի շարք խորհրդատվություններ, որոնք միտված են եղել որակի ապահովման մշակույթի տարածմանը և մեկ ամբողջական որակի համակարգի ստեղծմանը, քաղաքականության և ընթացակարգերի վերանայմանը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավմանը, հարցարանների վերանայմանը, ԿՈԱԲ-ի և ստորաբաժանումների միջև փոխգործակցության ակտիվացմանը, որակի ապահովման տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմների ստեղծմանը և այլն: Փորձագիտական խումբը փաստում է, որ որոշ աշխատանքներում ՄՈՒՀ-ը ունի դրական առաջընթաց, մասնավորապես ներքին և արտաքին շահակիցների ավելի ընդգրկուն ներգրավմանը որակի ապահովման աշխատանքներում, հարցարանների բազմազանեցման, հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի կիրառման և այլ աշխատանքներում: Այդուհանդերձ նախատեսված Որակի ապահովման քաղաքականության վերանայում և առաջնահերթությունների սահմանման քայլը լիովին չի իրագործվել, Որակի ապահովման ձեռնարկը վերանայվել է 2024թ., սակայն այդ վերանայման արդյունավետությունը ներկա փուլում գնահատել հնարավոր չէ, մյուս կողմից որակի ապահովման տվյալների հավաքագրման մեխանիզմները հիմնականում հիմվում են հարցումների վրա, իսկ որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատում ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացնում:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՄՈՒՀ-ը արտաքին գնահատման գործընթացների համար տեղեկատվության հիմնական հավաքագրման և վերլուծության աղբյուրներ է համարում ինչպես ստորաբաժանումների, այնպես էլ Կրթահամալիրի պետի տարեկան, եռամսյակային, վեցամսյա և իննամսյա հաշվետվությունները: Տեղեկատվական աղբյուր են հանդիսանում նաև ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվող հարցումները:

Կրթահամալիրը երկրորդ անգամ է ինքնավերլուծություն պատրաստում և ներկայացնում ինստիտուցիոնալ արտաքին գնահատման նպատակով: Ներկայացված ինքնավերլուծությունը հաճախ եղել է նկարագրողական, և չի անդրադարձել պահանջվող չափորոշիչներին ամբողջությամբ: Ներկայացված տվյալները եղել են ոչ ամբողջական և համակարգված, իսկ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են տվյալների անհամապատասխանություններ և միասնական տվյալների բացակայություն:

Անհրաժեշտ է նաև նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո 2022թ. կատարվել է Կրթահամալիրի գործառույթների վերլուծություն հրավիրյալ արտաքին փորձագետների կողմից (Ռումինիա, Իսպանիա), որը ամփոփվել է «ՀՀ Ուստիկանության Կրթահամալիրի գործառույթների վերլուծություն» եզրափակիչ զեկույցով: Բացի այդ առանձին գործընթացներ (դասավանդման որակ, ՄԿԾ իրականացում) ներկա փուլում ենթարկվում են արտաքին գնահատման:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Կրթահամալիրի կայքէջում «Կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների» բաժնի համար առանձնացված է առանձին ներդիր էջ, որտեղ ներկայացված է միայն գիտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, որակի ապահովման տեսանկյունից էջը համալրված չէ տեղեկատվությամբ, բացի այդ էջում ներկայացված տեղեկատվությունը, օրինակ՝ գիտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը 2018թ.-ի է: Կայքեջում առկա է նաև «Կրթության որակի ապահովման գործընթաց» վերնագրված էջը/բաժինը, որը համալրված է «Կրթության որակի ապահովման մասնակցել և նախկին անվանումն է) աշխատանքների, հավատարմագրման գործընթացների չափանիշների, Բոլոնյան գործընթացի վերաբերյալ տեղեկատվությամբ, առկա են նաև հարցումների արդյունքներ, որոնք ներկայացված են քանակական վերլուծությամբ, բացի այդ վերլուծություններում առկա է փաստագրող տեղեկատվության պակաս, օրինակ՝ նշված չէ, թե որ տարեթվի ուսումնասիրություն է, քանի հոգի է մասնակցել և այլն: Նույն էջի փաստաթղթեր բաժնում ներկայացված փաստաթղթերը նույնպես թարմացված չեն (հիմականում 2017թ. հիմքերն են), օրինակ՝ հարապարակված է «Կրթության որակի ապահովման բաժանմունքի» կանոնադրությունը, իսկ նոր ձևավորված ԿՈԱԳԱ բաժնի կանոնադրությունը և այլ փաստաթղթեր, ինչպես նաև որակի ապահովման ձեռնարկը հրապարակված չեն:

Ինքնավերլուծության զեկույցից և փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ներքին մեխանիզմներով ՄՈՒՀ-ի ներքին շահակիցները տեղեկացված են կրթության որակի ապահովման գործընթացներից, կրթական ծրագրերի մշտադիտարկմանը, ընթացիկ և սպասվող փոփոխություններից (տեղեկատվությունը տարածվում է տարբեր հանդիպումների ընթացքում):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կրթահամալիրի նախաձեռնությունը վերանայել որակի ապահովման քաղաքականությունը և ձեռնարկը՝ դրանք հարմարեցնելով կառուցվածքային փոփոխություններին: Այնուամենայնիվ, նշված փոփոխությունները բավարար խորքային չեն, և առայժմ տեսանելի չեն հստակ մոտեցումներ, թե ինչպես է որակի ապահովումը անդրադառնալու ոչ միայն ՄԿԾ-ներին, այլև ՄՈՒՀ-ում իրականացվող մյուս գործընթացների որակի ապահովմանը, ինչը կարող է նպաստել մյուս ոլորտների զարգացման հապաղմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ որակի ապահովման գործունեության շրջանակի ընդլայնման և հստակեցման հարցին կարիք կլինի անդրադառնալ նաև ապագայում, քանի որ բարեփոխումներից հետո ձևավորված հաստատությունն անհրաժեշտություն կունենա ունենալու որակի ապահովման այնպիսի համակարգ, որը կվերլուծի և դուրս կբերի բոլոր ընթացիկ խնդիրները բոլոր ոլորտներում: Այս մոտեցումը հնարավորություն կտա իրականացնել միայն տվյալահենք բարեփոխումներ ու փոփոխություններ, ինչը կարևոր է համակարգային և շարունակական զարգացումների համար:

Դրական է, որ Կրթահամալիրը որակի ապահովման գործընթացների իրականացման համար տրամադրում է նյութական և մարդկային ռեսուրսներ, որը նպաստում է ՈԱ աշխատանքների կազմակերպմանը:

Կրթահամալիրի որակի ապահովման համակարգի շարունակական վերանայումները կարևոր են ՈԱ համակարգի զարգացման համար, սակայն փորձագիտական խումբը նկատում է, որ այդ վերանայումները հաճախ կատարվում են առանց բավարար խորքային վերլուծությունների, ինչը բերում է ոչ միշտ գոհացուցիչ արդյունքների: Սա հատկապես արտահայտվում է այն հանգամանքով, որ նախորդ հավատարմագրումից հետո գիտական աշխատանքները միավորվել են որակի ապահովման համակարգին, ինչը խոչընդոտել է երկու ռազմավարական կարևոր ուղղությունների լիարժեք իրականացմանը: Բացի այդ, Որակի ապահովման բաժինը, լինելով նաև գիտահետազոտական գործունեության համակարգող, չի կարող ապահովել օբյեկտիվ գնահատում գիտության զարգացման ուղղությամբ, ինչը հակասում է որակի ապահովման անկախության սկզբունքին: Կազմակերպական կառուցվածքում որակի ապահովման գործառույթները իրականացնող բաժնի ներկայիս տեղակայումը (ուղղահայաց երրորդ մակարդակ), խոչընդոտում է նախ և առաջ ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի գնահատմանը, որը հեռանկարում կարող է խոչընդոտել ռազմավարական պլանավորման գործիքակազմի օբյեկտիվ բարելավմանը (ՌՊ իրականացման արդյունավետություն, քանակական և որակական գնահատման ցուցիչներ, կառավարման գործառնական կապերի արդյունավետություն), այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է որակի ապահովման անկախ կառույցի ստեղծման և որակի ապահովման ամբողջական համակարգի ներդրման հրատապությունը Կրթահամալիրի կառավարման «նոր» մոդելում:

Դրական է, որ նախորդ հավատարմագրումից հետո Կրթահամալիրը ընդլայնել է ներքին և արտաքին շահակիցների ընդգրկումը որակի ապահովման գործընթացներում, ինչը կարող է նպաստել կրթական ծրագրերի և մյուս գործընթացների առավել օբյեկտիվ գնահատմանը և դրանց շարունակական բարելավմանը: Այդուհանդերձ հարկ է նշել, որ ներքին գնահատման գործիքակազմը և մեխանիզմները ոչ միշտ են նպաստում տվյալահենք որոշումների կայացմանը, առանձին դեպքերում հաջողված փորձառությունը հիմնվում է ոչ թե ներքին այլ արտաքին գնահատման մեխանիզմների վրա, այս համատեքստում անհրաժեշտ է շեշտադրել որակի ապահովման և գնահատման ներքին մեխանիզմների համաչափ զարգացումը և մեխանզիմների արդյունավետության գնահատման գործիքակազմի կիրառությունը, ինչը կնպաստի որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը բոլոր գործընթացներում, անհրաժեշտության դեպքում հարկ է նաև տեղայնացնել արտաքին գնահատման գործիքակազմը (ներկա փուլում այլ կազմակերպությունների կողմից իրականացվող), որը կապահովի կրթական ծրագրերի շարունակական բարելավումը:

Մտահոգիչ է, որ երկրորդ անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնող ուսումական հաստատությունը դեռևս չունի բավարար մեխանիզմներ՝ հիմնավոր և համակարգված վերլուծություններ կատարելու համար: Տվյալների ոչ ամբողջականությունն ու անհամապատասխանությունները կարող են խոչընդոտել գնահատման գործընթացները:

Փորձագիտական խումբը բացասական է համարում որ, Կրթահամալիրի կայքէջում որակի ապահովման վերաբերյալ տեղեկատվությունը թարմացված և ամբողջական չէ, որը կարող է խոչընդոտել ՈԱ գործընթացների թափանցիկությունը և որակի ապահովման վերաբերյալ տվյալների հասանելիությունը արտաքին շահակիցներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՆԳՆ Կրթահամալիրի գործունեության ոչ բոլոր տիրույթներում են առկա որակի ապահովման գործընթացներ, գիտության և որակի ապահովման բաժինների միավորման արդյունքում խոչընդոտվել է երկու ոլորտների աշխատանքը՝ առաջացնելով նաև շահերի բախում, ներքին որակի ապահովման համակարգը չի տեղայնացնում ՄԿԾ-ների մշտադիտարկման արտաքին դրական փորձառությունը, առկա չեն որակի ապահովման գործընթացների վերաբերյալ հրապարակված թարմացված և ամբողջական տվյալներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունները չեն համապատասխանում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

28-ը հոկտեմբերի 2024թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Ասյա Սիմոնյան՝** 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005-2007թթ. աշխատել է «Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում: 2004թ. -ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ. -ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:

2. **Աիդա Թադևոսյան՝** 2012թ.-ին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, 2015 թվականին՝ ասպիրանտուրան: 2018թ.-ին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2019թ. -ին՝ ՀՀ դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան: 2014թ.-ից Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի դասախոս է: Ներկայումս ՀՀ Սահմանադրական դատարանի Իրավախորհրդատվական վարչության Փորձագիտական-վերլուծական բաժնի պետն է: Մի շարք գիտական հրապարակումների հեղինակ է:

3. **Գեղամ Կարոյան՝** 2004թ. -ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կիբեռնետիկայի ֆակուլտետի մագիստրատուրան, 2006 թվականին՝ ասպիրանտուրան: 2008թ-ին շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան, 2013թ-ին շնորհվել է դոցենտի գիտական կոչում:2003-2008 թթ ՀՊՃՀ -ի Կիբեռնետիկայի ֆակուլտետի «Էլեկտրոնային տեխնիկա» ամբիոնի ավագ լաբորանտ,2009 -2013թթ ասիստենտ:2011 – 2013թթ. Կիբեռնետիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ գիտական աշխատանքների գծով ,2012թ. -ից ԵրՊԻ - ՀՊՃՀ Շրջանավարտների ասոցիացիայի անդամ 2013-

2022թթ. «Էլեկտրոնային տեխնիկա» ամբիոնի դոցենտ,2017-2019թթ. 038 – Էլեկտրատեխնիկայի (Ե09.01) մասնագիտական խորհրդի անդամ :2022–թին աշխատել է Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտուի, «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնում: 2017թ. նոյեմբերից առայսօր Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ ուսումնական գծով: 2022թ. -ից առայսօր «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնի դոցենտ:

4. **Ավետիք Խոստեղյան՝** 2022-2024 թթ «Բայազետ» կենտրոնում եղել է նախագծի ղեկավար:SS նախագծերի ղեկավար՝Ֆրիլանս-ում:Եվրասիա Միջազգային համալսարանի «Քաղաքացիական կրթության կենտրոն»-ի համակարգող: 2021-2022 YouthPower Initiative-ում հաղորդակցության մասնագետ:2022-2024թթ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործող «երիտասարդների և երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհուրդ»-ի անդամ է:

5. **Իոն Ռոչանու՝** 1994թթ ավարտել է բարձրագույն ռազմական հետազոտությունների ակադեմիան՝ ստանալով «Կապի և տեղեկատվական համակարգերի» բակալավրի որակավորում: 1998թ-ին եղել է ԱՄՆ-ի Մոնտերեյի ռազմածովային հետբուհական դպրոցի պաշտպանական ռեսուրսների կառավարման մասնագետ: 1996-2000թթ «Քերոլ 1» Ազգային պաշտպանության համալսարանում իրականացրել է «Հանրային հեռահաղորդակցության ենթակառուցվածքի կիրառումը ճգնաժամերից առաջ, ընթացքում և հետո ռազմական ոլորտում» հետազոտություն՝ ստանալով գիտությունների թեկնածուի աստիճան: 2015թ.-ին եղել է Եվրոպական պաշտպանության և անվտանգության քոլեջի «Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության» բաժնի մասնագետ: 1996-2005թթ եղել է «Քերոլ 1» Ազգային պաշտպանության համալսարանի պրոֆեսոր, իսկ 2012-2016թթ. նույն համալսարանի գիտական հետազոտությունների և ինովացիոն գիտությունների պրոռեկտոր: 2015-2017թթ եղել է Ազգային պաշտպանության քոլեջի պրոֆեսոր, իսկ 2020-2021թթ.՝ դոկտորական դպրոցի ղեկավար: 2021թ-ից մինչ օրս դոկտորական գիտությունների խորհրդի ղեկավար է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

25.06.2024–28.06.2024թ.

	25.06.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	09:30	11:30	120 րոպե
2.	Հանդիպում Կրթահամալիրի պետի հետ	12:30	13:30	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
4.	Հանդիպում Կրթահամալիրի պետի առաջին տեղակալի հետ	14:50	15:40	50 րոպե
5.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	15:50	16:40	50 րոպե
6.	Հանդիպում Կրթահամալիրի խորհրդի հետ	16:50	17:40	50 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	17:50	18:40	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:50	19:30	40 րոպե

	26.06.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ֆակուլտետների պետերի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ամբիոնների պետերի հետ (ներառյալ ակադեմիա, քոլեջ, ուսումական կենտրոն)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստացող ուսանողների հետ (10-12 հոգի)	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (Ուսումամեթոդական և զարգացման վարչություն, Ուսումական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժին, Վերապատրաստման կենտրոն, Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժին, Կադրերի և ԱՀՏԱ բաժին, Մագիստրատուրայի բաժանմունք, Ֆինանսական բաժին, գնումների խումբ, Բժշկական մաս)	15:20	16:30	70 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:40	17:30	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	19:00	80 րոպե

	27.06.2024թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Ռեսուրսների դիտարկում		09:30	11:30	120 րոպե
2.	Հանդիպում «Իրավագիտություն» մասնագիտության վճարովի և անվճար, կրթական ծրագրերի պատասխանատուի/ների հետ	Հանդիպում «Ոստիկանական գործ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի/ների հետ	11:45	12:45	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		12:55	13:55	60 րոպե
4.	Հանդիպում «Իրավագիտություն» մասնագիտության վճարովի և անվճար, բակալավրատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի դասախոսների հետ	Հանդիպում «Ոստիկանական գործ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	14:05	15:05	60 րոպե
5.	Հանդիպում մասնագիտության վճարովի և անվճար, բակալավրատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսանողների հետ	Հանդիպում «Ոստիկանական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	15:15	16:15	60 րոպե
6.	Հանդիպում ՈՒԽ-ի հետ		16:25	17:10	45 րոպե
7.	Բաց հանդիպում		17:20	18:00	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		18:10	19:00	50 րոպե

	28.06.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	17:20	210 րոպե
6.	Հանդիպում կրթահամալիրի պետի և ղեկավար անձնակազմի հետ, այցի ամփոփում	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

№	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՈՊ մոնիթորինգային խմբի հաշվետվություն 2023	1
2.	2024թ-ի խորհրդակցական մարմնի պլանը, որը հաստատվել է 2023-թ.ին	2
3.	2023-2024թթ Ստորաբաժանումների տարեկան պլաններ, կատարողական, բարելավման պլաններ	2
4.	Գիտական խորհրդի կողմից 11.07.2018թ. հաստատված՝ ՀՀ ոստիկանության Կրթահամալիրում կրթական գործընթացների բարելավմանն ուղղված հարցումների անցկացման կարգ	2
5.	Կրթահամալիրի բյուջեն և ծախսային ուղղությունները	2
6.	Տարիֆիկացիա վերջին տարվա	2
7.	Ցիտման նորմերի պահպանման և գրագողությանը հակազդման մասին կանոնակարգ	3
8.	Դիպլոմի նմուշներ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի անվճար և վճարովի համակարգում սովորող ուսանողների	3
9.	Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի օրինակներ՝ ըստ բարձր, միջին և ցածր գնահատականների	3
10.	Նախնական մասնագիտական կրթական ծրագրի ամփոփիչ ավարտական հարցաշարեր	3
11.	Դասի պլաններ	3
12.	ՄԿԾ վերջնարդյունքներ, Առարկայական ծրագրեր	3
13.	Ավարտական աշխատանքների և թեզերի թեմաներ	3
14.	ՄԿԾ մոնիթորինգների վերլուծություններ	3
15.	ՄԿԾ-ների բենչմարքինգի արդյունքներ	3
16.	ՄԿԾ-ների շրջանակում ուսանողներին տրամադրվող առաջադրանքներ	3
17.	Ուսանողների դուրս մնալու վիճակագրության վերլուծություն	4
18.	2023-24 ուստարվա դրությամբ ուսանողների քանակը՝ ըստ կրթական մակարդակների	4
19.	Անվճար համակարգում սովորող ուսանողների ընդունելության կարգ	4
20.	ՈՒԽ կազմ, ՈՒԽ արձանագրություններ (նաև ընդլայնված նիստերից)	4
21.	Խորհրդատվությունների հրամանների	4
22.	Վարչական անձնակազմին դիմելու ժամանակացույց	4
23.	ՀՀ ոստիկանության կրթահամալիրում սովորողների կողմից կրթահամալիրի ղեկավարությանը և վարչակազմին դիմելու ուղեցույց	4
24.	Ուսանողների բավարարվածությունը իրենց տրամադրվող խորհրդատվությունների վերաբերյալ /վերլուծություններ /	4
25.	Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին տարվա կտրվածքով /փաստաթուղթը չունի հիմնավորվածություն/	4
26.	Ուսանողների հետ կնքվող պայմանագրեր	4

27.	Ուսանողների կողմից կատարված հետազոտական աշխատանքներ	4
28.	ՈՒԽ կազմ, ՈւԽ պլաններ և հաշվետվություններ վերջին երեք տարիների	4
29.	ՊԴ կազմը և նրանց կողմից դասավանդվող առարկաները /մոդուլները	5
30.	Դասախոսների գործառութային շրջանակ	5
31.	2023թ. հարցումների արդյունքները / դասախոսն ուսանողի աչքերով	5
32.	ՊԴ կազմի վարկանիշավորման սանդղակ	5
33.	Դասալսման արձանագրությունների օրինակներ, արդյունքների վերլուծություններ, տարեկան կամ կիսամյակային վերջին 3 տարիների համար	5
34.	Դասալսման արդյունքում արված եզրակացությունների արդյունքներ	5
35.	Դասախոսների վերապատրաստումների տվյալներ /տեղական և միջազգային/ ըստ ամբիոնների վերջին 3 տարի	5
36.	Դասախոսների ֆինանսական խրախուսման ձևերը	5
37.	Մենթորի հաշվետվության օրինակ, պլան ժամանակացույցի օրինակ	5
38.	Արտաքին գնահատում անցած դասախոսների ցանկ	5
39.	Տվյալներ հավելավճարների տրամադրման մասին	5
40.	ՊԴ կազմի միջին տարիքը, կրթահամալիրում աշխատելու միջին ստաժը, կադրերի հոսունությունը / քանակական տվյալներ/	5
41.	Ցանկ, թե ովքեր են դասավանդում ակադեմիայում, ովքեր ուսումական կենտրոնում և ովքեր քոլեջում	5
42.	մենթորությանը առնչվող փաստաթղթեր / պլաններ, հաշվետվություններ/	5
43.	ՄՈՒՀ-ի դասախոսների կողմից տպագրությունների ցանկը ըստ ամբիոնների	6
44.	Վերլուծություն ԳՀ ոլորտի ուղենիշները և զարգացման տեսլական /2019-2023թթ/ փաստաթղթի իրականացման վերլուծության	6
45.	Մեթոդական խորհրդի կանոնակարգ	6
46.	Վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կազմակերպված 5 միջազգային գիտագործնական և մեկ ուսանողական համաժողովների մասնակիցների ցանկ, տպագրության երախավորված աշխատանքների ցանկ	6
47.	Պայմանագրեր և հուշագրեր միջազգային կառույցների հետ և ցանկ, թե վերջիններիս հետ համատեղ ինչ հետազոտական աշխատանքներ են իրականցվել	6
48.	Գնումների տարեկան պլան /վերջին 3 տարիների/	7
49.	Գրադարանային ռեսուրսներից բավարարվածության վերլուծություններ	7
50.	Վիճակագրություն թե կլինիկան յուրաքանչյուր տարի քանի քաղաքացու են խորհրդատվություն տրամադրում և ինչ թեմաներով	8
51.	Միջազգային փորձի փոխանակման այցերի հիմնական թեմատիկան, ժամկետները	9
52.	Օտար լեզվի վերապատրաստում անցած ուսանողների, ՈւՕ կազմ	9

53.	Ցանկ, թե CEPOL գործակալության կողմից ինչ վերապատրաստումներ են անցել՝ վայր, թեմա, ժամանակ	9
54.	Ցանկ, տեղական կրթական հաստատությունների հետ ենք կնքվել համագործակցության հուշագրեր	9
55.	ՈԱ Ձեռնարկի նախագիծը	10
56.	2022թ. կատարվել է Կրթահամալիրի գործառույթների վերլուծություն հրավիրյալ փորձագետների կողմից	10
57.	ՈԱ բաժնի աշխատանքային պլանները և հաշվետվությունները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Դահլիճներ
2. Լսարաններ, մասնագիտական լսարաններ
3. Համակարգչային սենյակներ
4. Սիմուլյացիոն սենյակներ
5. Հրաձգարան
6. Ֆակուլտետներ
7. Գրադարան
8. Բուժական մաս
9. ՀՀ ոստիկանության պատմության թանգարան
10. Հանրակացարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԱՄՆ՝** Ամերիկայի միացյալ նահանգներ
2. **ԱՊՀ՝** Անկախ պետությունների համագործակցություն
3. **ԳԱՑ՝** Գնահատման առանցքային ցուցանիշներ
4. **ԵԲԿՏ՝** Եվրոպական բարձրագույն կրթության տարածք
5. **ՄԿԾ՝** Մասնագիտական կրթական ծրագիր
6. **ՄՈՒՀ՝** Մասնագիտական ուսումնական հաստատություն
7. **ՆԳՆ՝** Ներքին գործերի նախարարություն
8. **ՊԴ՝** Պրոֆեսորադասախոսական կազմ
9. **ՊԿՉ՝** Պետական կրթական չափորոշիչ
10. **ՊԻԳԲ՝** Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
11. **ՌԴ՝** Ռուսաստանի դաշնություն

12. **ՌՊ՝** Ռազմավարական պլան
13. **ՏՏ՝** Տեղեկատվական տեխնոլոգիաներ
14. **ՈՒԽ՝** Ուսանողական խորհուրդ
15. **ՈԱ՝** Որակի ապահովում
16. **ՈԱԱԿ՝** Որակի ապահովման ազգային կենտրոն
17. **ՈԱՇ՝** Որակավորումների արժանահավատ շնորհում
18. **ՈՈՇ՝** Որակավորումների ոլորտային շնորհում
19. **CEPOL՝** Իրավապահ մարմինների վերապատրաստման եվրոպական գործակալություն
20. **ICITAP՝** Միջազգային քրեական հետախուզության վերապատրաստման աջակցության ծրագիր